

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵԲԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՁԵՌՆԱՐԿ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳԻՐ**

**Ձեռնարկ հանրակրթական ուսումնական հաստատության
հոգեբանների համար**

Երևան 2025

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնային պարտականությունների և գործառույթների շրջանակներում իրականացվող աշխատանքների նկարագիր: Ձեռնարկ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանների համար / Ավագյան Ա. Մ., Մանուկյան Ա. Տ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025. – 128 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է գործաճության ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի մարտի 12-ի 667-Ա/2 հրամանով՝ որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լիլիթ Արմենի Մնացականյան

Հեղինակներ՝

Անի Մովսեսի Ավագյան
Ալինա Տիգրանի Մանուկյան

Աշխատանքային խումբ՝

Հայկուհի Արտաշեսի Ադամյան
Անի Սամվելի Խուրդյան
Անի Արմենի Գարեգինյան
Ռուզաննա Մովսեսի Մուրադյան

Խմբագիր՝ Հայկանուշ Անատոլի Սարգսյան

Համակարգչային ձևավորում՝ Լուսինե Գագիկի Սարոյան

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու համար անհրաժեշտ է ձեռք բերել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) գրավոր թույլտվություն՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեով. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Քաջազնունի 12, Երևան 0070, էլ. հասցե՝ hmkentron.yerevan@gmail.com

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Շնորհակալություն ենք հայտնում ՅՈՒՆԻՍԵՖ-ին և Հոգեկան առողջության հայկական ասոցիացիային այս փաստաթղթի մշակման և կազմման գործում ունեցած նշանակալի ներդրման համար:



«Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնային պարտականությունների և գործառույթների շրջանակներում իրականացվող աշխատանքների նկարագիր»
Ձեռնարկ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանների համար
Էլեկտրոնային տարբերակ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	5
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	7
Հոգեբանի աշխատանքներն ըստ գործունեության նպատակի.....	9
Հոգեախորրոշիչ աշխատանքներ, գնահատում	9
Կանխարգելիչ աշխատանքներ	16
Ջարգացնող աշխատանքներ	19
Շփոթող աշխատանքներ	20
Խորհրդավորական աշխատանքներ.....	22
Ուսուցանող, լուսավորչական, իրազեկող աշխատանքներ.....	23
Փորձագիտական աշխատանքներ	24
Սոցիալ-վերահսկողական աշխատանքներ	24
Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ըստ շահառուների.....	26
Աշխատանք սովորողների հետ	26
Աշխատանք ծնողների հետ	29
Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ	31
Աշխատանք վարչակազմի հետ	33
Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ըստ հոգեբանի դերի.....	34
Հոգեբան - խորհրդավոր	34
Հոգեբան - մեթոդիստ	35
Հոգեբան - պարասխանավոր (կուրսավոր).....	35
Հոգեբան - ուղղորդող (դիսպետեր)	36
Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ըստ պլանավորման	37
Պլանավորվող աշխատանքներ	37

<i>Չպլանավորվող աշխատանքներ.....</i>	<i>40</i>
Հանրակրթական ուսումնական հաստատությունում իրականացվող հոգեբանական աշխատանքի հիմնական ձևերը	41
<i>Անհատական աշխատանքներ</i>	<i>41</i>
<i>Խմբային աշխատանքներ</i>	<i>44</i>
Գործնական հոգեբանի գործունեության բարոյագիտական – էթիկական սկզբունքները.....	47
Գործնական հոգեբանի գործունեության էթիկական նորմերը	52
Գործնական հոգեբանի անձնային որակները	57
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	60
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԵՆՅԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	61
ՁԵՎԱԹՂԹԵՐ.....	78
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	95
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	125

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության ոլորտում հոգեբանական ծառայության նպատակն ու խնդիրները բխում են այն 4 հիմնական ուղղություններից, որոնք ընկած են հոգեբանի աշխատանքի հիմքում՝ գիտական, կիրառական, գործնական և կազմակերպչական:

Գիտական ասպեկտը ենթադրում է գիտական հետազոտությունների կազմակերպում, տարիքային խնդիրների, առանձնահատկությունների ուսումնասիրություն տեսական և գործնական մակարդակում և այլն: Այստեղ հիմնական խնդիրը հոգեախտորոշիչ, կանխարգելիչ, զարգացնող, շտկող, խորհրդատվական, լուսավորչական, իրազեկող ծրագրերի, միջոցների գիտական հիմնավորումն է:

Կիրառական ասպեկտը ենթադրում է հոգեբանական գիտելիքների կիրառում մանկավարժական աշխատողների՝ ուսուցիչի, մեթոդիստի և այլոց հետ աշխատանքում: Այս մասնագետների գիտելիքներն օգտակար են դիդակտիկ, մեթոդական նյութեր կազմելու ընթացքում և այլն: Կիրառական ասպեկտը ենթադրում է նաև աշխատանք ծնողների հետ, ինչպես նաև հոգեբանի խոհրդատվական, ախտորոշիչ, կանխարգելիչ, շտկող, զարգացնող գործունեության ձևերի ակտիվ կիրառում:

Գործնական ասպեկտը ենթադրում է հոգեբանի խոհրդատվական, ախտորոշիչ, կանխարգելիչ, հոգեշտկող, զարգացնող գործունեության ձևերի ակտիվ կիրառում:

Կազմակերպչական ասպեկտը ներառում է մանկավարժական աշխատողների գործունեության մեջ հոգեբանական բաղադրիչի վերահսկողություն, պրակտիկ հոգեբանների որակավորման բարձրացում և այլն:

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանն իր աշխատանքներում պետք է առաջնորդվի մի շարք սկզբունքներով: Դրանք են.

1. անձին չվնասելու սկզբունք,
2. իրավասու լինելու սկզբունք,
3. փոխադարձ հարգանքի սկզբունք,
4. անաչառության սկզբունք,
5. գաղտնիության սկզբունք,

6. հոգեբանական մեթոդների համապատասխանության սկզբունք,

7. մասնագիտական անկախության սկզբունք¹:

¹ Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, 2004. — 592 с:

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵՔԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**


ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի հրամանով սահմանվեց հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման նոր կարգը, ըստ որի 2023 թվականի սեպտեմբերի 1-ից իրականացվելու էին մի շարք համակարգային փոփոխություններ, այդ թվում հանրակրթական ուսումնական հաստատություններում հոգեբանի պարտադիր հաստիքի ներդրումը: Դպրոցում հոգեբանի հաստիքի կարևորությունն ու արժեքը պայմանավորված է նրանով, որ հոգեբանն ապահովում է երեխաների հոգեբանական առողջությունը, խթանում նրանց ինքնազարգացման հմտությունները, աջակցում ուսուցիչներին ուսումնական գործընթացում և օգնում ծնողներին հաղթահարել դաստիարակության հետ կապված մարտահրավերները՝ նպաստելով համայնքի ընդհանուր բարեկեցությանը:

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնի նկարագիրը հստակ սահմանված է ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման 5-րդ գլխում: Հիմք ընդունելով այդ նկարագրում ներկայացված գործառույթները՝ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանների համար մշակվել է աշխատանքային տարեկան ծրագիր (Ձև 1), որի հիման վրա հաստատության հոգեբանի կողմից մշակվում է տարեկան աշխատանքային պլան (Ձև 2): Հոգեբանի աշխատանքային տարեկան ծրագրում ներկայացված են հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունները, ինչը թույլ կտա նրանց կազմել առավել համակարգված տարեկան աշխատանքային պլան: Այնուամենայնիվ, եթե անհրաժեշտություն է առաջացել պլանավորելու որևէ աշխատանք, որը ներառված չէ տարեկան ծրագրում, ապա հոգեբանը կարող է դրանք պլանավորել՝ արտացոլելով տարեկան աշխատանքային պլանում՝ «Այլ աշխատանքներ» բաժնում: Եթե հանրակրթական ուսումնական հաստատությունն ունի մեկ հոգեբան, ապա նա՝ ելնելով հաստատության կարիքներից, մշակում է իր տարեկան աշխատանքային պլանը: Եթե հանրակրթական ուսումնական

հաստատությունն ունի մեկից ավելի հոգեբան, ապա նրանցից յուրաքանչյուրը կազմում է իր տարեկան աշխատանքային պլանը, և յուրաքանչյուր հոգեբան իրականացնում է իր կազմած պլանով նախատեսված աշխատանքները: Այս դեպքում կարևոր է, որ մասնագետները նախապես քննարկեն իրականացվելիք աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կատարեն աշխատանքի բաժանում, ինչն էլ կարտացոլվի նրանցից յուրաքանչյուրի կողմից կազմած տարեկան աշխատանքային պլանում: Հոգեբանի տարեկան աշխատանքային պլանը մշակվում է հաշվի առնելով՝

- հանրակրթական ուսումնական հաստատության տեսակը,
- տնօրենության և համայնքի առաջ դրված ռազմավարական նպատակները,
- սեփական մասնագիտական դիտարկումները և կատարած փստորոշիչ աշխատանքների արդյունքները:

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանն ուսումնական տարվա ընթացքում կատարում է մի շարք աշխատանքներ, որոնք կարող են դասակարգվել ըստ գործունեության *նպատակի, շահառուների, հոգեբանի դերի, աշխատանքների պլանավորման և աշխատանքների կազմակերպման ձևի*:



Հոգեբանի աշխատանքներն ըստ գործունեության նպատակի

Հոգեախտորոշիչ աշխատանքներ, գնահատում

Հոգեախտորոշիչ աշխատանքներն իրականացվում են հատուկ մեթոդների օգնությամբ, որոնք ուղղված են կոնկրետ սովորողի կամ խմբի հետազոտմանը և հանդիսանում են անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջոց: Հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի հոգեբանական հետազոտման քարտը ներկայացված է Ձև 3-ում, իսկ դրան կից առաջարկվող գործիքակազմն ու գրականության ցանկը՝ Հավելված 1-ում: Հավելված 1-ում ներկայացված են նաև ծնողների և մանկավարժական աշխատողների հետ աշխատանքում կիրառության համար առաջարկվող որոշ մեթոդիկաներ:

Սովորողների հետ իրականացվող հոգեախտորոշիչ աշխատանքները ենթադրում են նրա անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում հետևյալ նպատակներով.

- ուսումնական գործընթացում կամ զարգացման ընթացքում ծագած խնդիրների պատճառների բացահայտում,
- անձի ուժեղ կողմերի, ներուժի բացահայտում, որը հնարավոր կլինի օգտագործել սովորողի խնդրի հաղթահարման գործընթացում,
- սովորողի ճանաչողական հետաքրքրությունների բացահայտում՝ ճանաչողական գործունեության անհատական ոճի բացահայտման նպատակով:

Հոգեախտորոշիչ աշխատանքները կարող են իրականացվել ինչպես ընթացիկ աշխատանքների շրջանակներում, այնպես էլ սովորողների, մանկավարժական աշխատողների, ծնողների և դպրոցի վարչակազմի խնդրանքով կամ պահանջով: Եթե հոգեախտորոշիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը ծագել է ընթացիկ աշխատանքների շրջանակներում, սովորողների, մանկավարժական աշխատողների և/կամ դպրոցի վարչակազմի խնդրանքով, ապա հոգեբանը իրավասու է իրականացնել սովորողի նախնական դիտարկում, զրույցներ ունենալ սովորողի, նրան մոտ կանգնած մանկավարժական աշխատողների, ինչպես նաև խնդրին տեղյակ վարչական աշխատողների հետ, ինչպես նաև իրականացնել այլ գործառույթներ՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնի նկարագրի: Նպատակահարմար է, որ այս հանգամանքը առանձին կետով ներկայացված լինի հանրակրթական ուսումնական հաստատության և սովորողի ծնողի միջև կնքվող պայմանագրում:

Մանկավարժների կողմից ներկայացվող հայցերի դեպքում, ըստ անհրաժեշտության, կարելի է օգտագործել «Սոցիալական հայտ հոգեբանին 1» հայցի ձևակերպման տարբերակը, որը ներկայացված է Հավելված 9.1-ում:

Եթե հոգեբանը գտնում է, որ ներկայացվող հայցն իսկապես հիմնավոր է և սովորողի հոգեբանական առավել խորքային հետազոտման անհրաժեշտություն կա, ապա նա սովորողին նախ տեղյակ

է պահում, որ իրականացվող աշխատանքների մասին պետք է իրազեկի նրա ծնողներին, այնուհետև, հրավիրում է սովորողի ծնողներին, տեղեկացնում առկա խնդրի և դրա հետ կապված հոգեբանական անհրաժեշտ հետազոտության ու հետագա աշխատանքների իրականացման մասին և համաձայնեցնում այդ աշխատանքների իրականացման մանրամասնությունները:

Եթե հոգեախտորոշիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը ներկայացվում է ծնողի կողմից, ապա ծնողը, բացի հոգեբանի հետ բանավոր զրույցից, իրեն անհանգստացնող խնդրի մանրամասները և հայցի ձևակերպումը հոգեբանին ներկայացնում է գրավոր՝ ազատ շարադրանքի տեսքով: Այստեղ, ըստ նախընտրության, կարող է օգտագործվել նաև «Սոցիալական հայտ հոգեբանին 2» հայցի ձևակերպման տարբերակը, որը ներկայացված է Հավելված 9.2-ում:

Հոգեախտորոշիչ աշխատանքների շրջանակում իրականացվող հետազոտությունը կազմված է հետևյալ փուլերից.

1. Սովորողի դիտարկում. մեր կողմից առաջարկվել է «Սովորողի դիտարկման քարտ», որը ներկայացված է Հավելված 2-ում: Սովորողի դիտարկման քարտը ներառում է հետևյալ տասը բաժինները.

- դասի ընթացքում իմացական հետաքրքրության դրսևորման դիտարկում,
- ինքնուրույն մտավոր գործունեության դիտարկում,
- մտավոր գործունեության դիտարկում,
- ուշադրության դիտարկում,
- հիշողության դիտարկում,
- սովորողի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դիտարկում,
- հուզական առանձնահատկությունների դիտարկում,
- խառնվածքի դիտարկում,
- հանդուրժողականության և համառության դիտարկում,
- խմբում սովորողի վարքի դիտարկում:

Ինչպես տեսնում ենք ներկայացված դիտարկման քարտը բավականին ծավալուն է, ընդգրկում է գրեթե բոլոր ոլորտները և կարող է հոգեբանի համար ուղենիշ լինել՝ հասկանալու, թե այս կամ այն ոլորտի

դիտարկման ժամանակ հատկապես ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել: Նշենք նաև, որ կախված առկա խնդիրների և հայցի առանձնահատկությունից՝ Սովորողի դիտարկման քարտը հոգեբանի կողմից կարող է կիրառվել ինչպես ամբողջական տարբերակով, այնպես էլ առանձին բաժիններով: Եթե Սովորողի դիտարկման քարտը հոգեբանի կողմից մասնակի է կիրառվել, ապա սովորողի վերաբերյալ հոգեբանական հետազոտման փաստաթղթերում պետք է առկա լինի միայն դիտարկման քարտի համապատասխան բաղադրիչը և դրա վերաբերյալ հոգեբանի նկարագրական ամփոփումը, իսկ ամբողջական կիրառման դեպքում հոգեբանի կողմից դիտարկման քարտն ամբողջությամբ է լրացվում:

2. Ծնողների հետ առաջնային զրույցի, երեխայի հետ աշխատող մանկավարժների և այլ մասնագետների հետ զրույցների արդյունքում ձեռք բերված տեղեկույթի վերլուծություն:
3. Անամնեզի հավաքագրում, որը ներառում է տվյալներ՝
 - երեխայի ծննդյան տարեթվի, ամսաթվի, ընտանիքի կազմի, սոցիալ-հուզական մթնոլորտի, ընտանիքի անդամների մոտ հոգեկան առողջության հետ կապված խնդիրների կամ ռիսկի գործոնների առկայության վերաբերյալ,
 - երեխայի ներարգանդային զարգացման, հղիության ընթացքում երեխայի ընդհանուր վիճակի, հղիության ընթացքի, ռիսկային գործոնների վերաբերյալ (ինֆեկցիաներ, դեղորայք, բժշկական միջամտություն և այլն),
 - նորածնության, վաղ մանկության և նախադպրոցական տարիների զարգացման ընթացքի մասին:

Սովորողի ծնողների հետ առաջնային զրույցի վարման և անամնեստիկ տվյալների հավաքագրման ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբաններին առաջարկում ենք որպես ուղենիշ օգտվել մեր երկարամյա աշխատանքի ընթացքում ծնողների հետ իրականացված զրույցների արդյունքում հավաքագրված հարցերի լայն շրջանակից, որը ներկայացված է Հավելված 3-ում: Ներկայացվող հարցարանը բավականին ընդգրկուն է, և հատկապես սկսնակ հոգեբանին հնարավորություն կտա հարցերի շրջանակի ընտրություն կատարել՝ ելնելով քննարկվող խնդրի առանձնահատկություններից:

Այնուամենայնիվ, ներկայացվող հարցարանը չի սահմանափակում հոգեբանին ծնողի հետ քննարկել սովորողի խնդրից բխող այլ հարցեր, որոնք նա անհրաժեշտ և էթիկական տեսանկյունից հիմնավորված է համարում: Հարկ ենք համարում նշել նաև, որ քննարկվող հարցերը պարտադիր պետք է խնդրի տեսանկյունից կարևոր լինեն, այլ ոչ թե բխեն հոգեբանի զուտ մարդկային հետաքրքրասիրությունից:

4. Նախնական հանդիպում-գրույց սովորողի հետ՝ կոնտակտի հաստատման և հոգեախտորոշիչ աշխատանքներին նախապատրաստելու նպատակով:
5. Բուն հետազոտական ընթացք, որը ենթադրում է համապատասխան թեստերի, նկարների, առաջադրանքների և գործունեության այլ արդյունքների վերլուծություն՝ հոգեբանական հետազոտման քարտը լրացնելու և եզրակացությունը ձևավորելու նպատակով: Բուն հետազոտական ընթացքն իրականացվում է Ձև 3-ում ներկայացված Սովորողի հոգեբանական հետազոտման քարտի միջոցով, որը ներառում է հետևյալ չորս բաժինները՝ ինչպե՞ս է սովորողը հաղորդակցվում, սովորողի իմացական գործընթացների և սովորելու պատրաստականության հոգեբանական գնահատում, սովորողի վարքային, անձնային և հուզականային ոլորտների ամփոփ նկարագիր, սովորողի մասնակցությունը ընտանեկան, համայնքային և դպրոցական կյանքին: 5-րդ կետում կատարվում են այն նշումները, որոնք վերոնշյալ բաղադրիչներում ընդգրկված չեն, սակայն հոգեբանը դրանք կարևորում է: Նշենք նաև, որ կախված առկա խնդիրների և հայցի առանձնահատկությունից՝ Սովորողի հոգեբանական հետազոտման քարտը հոգեբանի կողմից կարող է կիրառվել ինչպես ամբողջական տարբերակով, այնպես էլ առանձին բաժիններով: Եթե հոգեբանի կողմից քարտը կիրառվել է մասնակի, ապա սովորողի վերաբերյալ հոգեբանական հետազոտման փաստաթղթերում պետք է առկա լինեն միայն հետազոտման քարտի համապատասխան բաժինը և հոգեբանի եզրակացությունը:
6. Ամփոփիչ գրույց ծնողների, սովորողի հետ. հետազոտության ավարտին քննարկվում են նաև ծնողներին, սովորողին հուզող

հարցերը, տրվում են անհրաժեշտ պարզաբանումներ և ցուցումներ:

7. Հետազոտության արդյունքների հիման վրա ավարտուն և ամբողջական եզրակացության կազմում. իրականացված հետազոտության արդյունքներն ամփոփվում են հոգեբանական եզրակացությամբ, որն արտացոլում է հետազոտվողի ճանաչողական գործընթացների զարգացածության մակարդակը, հոգեկան վիճակների դրսևորվածությունը, անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև առկա խնդրի կամ խնդիրների առաջացման հնարավոր պատճառները: Հոգեբանի եզրակացության մեջ ներառվում են նաև հոգեբանի ցուցումներն ու առաջարկություններն առ այն, թե հատկապես ի՞նչը կարող է նպաստել սովորողի հոգեվիճակի բարելավմանը:
8. Ծնողի կամ ծնողների կողմից եզրակացության գրավոր բովանդակությանը ծանոթացում, որի համար ծնողը ստորագրում է Սովորողի հոգեբանական հետազոտման քարտի համապատասխան տողում:

Նշենք նաև Ի. Դուբրովինայի կողմից առանձնացվող հոգեախտորոշման հիմնական փուլերը.

- հայցի ուսումնասիրություն,
- հոգեբանական խնդրի ձևակերպում,
- դրսևորվող երևույթների պատճառների վերաբերյալ վարկածների առաջադրում,
- հետազոտության մեթոդների ընտրություն,
- հետազոտության մեթոդների կիրառում,
- հոգեբանական ախտորոշման ձևակերպում,
- համապատասխան խորհուրդների ձևակերպում:²

Հոգեախտորոշիչ հետազոտությանը ներկայացվող պահանջները.

- Հետազոտությունը կազմակերպել և իրականացնել հանգիստ, անկաշկանդ մթնոլորտում, հնարավորինս բացառել շեղող գործոնները:

²Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, 2004. — 592 с:

- Հետազոտման նպատակով ներկայացվող առաջադրանքների կատարման ընթացքում գերծ մնալ սովորողին գովելուց կամ քննադատելուց, սակայն օգտագործել հավանություն արտահայտող ժեստեր և դիմախաղ՝ համագործակցելու և առաջադրանքը կատարելու՝ սովորողի ջանքերը խրախուսելու համար:
- Ուշադրություն դարձնել սովորողի հուզական և ֆիզիկական վիճակին: Հետազոտական գործընթացում սովորողը կարող է սթրես կամ հուզական լարվածություն ապրել, և այդ արձագանքները կարող են ի հայտ գալ հանկարծակի ու տարբեր հաճախականությամբ: Նման դեպքերում անհրաժեշտ է փոխել գործունեության տեսակը, սովորողին լիցքաթափվելու, հանգստանալու հնարավորություն տալ՝ հետո անպայման վերադառնալով առաջադրանքին:
- Հետազոտությունն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ հանդիպման սկզբում սովորողին առաջարկվող խաղերն ու առաջադրանքները թուլացնեն նրա լարվածությունն ու հետաքրքրությունն առաջացնեն: Կարևոր է, որ այդ առաջադրանքներն ու խաղերը լինեն պարզ, վառ գունավորմամբ, սովորողի տարիքին և/կամ հնարավորություններին համարժեք: Անկաշկանդ ու հուզական լարվածությունից զերծ իրավիճակում առաջադրանքներն աստիճանաբար կարելի է բարդացնել: Ճանաչողական ոլորտի հետազոտմանն ուղղված առաջադրանքներն անհրաժեշտ է ներկայացնել սովորողին միայն այն ժամանակ, երբ հուզական լարվածությունը հաղթահարված է:
- Հետազոտությունը ցանկալի է կազմակերպել և իրականացնել առանց սովորողի ծնողների կամ օրինական ներկայացուցիչների, ուսուցիչների կամ այլ մասնագետների ներկայության: Բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն պատճառով հնարավոր չէ ապահովել դա, հոգեբանը նախապես զգուշացնում է ներկաներին, որ վերջիններս բացարձակ լուռ պետք է լինեն և ոչ մի դեպքում չմիջամտեն հետազոտության ընթացքին:
- Հետազոտության նպատակով կազմակերպվող մեկ հանդիպման տևողությունը կախված է հետազոտվողի տարիքից: Կրտսեր

դպրոցական և դեռահասության տարիքի երեխաների պարագայում նպատակահարմար է իրականացնել 45 րոպե տևողությամբ հանդիպումներ:

- Հետազոտության արդյունքում ձևավորված եզրակացությունը ծնողներին ներկայացվում է նրանց հասանելի լեզվով՝ խուսափելով մասնագիտական եզրույթներից կամ երկիմաստ արտահայտություններից:

Կանխարգելիչ աշխատանքներ

Կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են հոգեբանական տարբեր խնդիրների կանխարգելման նպատակով: Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի կողմից իրականացվող կանխարգելիչ աշխատանքների շրջանակներում կարևոր է այնպիսի ծրագրերի մշակումն ու իրականացումը, որոնք միտված են տարիքային տարբեր փուլերում գտնվող սովորողների համար արդիական խնդիրների լուծմանը:

Առանձնացվում է հոգեբանական կանխարգելիչ աշխատանքների 3 մակարդակ:

1. Առաջին մակարդակը ներառում է հոգեբանի աշխատանքն այն սովորողների հետ, ովքեր չունեն հոգեկան զարգացման խնդիրներ, բայց բախվում են որոշ հոգեբանական դժվարությունների (դպրոցական հարմարման, շփման, հաղորդակցման, սթրեսի հաղթահարման, բռնության, բուլինգի հետ կապված և այլ դժվարություններ): Առաջնային մակարդակը ենթադրում է տվյալ հաստատության բոլոր սովորողների դիտարկում՝ անկախ նրանց մոտ այս կամ այն խնդրի առկայությունից: Բնականաբար, կանխարգելիչ աշխատանքների այս մակարդակը պահանջում է ժամանակային և մասնագիտական ռեսուրսներ: Եթե դպրոցում մեկից ավելի հոգեբան կա, ապա այս աշխատանքները ենթադրում են ոչ թե մեկ, այլ մի քանի հոգեբանների համագործակցված աշխատանք:
2. Երկրորդ մակարդակը ենթադրում է «ռիսկի խմբի» սովորողների հետ իրականացվող կանխարգելիչ

աշխատանքներ: Այս դեպքում հոգեբանն իրականացնում է հնարավոր տարաբնույթ խնդիրների վաղ հայտնաբերում՝ հետազա բարդությունների և դժվարությունների կանխարգելման նպատակով:

3. Երրորդ մակարդակը ենթադրում է հոգեկան զարգացման տարբեր ոլորտներում այս կամ այն խանգարումն ունեցող սովորողների հետ իրականացվող աշխատանքներ՝ հետազա բարդությունները կանխելու նպատակով: Հոգեբանը սովորողներին այս աշխատանքների մեջ կարող է ընդգրկել ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ մանկավարժների և/կամ ծնողների խնդրանքով:³

Կանխարգելիչ և իրազեկման աշխատանքներն իրականացվում են նաև հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների և երեխաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ, դասընթացների, խմբային քննարկումների, կլոր սեղանների, գիտաժողովների միջոցով: Աշխատանքների շրջանակներում մանկավարժական աշխատողները և ծնողները տեղեկատվություն են ստանում կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ արդյունավետ համագործակցելու եղանակների, երեխաների հոգեկան զարգացման, տարիքային տարբեր փուլերի առանձնահատկությունների և այլ հարցերի մասին: Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը մանկավարժական աշխատողների հետ կանխարգելիչ, լուսավորչական աշխատանքներ է իրականացնում նաև մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնների վերաբերյալ, որը իրականացվում է Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N10-Ն հրամանում արտացոլված վարքականոններին համապատասխան:

³ Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2023- 147 էջ:

Կանխարգելիչ աշխատանքների հիմնական խնդիրները, ըստ Ի. Դուբրովինայի, կարելի է ներկայացնել հետևյալ 3 մակարդակներով.

Առաջին մակարդակում հոգեբանն իրականացնում է այսպես կոչված, առաջնային կանխարգելում, երբ, օրինակ, աշխատում է այնպիսի երեխաների հետ, որոնք ունեն հուզական, վարքային, մտավոր աննշան խնդիրներ: Այս փուլում սովորաբար իրականացվում են աշխատանքներ ոչ թե տվյալ երեխաների հետ անհատական մակարդակում, այլ ընդհանուր, օրինակ, ամբողջ դասարանում, սակայն աշխատանքի ընթացքում կարող են հատուկ ներազդող տեխնիկաներ կիրառվել՝ կոնկրետ տվյալ երեխաների վրա որոշակի դրական ազդեցություն ունենալու նպատակով:

Երկրորդ մակարդակում իրականացվում է երկրորդային կանխարգելում: Այս դեպքում աշխատանքներն ուղղված են ռիսկային խմբում գտնվող երեխաներին, որոնց դեպքում արդեն խնդիրները նկատելի են: Այստեղ հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ուղղված են հաղթահարելու երեխաների խնդիրները, հնարավորինս շուտ կարգավորելու դրանք, քանի դեռ դրանց կառավարումն անվերահսկելի չի դարձել: Այս դեպքում առավել հաճախ աշխատանքն իրականացվում է անհատական կամ փոքր խմբերով: Այս մակարդակում ենթադրում են նաև ակտիվ աշխատանքներ ուսուցիչների և ծնողների հետ:

Երրորդ մակարդակում աշխատանքներ են իրականացվում վառ արտահայտված վարքային, հուզական, ուսումնական խնդիրներ ունեցող երեխաների հետ:⁴

Ռ. Վ. Օվչարովան մեկ այլ բովանդակությամբ է ներկայացնում կանխարգելիչ աշխատանքները.

Ադապտացիոն գործընթացների ապահովում, հարմարում մանկապարտեզին, դպրոցին, խորհրդատվական աշխատանքներ ծնողների, մասնագետների հետ՝ հարմարման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

- Հետազոտություն և անհրաժեշտության դեպքում միջամտության վերաբերյալ խորհրդատվություն երեխայի մի տարիքային փուլից մյուսին անցման դեպքում, օրինակ՝ նախադպրոցական տարիքից կրտսեր դպրոցական փուլին և այլն:

⁴ Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, 2004. — 592 с.

- Երեխայի՝ դպրոցին պատրաստվածության մակարդակի ստուգում, ընդունակությունների մակարդակի վաղ ախտորոշում:
- Ուսուցչի հետ երեխայի անհատական ուսումնական պլանի կազմում:
- Ուսումնական հաստատություններում դրական հոգեբանական մթնոլորտի ստեղծում:
- Հաճախ իրականացվող լուսավորչական, խորհրդատվական աշխատանքներ:⁵

Ձարգացնող աշխատանքներ

Այս աշխատանքներն իրականացվում են սոցիալ-հոգեբանական պայմանների ստեղծման միջոցով՝ հոգեբանորեն բարենպաստ զարգացում ունեցող անձի հոգեբանական լիարժեք զարգացումն ապահովելու նպատակով: Հոգեբանը յուրաքանչյուր սովորողի կամ համապատասխան խմբի համար մշակում է աշխատանքի պլան, որտեղ ներառված են համապատասխան անհատական ցուցումներ՝ ուղղված տվյալ սովորողի կամ խմբի անդամների ինքնակատարելագործման, ինքնազարգացման կարողությունների զարգացմանը:

Ձարգացնող աշխատանքները կարող են ուղղված լինել անձի իմացական, սոցիալ-անձնային և հուզականային ոլորտներին:

Ձարգացնող աշխատանքները կարող են իրականացվել համապատասխան զարգացնող միջավայրի ստեղծման, հոգեբանի հետ ուսուցողական հանդիպումների, սովորողի անձնային աճին միտված թրեյնինգային ծրագրերի իրականացմանը և ինքնաճանաչմանը, ինքնավերլուծությանը միտված հոգեբանական հետազոտման մեթոդների ու մեթոդիկաների կիրառման ու դրանց արդյունքների վերլուծության միջոցով:

«Բոլոր այն դեպքերում, երբ անձը սովորում է անհատական ուսուցման պլանով, հոգեբանի կողմից իրականացվող զարգացնող

⁵ Овчарова Р.В. Практическая психология образования: учеб. пособие. – Москва: Академия, 2003. – 448 с.

աշխատանքի նպատակը, խնդիրները, քայլերն ու ցուցումներն արտացոլվում են այդ փաստաթղթում»:⁶

«Զարգացնող աշխատանքներն արդյունավետ են լինում, երբ մասնագետն այցելուի անձը չի մասնատում տարբեր ոլորտների և ընդհանրական, ամբողջական մոտեցում է ցուցաբերում»:⁷

Զարգացնող աշխատանքների հաջող իրականացման համար կարևոր է, որ մասնակիցն ինքը, այդ աշխատանքների անհրաժեշտությունն ու արդյունավետությունը գիտակցելով, կամավոր ներգրավվի իրականացվող աշխատանքներում: Զարգացնող ծրագիրը կազմելուն նախորդում են համապատասխան ախտորոշիչ աշխատանքներ, որոնց արդյունքները հաշվի են առնում ծրագրի կազմման ընթացքում: Ծրագրերը կազմվում են՝ հաշվի առնելով տվյալ անձի և/կամ խմբի տարիքային հոգեբանական առանձնահատկությունները, պահանջմունքները, տվյալ միջավայրի էթնիկական և մշակութային առանձնահատկությունները:

Շտկող աշխատանքներ

Շտկող աշխատանքներն իրականացվում են հոգեկան զարգացման դժվարություններ ունեցող սովորողների հետ՝ ուսուցման, հոգեբանական զարգացման, հուզական ոլորտի կամ վարքի խնդիրների լուծման նպատակով: Շտկողական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևով: Աշխատանքների խնդիրներն ու նպատակները սահմանվում են՝ ելնելով նրանից, թե որ ոլորտում կամ ոլորտներում են ախտորոշվել սովորողի զարգացման դժվարությունները և դրանց հիմքում ընկած խնդիրները (հուզականային, ճանաչողական, վարքային և այլն):

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը մասնակցում է սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացին, անհատական ուսուցման պլանների (ԱՌԻՊ) մշակման և դրանց իրականացման գործընթացին: Սովորողի

⁶ Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2023- 147 էջ:

⁷ Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, էջ 14:

ԱՌԻՊ-ով սահմանված նպատակները հոգեբանը կարող է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային հանդիպումների միջոցով, որոնք ըստ հոգեբանական աշխատանքների կազմակերպման նպատակի, կարող են լինել ինչպես շտկող, այնպես էլ զարգացնող: Հոգեբանը նաև սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հետ համատեղ ապահովում է ծնողների մասնակցությունը սովորողի ԱՌԻՊ-ով նախատեսված աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացին, ծնողներին տրամադրում է խորհրդատվություն սովորողի խնդրի վերաբերյալ, ուղղորդում այն աշխատանքները, որոնք պետք է իրականացվեն ուսումնական հաստատությունից դուրս: Հոգեբանը, որպես մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ, համագործակցում է խմբի մյուս անդամների, ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների հետ, մասնակցում թիմային հանդիպում-քննարկումներին, որոնց ընթացքում ի մի են բերվում կատարված աշխատանքների արդյունքները, վեր են հանվում ձեռքբերումներն ու բացթողումները, քննարկվում իրականացվելիք հետագա աշխատանքների ուղղվածությունը:

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը անհրաժեշտության դեպքում կազմակերպում է տնայցեր:

Պետք է նշել, որ հոգեբանական աշխատանքում պրոակտիվ մեթոդներն այնքան էլ արդյունավետ չեն, հետևաբար, տնայցերի իրականացումը հոգեբանի կողմից պետք է կատարվի միայն հիմնավոր անհրաժեշտության դեպքում: Հոգեբանական աշխատանքի տեսանկյունից չափազանց կարևոր է որպեսզի այցելուն ինքը գիտակցի խնդիրը, ընդունի այն, իրավիճակը փոխելու ցանկություն ունենա, հոգեբանին դիմելու ինքնուրույն որոշում կայացնի և քայլ անի: Մյուս կողմից՝ տնայցը կարող է հանգեցնել հոգեբան-այցելու սահմանների խախտման, և երկակի հարաբերությունների ստեղծման վտանգի:

Այնուամենայնիվ, կարող են լինել որոշ իրադրություններ, երբ հոգեբանը տնայց կատարելու անհրաժեշտություն ունենա: Մասնավորապես, եթե այցելուն հրատապ առաջնային հոգեբանական աջակցության կարիք ունի և չի կարող այցելել հոգեբանին, կամ եթե խնդրի առանձնահատկություններից ելնելով՝ հոգեբանը երեխային ընտանեկան միջավայրում դիտարկելու խիստ անհրաժեշտություն է տեսնում: Կարող են

լինել նաև այլ իրադրություններ, որոնցով պայմանավորված՝ տնայց կատարելու որոշումը կայացնում է հոգեբանը:

խորհրդատվական աշխատանքներ

Իրականացվում են որպես անհատական աշխատանքներ՝ այցելուի խնդրանքով և կամավոր համաձայնությամբ: Դպրոցի հոգեբանի կողմից հոգեբանական խորհրդատվություն կարող է տրամադրվել ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցներին: Ըստ անհրաժեշտության՝ խորհրդատվական աշխատանքները կարող են զուգակցվել թեմատիկ դասընթացներով, խմբային քննարկումներով: Բոլոր այն դեպքերում, երբ հոգեախտորոշիչ աշխատանքների արդյունքում հոգեբանը բացահայտել է զուգակցված խնդիրներ կամ այնպիսի խնդիր, որի դեպքում անհրաժեշտ է որևէ այլ, նեղ մասնագետի աջակցություն, նա պետք է կատարի տվյալ մասնագետի խորհրդատվության համապատասխան ուղղորդում:⁸

Հոգեբանական խորհրդատվության փուլերն են.

- խնդրի հստակեցում, խնդրի առաջացման հիմքում ընկած պատճառների ուսումնասիրություն,
- խնդրի վերաբերյալ այցելուին տեղեկատվության տրամադրում,
- այցելուի անձնային հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- այցելուին ուղղված խորհուրդների և հանձնարարականների ձևակերպում՝ միտված խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողության զարգացմանը,
- հետագայում նմանատիպ խնդիրների առաջացումը կանխարգելելու ուղղությամբ աշխատանքների իրականացում:⁹

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն է տրամադրում նաև բռնության և բուլինգի ենթարկված սովորողներին: Բռնության և բուլինգի

⁸ Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2023- 147 էջ:

⁹ Кочюнас Р. Основы психологического консультирования. М.: Академический проект, 1999.- 240 с.:

դեպքերի հետ կապված աշխատանքի առանձնահատկությունները մանրամասն նկարագրված են «Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգեր» ուղեցույցում և «Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես բուլինգի կանխարգելման և հաղթահարման գործոն» ձեռնարկում^{10,11}: Սույն ձեռնարկի 4.1, 4.2 հավելվածներում ներկայացված է «Դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտի կայունության որոշման և բռնության ռիսկի գնահատման հարցարան», որը նախատեսված է դպրոցի մանկավարժական աշխատողների և/կամ սովորողների ծնողների/նրանց օրինական ներկայացուցիչների հետ զրույցի իրականացման համար:

Ուսուցանող, լուսավորչական, իրազեկող աշխատանքներ

Ուսուցանող, լուսավորչական, իրազեկող աշխատանքներն իրականացվում են տարաբնույթ ինտերակտիվ սեմինարների ու դասախոսությունների միջոցով՝ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների, այդ թվում՝ մանկավարժական աշխատողների, ուսումնական հաստատության վարչակազմի, սովորողների ծնողների համար: Այս աշխատանքների հիմնական նպատակը սովորողների կյանքում ներգրավված անձանց հոգեբանական մշակույթի և գրագիտության բարձրացումն է, հոգեբանական հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը: Հանրակրթական հաստատության հոգեբանը իրականացնում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգերի և ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ ծնողների և սովորողների շրջանում:¹²

Լուսավորչական աշխատանքների նպատակներից է նաև սովորողների հետ աշխատող մասնագետների հոգեբանական

¹⁰ Աղամյան Հ. Ա., Խուդոյան Ա. Ս. (2024). Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգեր. ՀՄԿ, Լիբերալ քաղաքականության ինստիտուտ ՀԿ, Երևան, 39 էջ:

¹¹ Աղամյան Հ. Ա., Խուդոյան Ա. Ս. (2024). Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես բուլինգի կանխարգելման և հաղթահարման գործոն, ձեռնարկ մանկավարժների և հոգեբանների համար, Երևան, 97 էջ:

¹² Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար. Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2023- 147 էջ:

իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Լուսավորչական աշխատանքների իրականացման դեպքում հոգեբանը լուծում է հետևյալ հիմնական խնդիրները.

- Երեխաներին, ծնողներին, դաստիարակներին, մանկավարժական անձնակազմի աշխատակիցներին ներկայացնել երեխայի հոգեբանական զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները:
- Երեխաներին, ծնողներին, դաստիարակներին, մանկավարժական անձնակազմի աշխատակիցներին ներկայացնել հոգեբանական ախտորոշիչ և զարգացնող գործիքակազմերը:
- Երեխաներին, ծնողներին, դաստիարակներին, մանկավարժական անձնակազմի աշխատակիցներին ներկայացնել ժամանակակից կրթության հոգեբանության ոլորտում նորարարական մոտեցումները:
- Օգնել երեխաներին, ծնողներին, դաստիարակներին, մանկավարժական անձնակազմի աշխատակիցներին ինքնաճանաչման, ինքնակարգավորման մեխանիզմների տիրապետման հարցում:¹³

Փորձագիտական աշխատանքներ

Որևէ խնդիր մասնագիտական տեսանկյունից ուսումնասիրելու և վերջնական մասնագիտական եզրակացություն ներկայացնելու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը կարող է իրականացնել նաև փորձագիտական աշխատանքներ, կազմել փորձագիտական կարծիք տարբեր մանկավարժական նախաձեռնությունների, օժանդակ ձեռնարկների կամ նյութերի, հոգեբանամանկավարժական խնդրահարույց իրավիճակների՝ հստակ պատասխան պահանջող հարցերի վերաբերյալ:

Սոցիալ-վերահսկողական աշխատանքներ

Այս աշխատանքներն իրականացվում են, երբ առկա խնդիրը պահանջում է այնպիսի մասնագիտական միջամտություն և աջակցություն,

¹³ Овчарова Р.В. Практическая психология образования: учеб. пособие. – Москва: Академия, 2003. – 448 с.

որոնց հոգեբանը չի տիրապետում, կամ անհրաժեշտություն է առաջանում խնդիրը լուծել հանրակրթական ուսումնական հաստատության սահմաններից դուրս: Մասնավորապես, սոցիալ-վերահսկողական աշխատանքների անհրաժեշտություն կարող է ծագել, երբ.

- Սովորողի հոգեբանական խնդիրները պահանջում են խորը և երկարատև հոգեբանական աջակցություն, հոգեթերապիա:
- Հոգեբանական աշխատանքի համար անհրաժեշտ ֆիզիկական պայմանները բավարար չեն:
- Սովորողն ունի այնպիսի մասնագետների աջակցության կարիք, որոնք դարձնում չկան (նյարդաբան, հոգեբույժ, էրգոթերապիստ, ֆիզիոթերապիստ և այլք):
- Սովորողն օրինազանց արարք է կատարել, և նրան ուստիկանության համապատասխան բաժին տեղափոխելու, հարցաքննելու և/կամ հսկողության տակ պահելու անհրաժեշտություն կա:

Սոցիալ-վերահսկողական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են հոգեբանի և սոցիալական մանկավարժի (եթե հաստատությունում առկա է նման մասնագետ) համագործակցության շրջանակներում հետևյալ փուլերով.

- խնդրի որոշում և սահմանում,
- կարողունակ (կոմպետենտ) մասնագետի որոնում,
- մասնագետի և սովորողի միջև կապի հաստատման գործընթացի կազմակերպում,
- համապատասխան փաստաթղթերի պատրաստում՝ ըստ անհրաժեշտության,
- հոգեբանական աջակցության տրամադրում սովորողին համագործակցության ընթացքում,
- հետադարձ կապի ապահովում, իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ստացում գաղտնիության սկզբունքի պահպանման սահմաններում:

Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ըստ շահառուների

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը աշխատանքներ կարող է իրականացնել կրթության գործընթացում ներգրավված բոլոր կողմերի հետ՝ սովորողներ, մանկավարժական աշխատողներ, ծնողներ, վարչակազմ:

Աշխատանք սովորողների հետ

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանն իրականացնում է հոգեախտորոշիչ աշխատանքներ, հետազոտում, այդ թվում նաև՝ առաջնային գնահատում իրականացնում սովորողի ուսուցչի կամ ծնողի (սովորողի օրինական ներկայացուցչի) խնդրանքով կամ պահանջով: Դիտարկման, հոգեախտորոշման, հետազոտման աշխատանքներն ամփոփվում են սովորողի հոգեբանական հետազոտման քարտում (Ձև 3), որտեղ ամփոփ ներկայացվում է տեղեկատվություն սովորողի իմացական գործընթացների, ինչպես նաև նրա ընտանեկան, համայնքային և դպրոցական կյանքին մասնակցության վերաբերյալ: Հոգեախտորոշիչ աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային տարբերակով:

Հոգեբանական հետազոտման արդյունքների հիման վրա մշակվում են հանձնարարականներ ուսուցիչների և ծնողների համար, պլանավորվում հետագա խորհրդատվական աշխատանքների և հոգեբանական աջակցության ուղղությունները: Անհրաժեշտության դեպքում հոգեբանը կապ է հաստատում սովորողի հետ աշխատող այլ մասնագետների հետ՝ վերջիններիս կողմից սովորողին տրամադրվող հոգեբանամանկավարժական աջակցության բարելավման կամ առկա խնդիրների հաղթահարման միասնական ճանապարհի որոնման նպատակով: Կախված տվյալ սովորողի կարիքներից և հոգեբանական ախտորոշիչ աշխատանքների արդյունքներից՝ հոգեբանը տվյալ սովորողի կամ սովորողների հետ կարող է իրականացնել կանխարգելող, զարգացնող, շտկող, խորհրդատվական, լուսավորչական աշխատանքներ: Վերոնշյալ աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևով: Հոգեբանական աշխատանքների կազմակերպման ձևը սահմանվում է սովորողին տրամադրվող

մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանում՝ հիմնվելով երեխայի կարիքների և հոգեբանամանկավարժական գնահատման արդյունքների վրա:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատող հոգեբանն աշխատանք է իրականացնում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ.

- մասնակցում է սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացներին,
- մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՌԻՊ-ների մշակման և դրանց իրականացման գործընթացին,
- մասնակցում է կյանքի դժվար իրավիճակում հայտնված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, զարգացման որևէ խնդիր, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող երեխայի հետազոտման և աջակցության պլանների մշակման և մշտադիտարկման գործընթացին,
- որպես մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամ՝ համագործակցում է խմբի մյուս անդամների, ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների հետ, մասնակցում է թիմային հանդիպում-քննարկումներին,
- սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հետ համատեղ ապահովում է ծնողների մասնակցությունը սովորողի ԱՌԻՊ-ով նախատեսված աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացին, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է տնայցեր:

Սովորողների հետ հոգեբանի աշխատանքի հերթական քայլեր

Քայլ 1	Գնահատում	<ul style="list-style-type: none"> • փաստաթղթերի ուսումնասիրում, • սոցիալական պատմության ուսումնասիրում, • տնայց (անհրաժեշտության դեպքում), • հոգեբանական ախտորոշում (խորքային), եզրակացություն
Քայլ 2	Կարիքների որոշում, խնդիրների հստակեցում	<ul style="list-style-type: none"> • կարիքների հստակ ձևակերպում, • անհրաժեշտ միջոցների հստակեցում, • անհրաժեշտ մասնագետների որոշում
Քայլ 3	Աշխատանքի պլանավորում, քայլերի հստակեցում	<ul style="list-style-type: none"> • Ե՞րբ սկսել աշխատանքը, • Ի՞նչ ձևաչափով (անհատական, խմբային), • Ի՞նչ հաճախականությամբ իրականացնել աշխատանքները (շաբաթական քանի՞ անգամ, ի՞նչ տևողությամբ), • ո՞ւմ հետ աշխատել (ծնող, մանկավարժ), • Ե՞րբ ավարտել (նախնական, մոտավոր ժամկետ)
Քայլ 4	Աշխատանքի իրականացում	համաձայն ծրագրում նշված կետերի և առաջնահերթությունների
Քայլ 5	Ընթացիկ գնահատում, մոնիթորինգ, քննարկում	<ul style="list-style-type: none"> • որոշվում են մոնիթորինգի մասնակիցները, • մոնիթորինգի անցկացման ժամկետները
Քայլ 6	Աշխատանքների վերջնական գնահատում, եզրակացության կազմում, քննարկում	<ul style="list-style-type: none"> • ամփոփիչ մոնիթորինգ, • աշխատանքի արդյունքների ամփոփիչ եզրակացություն

Աշխատանք ծնողների հետ

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի կողմից ծնողների հետ իրականացվող աշխատանքը ենթադրում է հոգեբանի և ծնողների (սովորողի օրինական ներկայացուցիչների), ընտանիքի անդամների հետ համատեղ աշխատանք և համագործակցություն, որտեղ հոգեբանի դերերը և աշխատանքի ձևերը կարող են տարբեր լինել՝ պայմանավորված յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկություններով:

Ծնողների հետ իրականացվող աշխատանքը ներառում է մի քանի ուղղություն.

- երեխայի հետ իրականացվող հոգեբանամանկավարժական աշխատանքներում ծնողների ներգրավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- երեխաների արդի հիմնախնդիրների վերաբերյալ խորհրդատվական և իրազեկող աշխատանքների կազմակերպում,
- խորհրդատվության տրամադրում ծնող-երեխա փոխհարաբերություններին առնչվող հարցերի շուրջ (ինչպես ծնողների խնդրանքով, այնպես էլ իրականացվող հոգեբանական աշխատանքների համատեքստում),
- հոգեբանական աջակցության տրամադրում ծնողներին կամ սովորողի օրինական ներկայացուցիչներին, ընտանիքի անդամներին:

Հոգեբանի կողմից ընտանիքի հետ իրականացվող աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար կարևոր է հասկանալ, թե.

- ինչպես է ընտանիքն արձագանքում երեխայի մոտ այս կամ այն խնդրի, ախտանշանի դրսևորմանը,
- ինչ գնահատականներ է տալիս և ինչ խնդիրների է բախվում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը այդ խնդրին կամ խնդիրներին առնչվելիս,
- ինչպես են անդրադառնում այդ խնդիրները սովորողի և ընտանիքի անդամների փոխհարաբերությունների և

սովորողի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա:¹⁴

Ծնողների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է հոգեբանական աշխատանքի և դպրոցում հոգեբանի գործառույթների վերաբերյալ ծնողական համայնքի մոտ ձևավորված պատկերացումներից: Այս առումով նպատակահարմար է օգտագործել Ա. Ալեքսանյանի կողմից առաջարկվող «Նամակ սովորողի ծնողներին» նյութը, որը տեղադրված է Հավելված 5-ում:

Ինչպես սովորողի, այնպես էլ ծնողների հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության հիմքում կոնտակտի ձևավորումն ու վստահելի մթնոլորտի ստեղծումն է: Կարևոր է այս հանգամանքը հաշվի առնել հատկապես առաջին հանդիպումը կազմակերպելիս: Առաջին հանդիպման ընթացքում դրական մթնոլորտ ձևավորելու նպատակով ցանկալի է անդրադառնալ այն հարցերին, թե իրենց ընտանեկան փոխհարաբերություններում ինչ դրական կողմեր են առանձնացնում, ըստ իրենց՝ որո՞նք են երեխայի հետ իրենց հարաբերությունների, ընտանիքում առկա փոխհարաբերությունների դրական, ուժեղ կողմերը: Այս հանգամանքը թուլացնում է լարվածությունը և ձևավորում դրական տրամադրվածություն համագործակցության նկատմամբ:

Վերոնշյալ հարցերի քննարկումից հետո առաջին հանդիպման ընթացքում կարելի է անդրադառնալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են.

- Ե՞րբ և ի՞նչ իրավիճակում են ծագում խնդիրները (այն խնդիրները, որոնց հաղթահարման նպատակով ծավալվել է հոգեբան-ծնող համագործակցությունը):
- Ինչպիսի՞ վերաբերմունք ունեն ծնողները կամ ընտանիքի առանձին անդամներ տվյալ խնդրի նկատմամբ:
- Ի՞նչ ակնկալիքներ ունեն ծնողները երեխաներից:
- Ի՞նչ առանձնահատկություններ ունի երեխայի հաղորդակցումը ծնողների կամ ընտանիքի տարբեր անդամների հետ (այս հարցի քննարկումը հատկապես կարևոր է ամուսնալուծված ընտանիքի հետ աշխատանքի դեպքում):

¹⁴ Горбашова А. В. (2014). Психологическое просвещение родителей, Материалы VI Международной студенческой научной конференции «Студенческий научный форум».

Անկախ ծնող-հոգեբան համագործակցության նպատակից և ձևերից, ուսումնական հաստատության հոգեբանն առաջին հերթին ներկայացնում է սովորողի շահերը և նպատակ է հետապնդում արդյունավետ համագործակցություն ծավալելու՝ առավելագույնս նպաստելով սովորողի լավագույն շահի պաշտպանությանը:

Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը մանկավարժական թիմի ներսում համագործակցության արդյունավետության բարձրացումն է: Այս աշխատանքների նպատակային և արդյունավետ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ պայմաններից մեկը հոգեբանի կողմից մանկավարժական անձնակազմի հետ արդյունավետ համագործակցային հարաբերությունների ձևավորումն է: Հոգեբան-մանկավարժ արդյունավետ համագործակցության ձևավորումը հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի մի շարք գործառույթներ.

- կազմակերպել և իրականացնել սովորողի հոգեբանամանկավարժական գնահատում,
- արդյունավետորեն կիրառել այդ գնահատման արդյունքում ստացված տվյալների հիման վրա կատարած վերլուծությունները,
- մանկավարժական աշխատանքում կիրառել այն գիտականորեն հիմնավորված մոտեցումներն ու ռազմավարությունները, որոնք ներկայացվում են հոգեբանի կողմից կոնկրետ խնդիրների հաղթահարման նպատակով,
- մանկավարժներից ստանալ տեղեկություններ կոնկրետ սովորողների մոտիվացիայի, դասի ընթացքում նրանց վարքի, զարգացման առանձնահատկությունների և այլնի վերաբերյալ՝ հոգեբանական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Հանրակրթական հաստատության հոգեբանի աշխատանքն ուսուցիչների հետ իրականացվում է հետևյալ ձևերով.

- ✓ անհատական խորհրդատվություն,

✓ խմբային խորհրդատվություններ, սեմինարներ:

Խորհրդատվական աշխատանքներ իրականացնելիս կարևոր է, որ.

- հոգեբանի և մանկավարժի համագործակցության մեջ պահպանվի հավասարությունը,
- հոգեբանը և մանկավարժը համատեղ քննարկեն ծագած խնդիրը կամ խնդիրները,
- հոգեբանը և մանկավարժը ստանձնեն պատասխանատվություն իրենց համատեղ որոշման համար,
- հոգեբանը և մանկավարժը նախապես որոշեն իրենց գործառույթային պարտականությունները քննարկվող հարցի վերաբերյալ:

Ե՛վ անհատական, և՛ խմբային խորհրդատվությունները կարող են իրականացվել ինչպես սովորողների ուսուցման, հոգեբանական զարգացման և նրանց հետ համագործակցությանն առնչվող հարցերի, այնպես էլ մանկավարժական թիմում արդյունավետ համագործակցություն ձևավորելու կամ խնդրահարույց իրավիճակները հաղթահարելու ուղիների վերաբերյալ:

Խմբային խորհրդատվությունն իրականացվում է այն դեպքերում, երբ խնդրի լուծման մեջ ներգրավված են մի քանի մանկավարժներ: Նման դեպքերում կարևոր է նախապես այդ մանկավարժներին տրամադրել անհատական խորհրդատվություն, այնուհետև՝ աշխատանքը կազմակերպել խմբային տարբերակով: Խմբային խորհրդատվությունը կարող է որոշակի լարվածություն առաջացնել որոշ մանկավարժների մոտ, ուստի նպատակահարմար է նման հանդիպումների սկզբում ժամանակ հատկացնել նաև հուզական լարվածության լիցքաթափման և խնդրի լուծման կառուցողական եղանակների նախանշման համար տարբեր խաղերի կամ վարժությունների կիրառմանը:

Մանկավարժների համար հոգեբանը կարող է իրականացնել նաև կանխարգելիչ և իրազեկման աշխատանքներ դասընթացների, խմբային քննարկումների, կլոր սեղանների, գիտաժողովների միջոցով: Աշխատանքների շրջանակներում մանկավարժական աշխատողները ստանում են տեղեկատվություն կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ արդյունավետ համագործակցելու եղանակների, երեխաների հոգեկան զարգացման, տարիքային տարբեր փուլերի

առանձնահատկությունների մասին: Այս աշխատանքների ընթացքում կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե որքանով են մասնակից մանկավարժները հավասարաչափ ընդգրկված գործընթացում, մասնակցության և ակտիվության ինչպիսի մակարդակ են դրսևորում տարբեր խնդիրների քննարկման ժամանակ: Հոգեբանի կողմից մասնակից մանկավարժների վարքային արձագանքները հաշվի առնելը կարևոր է վերջիններիս հետ հետագա աշխատանքների պլանավորման համար: Անհրաժեշտ է.

- հիմնախնդիրը քննարկելու հնարավորություն տալ մանկավարժներին,
- խրախուսել մանկավարժների կողմից սեփական կարծիքի արտահայտումը,
- հնարավորություն տալ մանկավարժներին հաջորդ հանդիպումների քննարկման թեմաների հետ կապված առաջարկություններ անել:

Հատկապես իրազեկող աշխատանքների ժամանակ կարևոր է.

- ներկայացնել տեղեկություններ, որոնք արդիական են մանկավարժների համար,
- տեղեկատվությունը ներկայացնել հնարավորինս պարզ, մատչելի, բայց ոչ պարզունակ լեզվով,
- մանկավարժներին հիմնախնդիրը քննարկելու հնարավորություն տալ,
- խրախուսել մանկավարժների կողմից սեփական կարծիքի արտահայտումը,
- հնարավորություն տալ մանկավարժներին հաջորդ հանդիպումների քննարկման թեմաների հետ կապված առաջարկություններ անել:

Աշխատանք վարչակազմի հետ

Հանրակրթական ուսումնական հաստատության վարչակազմի հետ հոգեբանի աշխատանքն իրականացվում է տարբեր ուղղություններով և ձևերով, սակայն դրանց նպատակը մեկն է՝ բարելավել կրթական գործընթացը, նպաստել սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետ միջավայրի ձևավորմանը:

Վարչակազմի հետ հոգեբանի համագործակցությունը կարևոր նշանակություն ունի նաև ուսումնական հաստատության ներսում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ձևավորման, նոր մասնագետների ընտրության, խնդրահարույց իրավիճակների կանխարգելման և հաղթահարման հարցերում:

Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի և, մասնավորապես, ուսումնական գծով տեղակալի հետ համագործակցության շրջանակներում հոգեբանը կարող է մասնակցություն ունենալ դաստիարակչական տարբեր միջոցառումների (օրինակ՝ տարբեր սովորողների վարքի կարգավորման նպատակով որոշակի կանոնների սահմանման և կիրառման անհրաժեշտություն, դրանց բովանդակության քննարկում և այլն), տարբեր ծրագրերի ու դրանց միջանկյալ գնահատման, անհրաժեշտության դեպքում փոփոխությունների ներմուծման աշխատանքներին:

Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ըստ հոգեբանի դերի

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքները տարբեր են: Համապատասխանաբար, նա կարող է իրականացնել տարբեր դերեր՝ հոգեբան-խորհրդատու, հոգեբան-մեթոդիստ, հոգեբան-պատասխանատու (կուրատոր), հոգեբան-ուղղորդող (դիսպետչեր):

Հոգեբան - խորհրդատու

Հանդես գալով որպես խորհրդատու՝ հոգեբանն իրականացնում է խորհրդատվական, տեղեկատվական և լուսավորչական աշխատանքներ սովորողների, նրանց ընտանիքների, մանկավարժների և դպրոցի վարչակազմի համար: Այսպես, օրինակ՝ սովորողի հետ իրականացվող տարբեր նպատակների վրա հիմնված (զարգացնող, կանխարգելիչ, շտկող և այլն) հոգեբանական ցանկացած աշխատանքի շրջանակներում հոգեբանը ստանձնում է նաև խորհրդատուի դեր:

Մանկավարժական աշխատողների հետ իրականացվող աշխատանքների շրջանակներում այս դերը դրսևորվում է այնպիսի գործողություններում, ինչպիսիք են սովորողների ուսուցման, հոգեբանական զարգացման և նրանց հետ համագործակցության

վերաբերյալ հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, հոգեբանական լուսավորչական տարբեր աշխատանքների իրականացումը:

Ծնողներին երեխաների հոգեախտորոշման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման, դաստիարակության, հոգեբանական զարգացման խնդիրների լուծման ուղղությամբ նրանց տրամադրվող խորհրդատվության և տարբեր սեմինարների շրջանակներում հոգեբանական իրազեկող աշխատանքների իրականացման ժամանակ ևս հոգեբանը հանդես է գալիս որպես խորհրդատու:

Վարչակազմի հետ իրականացվող աշխատանքում հոգեբանի՝ որպես խորհրդատուի, դերը դրսևորվում է այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են, օրինակ, բազմաբնույթ հոգեբանական հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումը և մասնակցությունը սովորողների դաստիարակչական տարբեր խնդիրների վերաբերյալ քննարկումներին:

Հոգեբան - մեթոդիստ

Այս դերում հոգեբանը հանդես է գալիս մանկավարժական անձնակազմի և վարչակազմի հետ համագործակցության շրջանակներում. թեմատիկ ելույթներով մասնակցում է մանկավարժական խորհուրդներին, խնդրահարույց իրավիճակներում իրականացնում է հոգեբանական աշխատանք կոնկրետ սովորողի հետ մանկավարժական աշխատանքի կազմակերպման դժվարությունների հաղթահարման նպատակով, մանկավարժական աշխատանքներում ներգրավված նոր մասնագետներին օգնում է հարմարվել միջավայրին:

Հոգեբան - պատասխանատու (կուրատոր)

Հոգեբանը կարող է հանդես գալ ինչպես սովորողների և նրանց ընտանիքների, այնպես էլ դպրոցի մանկավարժական և վարչական անձնակազմի հետ իրականացվող աշխատանքներում: Այսպես, օրինակ՝ սովորողի հետ իրականացվող ցանկացած հոգեբանական աշխատանք կազմակերպվում և իրականացվում է դպրոցի հոգեբանի առաջնային պատասխանատվության ներքո:

Ինչ վերաբերում է ծնողների հետ իրականացվող աշխատանքին, ապա այստեղ հոգեբանը հանդես է գալիս որպես պատասխանատու

ընտանիքի հետ համագործակցություն ձևավորելիս, սովորողի հետ իրականացվող հոգեբանամանկավարժական աշխատանքներում ընտանիքին ներգրավելիս և այդ աշխատանքները պլանավորելիս:

Մանկավարժական աշխատողների հետ իրականացվող աշխատանքներում հոգեբանը որպես պատասխանատու հանդես է գալիս կոնկրետ սովորողի հետ կապված դեպքերի առնչությամբ մանկավարժական քննարկումներ կազմակերպելիս և կոնկրետ մանկավարժների՝ երեխայի հետ իրականացվող աշխատանքներում տևական հոգեբանական և մեթոդական աջակցություն տրամադրելիս: Վարչակազմի հետ իրականացվող աշխատանքների շրջանակներում կուրատորի իր դերը հոգեբանն իրացնում է հոգեբանական աշխատանքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ, համապատասխան պատկերացումների ձևավորմամբ:

Հոգեբան - ուղղորդող (դիսպետչեր)

Հոգեբանը որպես հոգեբան-ուղղորդող է հանդես գալիս հիմնականում սոցիալ-վերահսկողական աշխատանքների իրականացման շրջանակներում: Հոգեբան-ուղղորդողը պետք է տիրապետի այն հաստատությունների, կազմակերպությունների և մասնագետների մասին տեղեկատվությանը, որոնց տրամադրված ծառայությունները, դպրոցի շրջանակներում հասանելի չեն, սակայն կարող են սովորողներին անհրաժեշտ լինել: Նմանատիպ ծառայություններից են բժշկական, հոգեթերապևտիկ, էրգոթերապևտիկ և այլ ծառայությունները: Եթե նման ծառայությունների անհրաժեշտություն է առաջանում, ապա հոգեբանը սովորողներին ուղղորդում է համապատասխան կազմակերպություն կամ մասնագետի մոտ:

Եթե սովորողի մոտ, տարբեր հանգամանքներից ելնելով, ի հայտ են եկել հոգեբանական խնդիրներ, որոնք դպրոցի հոգեբանի կարողունակության շրջանակում չեն, և առավել խորացված հոգեբանական, հոգեթերապևտիկ միջամտության կարիք կա, ապա դպրոցի հոգեբանը պարտավոր է սովորողին և նրա ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ուղղորդել համապատասխան կազմակերպություն կամ կարողունակ մասնագետի մոտ ծառայություն ստանալու:

Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքներն ըստ պլանավորման

Հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքները կարող են լինել պլանավորվող և չպլանավորվող:

Պլանավորվող աշխատանքներ

Պլանավորվող աշխատանքներն այն աշխատանքներն են, որոնք դպրոցի հոգեբանը պլանավորում է ուսումնական տարվա սկզբին, արտացոլում է հոգեբանի տարեկան աշխատանքային պլանում և իրականացնում է սահմանված ժամկետներում՝ ըստ նախապես նշված ժամանակացույցի:

Պլանավորվող աշխատանքները կարող են կրել գնահատող, հոգեախտորոշիչ, կանխարգելիչ, զարգացնող, շտկող, խորհրդատվական, ուսուցանող, լուսավորչական, իրազեկող բնույթ: Այս աշխատանքները կարող են իրականացվել սովորողների, նրանց ընտանիքների, մանկավարժների և վարչակազմի հետ:

Սովորողների հետ ախտորոշիչ աշխատանքները ենթադրում են.

- դասարանի սոցիալ-հոգեբանական հետազոտում (սոցիալ-հոգեբանական մթնոլորտի, միջանձնային հարաբերությունների, համապատասխան դրդապատճառների և այլ հանգամանքների բացահայտման նպատակով),
- սովորողների անհատական առանձնահատկությունների, հակումների, անձի զարգացման մակարդակի, նրանց ներուժի հոգեբանական ուսումնասիրություն և հոգեախտորոշում,
- առաջին դասարանցիների՝ դպրոցին հոգեբանական պատրաստվածության և պատրաստակամության հետազոտում,
- միջին և ավագ դպրոցի սովորողների մասնագիտական ուղղվածության հետազոտում և այլ ախտորոշիչ աշխատանքներ:^{15 16}

¹⁵ Ալեքսանյան, Ա. (2011), Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, 111 էջ:

¹⁶ Дубровина И. В.(2022), Психолого-педагогическое взаимодействие участников образовательного процесса в 2 ч. Часть 2 : учебник для вузов. -5-е изд., испр. и доп. - Москва: Издательство Юрайт, 2022. -280 с.

Դասարանի սոցիալ-հոգեբանական հետազոտման նպատակով առաջարկում ենք օգտագործել «Սոցիոմետրիա» հայտնի մեթոդը, որի հեղինակն է Ջակոբ Լևի Մորենոն, ինչպես նաև «Դասարանում առկա խնդիրներ» հարցաթերթիկը, որը նախատեսված է դասղեկների համար (Հավելված 7): «Սոցիոմետրիկ հարցում» հարցաթերթիկը ներկայացված է Հավելված 6-ում:

Առաջին դասարանցիների ծնողների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքներում կարելի է օգտագործել առաջին դասարան ընդունվող երեխաների ծնողների համար նախատեսված հարցաթերթիկը, որը ներկայացված է Հավելված 8-ում:

Մանկավարժական աշխատողների հետ պլանավորվող աշխատանքները ենթադրում են մանկավարժական աշխատողների հոգեբանական վիճակի, մասնագիտական սթրեսների, հուզական սպառման հետազոտում: Համանման աշխատանքներ են ենթադրում նաև վարչակազմի հետ իրականացվող հոգեախտորոշիչ աշխատանքները:

Հիմնականում պլանավորվող են նաև կանխարգելիչ աշխատանքները: Սովորողների հետ իրականացվող կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

- առաջին դասարանցիների դպրոցական հարմարմանն ուղղված աշխատանքներ,
- կրտսեր դպրոցից միջին դպրոց անցում կատարող սովորողների հարմարմանն ուղղված աշխատանքներ,
- ավագ դպրոց կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն տեղափոխվող սովորողների արժեհամակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքներ,
- դեռահասության տարիքին բնորոշ հոգեբանական դժվարությունների հետ կապված բարդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- բուլինգի և բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- դպրոցականների շրջանում վնասակար սովորությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- այլ աշխատանքներ, որոնք դպրոցի հոգեբանական թիմը կամ

հոգեբանը կարող են նպատակահարմար համարել՝ ելնելով ուսումնական հաստատությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտից և առկա կոնկրետ խնդիրներից:

Մանկավարժական աշխատողների հետ իրականացվող կանխարգելման աշխատանքները կարող են կազմակերպվել հետևյալ ուղղություններով.

- սկսնակ մանկավարժների՝ նոր միջավայրին, աշխատանքին և անձնակազմին հարմարմանն ուղղված աշխատանքներ,
- մանկավարժների սթրեսների, հուզական սպառման, մասնագիտական այրման կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- մանկավարժական անձնակազմի համախմբմանն ու համագործակցային աշխատանքի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքներ:

Կանխարգելող աշխատանքներ կարող են իրականացվել նաև ծնողների հետ հետևյալ ուղղություններով.

- տարիքային ճգնաժամերի շրջանակներում ծագող հոգեբանական խնդիրների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ,
- սովորողների ուսումնական մոտիվացիայի վրա անդրադարձող ընտանեկան խնդրահարույց մոտեցումների և վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

Ներկայացված խնդիրների շրջանակը մոտավոր է, և կանխարգելող, իրազեկող, ուսուցողական, լուսավորչական բնույթի աշխատանքների շրջանակը և համապատասխան թեմաների ընտրությունը կարող է կատարվել նաև հոգեբանի կողմից՝ ըստ անհրաժեշտության: Կանխարգելող աշխատանքները կարող են իրականացվել նաև չպլանավորված այն դեպքում, երբ դպրոցում տեղի է ունենում որևէ խնդրահարույց միջադեպ՝ պայմանավորված այս կամ այն երևույթով: Նման դեպքերում հանրակրթական ուսումնական հաստատությունը որոշում է իրականացնել տվյալ երևույթի կամ հիմնախնդրի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

Կարևոր է հաշվի առնել, որ վերը նշված հոգեբանական աշխատանքների ուղղություններից յուրաքանչյուրը, որոշակի հանգամանքներով պայմանավորված, կարող է իրականացվել՝ նախապես պլանավորված չլինելով:

Չպլանավորվող աշխատանքներ

Չպլանավորվող աշխատանքներն իրականացվում են հետևյալ դեպքերում.

- ծնողը, մանկավարժը կամ սովորողը դիմել են հոգեբանին՝ ներկայացնելով իրենց անհանգստացնող որևէ խնդիր, որը պահանջում է հոգեբանական աջակցություն,
- սովորողի մոտ ծագել են որոշակի վարքային կամ ուսումնական դժվարություններ, որոնք հոգեբանամանկավարժական հետազոտում և գնահատում են պահանջում՝ հետագա աջակցության պլանավորման համար:

Մանկավարժական աշխատողների և ծնողների հետ ևս կարող են տարբեր նպատակներով իրականացվել չպլանավորված աշխատանքներ, եթե տնօրենը, մանկավարժը, կամ ծնողները դիմել են նման խնդրանքով՝ ըստ անհրաժեշտության:

Ծնողների հետ չպլանավորված աշխատանքներ իրականացվում են.

- երեխայի հետ հոգեբանական աշխատանքի անհրաժեշտությունից դրդված, ծնող-երեխա փոխհարաբերություններում խնդիրների բացահայտման նպատակով,
- սովորողի մոտ ծագած հոգեբանական և ուսումնական դժվարություններում ծնող-երեխա փոխհարաբերությունների դերի բացահայտման նպատակով:

Վարչակազմի հետ չպլանավորված կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են, եթե անձնակազմը համալրվել է նոր աշխատակիցներով, և անհրաժեշտ է կատարել վերջիններիս համապատասխան կարողությունների ու հմտությունների ավտորոշում: Դպրոցի հոգեբանը չպլանավորված կերպով կարող է իրականացնել նաև զարգացնող, իրազեկող, խորհրդատվական աշխատանքներ կրթական գործընթացի մասնակիցներից յուրաքանչյուրի հետ՝ ըստ տվյալ ժամանակահատվածում ծագած անհրաժեշտության:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում իրականացվող հոգեբանական աշխատանքի հիմնական ձևերը

Հոգեբանի կողմից ուսումնական հաստատությունում իրականացվող աշխատանքներն ըստ հոգեբանական աշխատանքի ձևի կարող են լինել անհատական և խմբային:

Անհատական աշխատանքներ

Հանրակրթական ուսումնական հաստատությունում հոգեբանական աշխատանքի ձևը որոշվում և սահմանվում է՝ հիմնվելով սովորողի հոգեբանական փոփոխման արդյունքում դուրս բերված հիմնախնդիրների և դրանց հաղթահարման ուղղությունների վրա: Սովորողի հետ անհատական աշխատանքներն իրականացվում են հոգեբանական աշխատանքի էթիկական սկզբունքներին համապատասխան:

Անհատական աշխատանքի իրականացման ընթացքում առաջնային կարևորություն է ձեռք բերում այցելուի հետ կոնտակտի հաստատումը: Այս հանգամանքը ևս իր առանձնահատկություններն է ձեռք բերում դպրոցի հոգեբանի աշխատանքում, քանզի, ի տարբերություն այլ դեպքերի, դպրոցում սովորող երեխան կարող է վաղուց արդեն ճանաչել հոգեբանին՝ որպես իրենց դպրոցում աշխատող մասնագետի, բայց միևնույն ժամանակ կոնտակտի ձևավորման և վստահության խնդիր ունենալ, երբ հանդիպելու է վերջինիս հետ՝ հոգեբանական աջակցություն ստանալու համար:¹⁷¹⁸ Կարևոր է, որ հոգեբանը դպրոցում հանդես գա բացառապես հոգեբանի դերում և այլ գործառույթներ չիրականացնի: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հոգեբանի և որևէ առարկայի ուսուցչի կամ դպրոցի կազմակերպչի գործառույթների համատեղմանը, քանի որ երբ հոգեբանը հանդես է գալիս նաև այլ դերում, որից ելնելով ստիպված է լինում սովորողների նկատմամբ դիրեկտիվ մոտեցում կիրառել, սովորողի համար հոգեբանի հետ իր գործառույթների

¹⁷ Хухлаева О. В. (2022). Психологическое консультирование и психологическая коррекция: учебник и практикум для вузов, Москва: Издательство Юрайт, 423с.

¹⁸ Позднякова А. В. (2016). Формы работы психолога с родителями учащихся, сборник статей МБОУ лицея №6, с.1-4 <http://mucro.goruno-dubna.ru/wp-content/uploads/2016/10/Statya-Formy-raboty-shkolnogo-psihologa-s-roditelyami-uchashhihsya.pdf>

շրջանակներում կոնտակտ հաստատելն ու վստահելի հարաբերություններ ձևավորելը զգալիորեն դժվարանում է: Հոգեբանի հետ առաջնային կոնտակտ հաստատելու տեսանկյունից շատ կարևոր է հաշվի առնել մի շարք հանգամանքներ.

- Երեխայի համար ապահով ֆիզիկական միջավայր (սենյակում այլ անձանց ելքի ու մուտքի բացառում հանդիպման ընթացքում, աղմուկի և շեղող գործոնների բացառում կամ նվազեցում և այլն):
- Հուզականորեն չերանգավորված, չեզոք թեմայից զրույցը սկսելու հանգամանքը, նույնիսկ եթե սովորողը տվյալ պահին որևէ արդիական խնդրով դիմել է մասնագետին: Այնպիսի նախադասությունները, ինչպիսիք են «Ինչպե՞ս ես», «Սիրո՞ւմ ես այսպիսի եղանակ», «Ինչպե՞ս են գործերդ» և այլն, լիցքաթափում են ավելորդ լարվածությունը՝ ստեղծելով ավելի ազատ, անմիջական ու անկաշկանդ միջավայր:
- Առաջին հանդիպման ընթացքում սովորողի հետ հաղորդակցվելիս կարևոր է հաշվի առնել վերջինիս տարիքային առանձնահատկությունները: Դեռահասների հետ հաղորդակցվելիս կարևոր է զերծ մնալ վերջիններիս որպես երեխա վերաբերվելուց, տարիքին անհամապատասխան խաղեր առաջարկելուց, մանկական թեմաներով զրույցներ ծավալելու փորձերից և այլն: Ցանկալի է տեղեկություններ ունենալ ժամանակակից դեռահասների ընդհանուր հետաքրքրություններից և օգտագործել դրանք առաջնային կոնտակտ հաստատելու նպատակով: Ավելի փոքր տարիքի երեխաների հետ կարելի է կիրառել տարբեր խաղեր, արտթերապևտիկ տեխնիկաներ և այլն: Ընդ որում, արտթերապևտիկ տեխնիկաները կիրառելի են տարիքային բոլոր խմբերի հետ աշխատանքում, սակայն դրանց ընտրությունը և այցելուին ներկայացնելու ձևերը ևս կարող են տարբեր լինել՝ պայմանավորված վերջինիս տարիքով: Այսպես, օրինակ, եթե կրտսեր դպրոցական տարիքի երեխային որևէ բան նկարել առաջարկելիս կարող ենք ասել. «Հիմա մենք միասին կնկարենք», ապա դեռահասի համար նման ձևակերպումն այնքան էլ տեղին չէ:
- Հոգեբանի մարմնի լեզուն ևս մեծ նշանակություն ունի առաջնային

կոնտակտի հաստատման համար: Նստած դիրքը, տեղը, կեցվածքը, ձայնի հնչերանգը կարևոր դեր են խաղում այս պարագայում: Կարևոր է, որ դրանք արտահայտեն հուզական դրական վերաբերմունք երեխայի նկատմամբ: Անհրաժեշտ է խոսել մեղմ ձայնով, բայց հստակ, երեխայի տեմպին համապատասխան ու պարզ, որպեսզի սովորողը կարողանա հասկանալ այն, ինչ իրեն ասում են, առանց ավելորդ լարվածության:

- Սովորողի հետ առաջնային կոնտակտի հաստատման հարցում մեծ դեր է խաղում հանգամանքը՝ արդյո՞ք նրա ծնողները կամ օրինական ներկայացուցիչները սենյակում են, թե ոչ: Որպես կանոն, ծնողները (օրինական ներկայացուցիչները) տարբեր կերպ (հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցներով) փորձում են ուղղորդել սովորողին կամ որոշակի գնահատականներ տալ, ինչը չի կարող նպաստել մասնագետի հետ վստահելի հարաբերությունների ձևավորմանը: Ուստի, կարևոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) նախապես տեղեկացնել այս հանգամանքի կարևորության մասին և սովորողի հետ հանդիպումն իրականացնել սենյակում նրանց բացակայության պայմաններում: Եթե այս կամ այն պատճառով դա հնարավոր չէ, ապա ծնողները սպասում են հարևան սենյակում՝ բաց թողնելով դուռը, որ սովորողը հարկ եղած դեպքում կարողանա տեսնել նրանց, կամ սպասում են սենյակում, բայց մեջքով դեպի սովորողն ու մասնագետը, և բացարձակ անհաղորդ են մնում սենյակում տեղի ունեցող իրադարձություններին (խոսքը վերաբերում է սովորողի հետ միայն առաջին հանդիպմանը):

Ինչպես սովորողների, այնպես էլ ծնողների, մանկավարժական աշխատողների և վարչակազմի հետ իրականացվող անհատական ու խմբային բոլոր տիպի աշխատանքներն իրականացման փուլում գրանցվում են Հոգեբանի իրականացրած անհատական և խմբային աշխատանքների գրանցման թերթիկում (Ձև 5): Խմբային աշխատանքների համար պետք է առկա լինի մասնակիցների գրանցման թերթիկ, որտեղ մասնակիցներն իրենք կգրեն իրենց անուն ազգանունները:

Խմբային աշխատանքներ

Քանի որ հոգեբանական աշխատանքի ձևը որոշվում և սահմանվում է՝ հիմնվելով սովորողի հոգեբանական հետազոտման արդյունքում առանձնացված հիմնախնդիրների և դրանց հաղթահարման ուղղությունների վրա, մի շարք դեպքերում կարող է անհրաժեշտություն առաջանալ սովորողի հետ հոգեբանական աշխատանքներն իրականացնել խմբային ձևով: Խմբի ձևավորման ընթացքում կարևոր է հետևել մի շարք կանոնների, մասնավորապես.

1. Խմբի մասնակիցների թիվը սահմանվում է՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից, հոգեբանական հիմնախնդրից: Այսպես, օրինակ՝ կրտսեր դպրոցականների հետ իրականացվող խմբային աշխատանքում ներգրավված երեխաների թիվը կարող է լինել 4-8, առավելագույնը՝ 10, մինչդեռ դեռահասներից կազմված խմբում կարող է ներգրավված լինել մինչև 15 մասնակից:
2. Տարիքային տարբերությունը սովորողների խմբում կարող է լինել մինչև 1 տարի:
3. Խմբերը կարող են լինել ինչպես բաց, այնպես էլ փակ: Այն խմբերը, որոնցում ներգրավված են սոցիալ-հուզական տարբեր խնդիրներ ունեցող սովորողներ (բարձր տաղանապայմանություն, վախեր, ամաչկոտություն, հաղորդակցման դժվարություններ և այլն), աշխատանքներն իրականացնում են փակ խմբի սկզբունքով, քանզի բաց լինելու դեպքում անընդհատ նոր անդամների ավելացումը կարող է խաթարել խմբի աշխատանքների բնականոն ընթացքն ու վնասել մասնակիցների հոգեբանական վիճակին: Խմբի փակ լինելու հանգամանքը կարող է պայմանավորվել նաև խմբում ներգրավված մասնակիցների առավելագույն թվով:

Խմբային աշխատանքները կազմակերպելիս կարևոր է.

- Հստակ սահմանել խմբային աշխատանքի նպատակը, խմբի կազմը, ժամերը և տևողությունը, հաճախականությունը, ժամկետները:
- Խմբի անդամներին տեղեկացնել վերոնշյալ հանգամանքների մասին:
- Ի սկզբանե խմբի անդամների հետ միասին սահմանել խմբային վստահության ձևավորման նախապայմանը՝

գաղտնապահությունը, որի համաձայն՝ այն, ինչ տեղի է ունենում խմբի ներսում, խմբի շրջանակներից դուրս չի քննարկվում, հակառակ դեպքում խումբը պետք է տեղյակ լինի դրա մասին: Այս հանգամանքը դպրոցական հոգեբանից առավել մեծ զգոնություն և մասնագիտական նրբանկատություն է պահանջում՝ հաշվի առնելով դպրոցում տրամադրվող հոգեբանական աջակցության առանձնահատկությունները:

- Սահմանել խմբի կանոնները, որոնք ընդունելի են խմբի բոլոր անդամների համար: Ստորև ներկայացնում ենք խմբի օրինակելի կանոններ, որոնք հոգեբանի կողմից կարող են նաև փոփոխվել՝ կախված խմբի առանձնահատկություններից:
 - Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի զգալ այն, ինչ զգում է, և մտածել այն, ինչ մտածում է:
 - Մասնակիցները փորձում են հնարավորինս անկեղծ շփվել:
 - Մասնակիցներն աշխատում են իրենց հնարավորինս բնական և անբռնազբոս պահել:
 - Այն, ինչ խմբում լսում կամ տեսնում ենք, խիստ կոնֆիդենցիալ է, գաղտնի է:
 - Խմբի անդամների մասին անհրաժեշտ է խոսել անմիջապես նրանց դիմելով, ոչ թե երրորդ դեմքով:
 - Մասնակիցները փորձում են հնարավորինս լինել ներկայում՝ «այստեղ և հիմա»:
 - Խմբի յուրաքանչյուր մասնակից խոսում է առաջին դեմքով:
 - Ցանկալի է, որ մասնակիցները խուսափեն ընդհանրացումներից:
 - Խմբի աշխատանքի ընթացքում կողմնակի խոսակցություններն արգելվում են:
 - Խմբի աշխատանքի ընթացքում հեռախոսներն հնարավորինս անջատվում ու մի կողմ են դրվում:
 - Խմբում անդամները պաշտպանված են ֆիզիկական բռնությունից:
 - Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ցանկացած պահի «ՈՉ» ասել:
 -

Խմբային աշխատանքներում կարող են ներգրավվել.

- ինքնամփոփ երեխաները,
- հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաները,
- ոչ հասուն (մանկամիտ) վարք դրսևորող երեխաները,
- բարձր տազնապայնություն և վախեր ունեցող երեխաները,
- սեռադերային նույնականացման խանգարումներ ունեցող երեխաները,
- վատ սովորություններ ունեցող երեխաները,
- վարքային խանգարումներ ունեցող երեխաները (բացառությամբ գողության փորձեր կատարած երեխաների):¹⁹

Խմբային աշխատանքները հակացուցված են.

- սիբլինգային մրցակցություն (սեփական քույրերի կամ եղբայրների հանդեպ թշնամական վերաբերմունք) ունեցող երեխաներին,
- սոցիոպաթիա ունեցող երեխաներին,
- ընդգծված սեքսուալ հակումներով երեխաներին,
- տարբերվող սեռական փորձ ունեցող երեխաներին,
- բազմիցս գողություն կատարած երեխաներին,
- չափազանց ագրեսիվ երեխաներին,
- սուր սթրեսային ռեակցիա ունեցող երեխաներին:²⁰

Հոգեբանի կողմից սովորողների ծնողների, մանկավարժական աշխատողների և վարչակազմի հետ իրականացվող խմբային աշխատանքների, սեմինարների, քննարկումների դեպքում պետք է առկա լինի մասնակիցների գրանցման թերթիկ, որում կարտացոլվեն իրականացված աշխատանքի նպատակը, թեման, մասնակիցների անուն-ազգանունները, ստորագրությունը, անհրաժեշտության դեպքում՝ կոնտակտային տվյալները: Սովորողների դեպքում «Ստորագրություն» սանդղակը կարող է բաց մնալ, սովորողները կարող են ուղղակի ձեռագրով գրել իրենց անուն-ազգանունները:

¹⁹ Джинотт Х. Дж. (2005). Групповая психотерапия с детьми. Теория и практика игровой терапии., Москва: Апрель-Пресс, 272с.

²⁰ Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար (Ա.Հ. Սվաջյան և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2023- 147 էջ

Գործնական հոգեբանի գործունեության բարոյագիտական-էթիկական սկզբունքները

Մի շարք զարգացած երկրներում գոյություն ունեն հոգեբանի բարոյական կոդեքսներ (օրենսգիրք), որոնք կանոնավորում են նրա մասնագիտական գործունեությունը: Այդ կոդեքսով սահմանված կազմավորող պահանջների ու չափանիշների (ստանդարտների) խախտումը կարող է հանգեցնել հոգեբանին՝ որակավորումից, դիպլոմից, հոգեբանական ծառայություններ իրականացնելու իրավունքից զրկելուն:

Հայաստանի Հանրապետությունում գործնական հոգեբանության խնդիրը ոչ միայն հոգեբանների՝ ըստ գործունեության ոլորտների (օրինակ՝ կրթական, առողջապահական, սոցիալական) տարանջատման բացակայությունն է, մասնագիտական գործունեությունը կանոնակարգող սկզբունքների միասնական ցանկի բացակայությունը, այլև այն, որ մեր երկրում դեռ չկան հոգեբանական գործունեություն իրականացնելու լիցենզիա (թույլտվության փաստաթուղթ) տալու մանրակրկիտ մշակված ընթացակարգեր, արարողակարգեր, ինչպես նաև սահմանված չեն այս ոլորտում պետական վերահսկողության ձևն ու բովանդակությունը: Հոգեբանի բարոյական կոդեքսի պարտադիր բովանդակությունը համընդհանուր բնույթ ունեցող մի շարք առավել կարևոր պահանջներն են, որոնց պահպանումը գործնական հոգեբանի արդյունավետ գործունեության գրավականն է: Մեր կողմից ներկայացվող էթիկական կոդեքսը մշակվել է հենվելով մի շարք մասնագիտական ասոցիացիաների, այդ թվում նաև Հոգեբանների հայկական միության կողմից ընդունված էթիկական կոդեքսի վրա:

Գործնական հոգեբանի աշխատանքը կանոնակարգող էթիկական սկզբունքներից առավել կարևոր են .

- 1. Մարդու հիմնական իրավունքների և արժանապատվության նկատմամբ հարգանքը:** Յուրաքանչյուր մարդու եզակիության, անկրկնելիության և բացարձակ արժեքավորության, կարևորության ճանաչումը հոգեբանական գործունեության կարևոր պայմաններից մեկն է: Հոգեբանը հարգում է յուրաքանչյուրի անձնական կյանքի, գաղտնիության, ինքնորոշման և ինքնավարության իրավունքը, հոգ է տանում այն իրավիճակների լուծման համար, որոնցում իրավաբանական, մասնագիտական կամ այլ պարտականությունները

հակադրության մեջ են այդ իրավունքների իրացման հետ:

2. **Այցելուի բարօրության, բարեկեցության համար հոգածությունը.**

Բժշկական պրակտիկայի հիմնական «Մի վնասիր» սկզբունքի նմանությամբ տվյալ դրույթը պետք է դառնա առաջնային, կանոնակարգի հոգեբանի յուրաքանչյուր գործողությունը, նրա մասնագիտական փոխհարաբերությունները:

3. **Գաղտնապահությունը:**

Այն հոգեբանի աշխատանքի կարևորագույն սկզբունքներից է, որը բացի պահպանելուց, հարկ է նաև ճիշտ ներկայացնել: Գաղտնապահության ճիշտ ներկայացումը կոնտակտի կայացման նախապայման է: Հաստատությունը, որտեղ աշխատում է հոգեբանը, իր առանձնահատկություններն է փոխանցում նաև իրականացվող հոգեբանական աշխատանքին, և այդ հանգամանքը կարևոր է հաշվի առնել դպրոցի շրջանակներում հոգեբանական աջակցություն տրամադրելիս: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան հոգեբանական աջակցություն է ստանում որևէ մասնագիտացված կենտրոնում, կրթական գործընթացի մասնակիցները կարող են տեղեկություն չունենալ կամ ունենալ նվազագույն տեղեկություն այդ աջակցության տրամադրման մասին (օրինակ, իմանալ այն, որ այս կամ այն սովորողն ստանում է հոգեբանական աջակցություն): Սակայն բոլորովին այլ իրավիճակ է, երբ հոգեբանական աջակցությունը տրամադրվում է դպրոցում: Այս դեպքում հոգեբանական աջակցության տրամադրման մասին տեղյակ են նաև մանկավարժական աշխատողները, որոշ դեպքերում՝ սովորողի համադասարանցիները: Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի այցելուները ճանաչում են միմյանց և շփվում, հետևաբար առկա է տեղեկությունների արտահոսքի վտանգ: Այս հանգամանքը հոգեբանից պահանջում է սթափ, ուշադիր և զգոն վերաբերմունք այցելուներից յուրաքանչյուրի կողմից ներկայացված տեղեկույթի նկատմամբ:

Տեղեկույթը, որը ստացվել է հոգեբանի կողմից իրականացվող աշխատանքի գործընթացում, որևէ կերպ ենթակա չէ գիտակցված կամ պատահական տարածման, քննարկման այլ անձանց, այդ թվում նաև՝ դպրոցի անձնակազմի անդամների հետ: Այն անհրաժեշտ է գաղտնի պահել՝ ելնելով հոգեբանական աշխատանքի

կազմակերպման գաղտնիության սկզբունքից:

Եթե անհրաժեշտություն կա տեղեկատվությունը փոխանցել երրորդ անձանց, ապա հարկ է այն ներկայացնել այնպիսի տեսքով, որ բացառվի դրա օգտագործումն այցելուի շահերի դեմ:

Բոլոր այն դեպքերում, երբ այցելուից ստացված տեղեկույթի վերաբերյալ հարցում է արվում փորձագետների կողմից (որպեսզի լուծվի հոգեբանի կոմպետենտության հարցը նրա ատեստավորման ժամանակ կամ որևէ այլ նպատակով), անհրաժեշտ է այն տրամադրել այնպես, որ բացառվի այցելուի անձի նույնականացումը:

Նույնը վերաբերում է նաև մասնագիտական գործունեության մասին հաշվետվություններին, հետազոտությունների արդյունքներին և հրապարակումներին, որոնք պետք է կազմված լինեն այնպիսի տեսքով, որը կբացառի այցելուի նույնականացումը շրջապատող այն մարդկանց կողմից, ովքեր ներգրավված չեն տվյալ այցելուի հետ աշխատող մասնագետների խմբում:

Մանկավարժական անձնակազմի հետ սովորողների այս կամ այն խնդրի լուծման ուղիների որոնման նպատակով տարբեր հիմնախնդիրների բարձրաձայնման և քննարկման ժամանակ ևս անհրաժեշտ է պահպանել գաղտնիության սկզբունքը: Առանց այցելուից թույլտվություն ստանալու խորհրդատվությունը չի կարելի ձայնագրել: Չի կարելի առանց թույլտվության միակողմանի տեսանելիությամբ հայելու միջոցով ապահովել 3-րդ անձի գաղտնի ներկայություն: Գաղտնապահության սկզբունքի շրջանակներում կարևոր է, որ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի կողմից սովորողների վերաբերյալ լրացվող փաստաթղթերը, ներառյալ սովորողի հոգեբանական հետազոտման քարտը, կիրառված մեթոդիկաների թղթային լրացված տարբերակները, պրոյեկտիվ թեստերի արդյունքները, սովորողի գործունեության այլ արդյունքներ պահվեն այնպես, որպեսզի դրանց հասանելիությունը հոգեբանի կողմից վերահսկելի լինի: Այսինքն՝ որևէ փակ պահարանում, որը բացելու, օգտագործելու և ըստ անհրաժեշտության ներկայացնելու հնարավորություն կունենա միայն հոգեբանը:

Գաղտնապահությունն ունի թույլատրելիության սահմաններ: Երբեմն անվտանգության պահպանման նպատակով այս նորմը խախտվում է: Վտանգ կարող է սպառնալ այցելուին, հոգեբանի անձին, ինչպես նաև հասարակությանն առհասարակ: Գաղտնապահության խախտման 2 ընդհանուր պատճառ կա. եթե դեպքը կլինիկական է, կամ եթե այն հանցագործության տարրեր է պարունակում: Եթե գաղտնապահության սկզբունքը խախտելու անհրաժեշտություն է առաջացել, ապա այդ մասին պետք է առաջին հերթին տեղեկացնել այցելուին:

4. **Կոմպետենտությունը:** Հոգեբանը աշխատանքում պետք է ձգտի պահպանել կոմպետենտության բարձր չափանիշները՝ միաժամանակ ընդունելով իր մասնագիտական կոմպետենտության որոշակի սահմանափակությունը: Այսպես, հոգեբանը կարող է իրականացնել միայն այն ծառայությունները և օգտագործել միայն այն մեթոդները, որոնց վրա տարածվում է համապատասխան մասնագիտական որակավորումը՝ հաստատված կրթության մասին փաստաթղթերով, հոգեբանության կոնկրետ կիրառական ճյուղերում անցած թրենինգների մասին վկայականներով: Այնտեղ, որտեղ ընդունված մասնագիտական ստանդարտները դեռ մշակված չեն, հոգեբանը պետք է գործի շատ զգույշ և կիրառի բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի նրանց բարեկեցությունը, ում հետ աշխատում է:
5. **Ազնվությունը:** Հոգեբանը իր մասնագիտական գործունեության մեջ պետք է ազնիվ լինի ինքն իր և այն մարդկանց հետ, ում հետ մասնագիտական փոխհարաբերությունների մեջ է: Իր որակավորման, ծառայությունների, վարձատրության մասին տեղեկություններ հաղորդելիս նա իրավունք չունի կեղծ, ստահող հայտարարություններ անել և այցելուներին զցել մոլորությունների մեջ:
6. **Երկակի հարաբերությունների արգելքը:** Պրակտիկ գործունեություն իրականացնելիս հոգեբանը պարտավոր է պահպանել մասնագիտական հարաբերությունների մաքրությունը ցանկացած այլ հարաբերություններից և պահանջներից (անձնական, բարեկամական, սեռական): Այս առումով նպատակահարմար չէ հոգեբանական խորհրդատվություն անցկացնել բարեկամների, ընկերների, աշխատակիցների, այլ կերպ ասած՝ հոգեբանին շատ մոտ

անձանց հետ, քանի որ նմանօրինակ փոխհարաբերություններում ոչ պրոֆեսիոնալ ստերեոտիպերն անխուսափելիորեն ներխուժում են աշխատանքի մեջ և էապես ազդում նրա արդյունավետության վրա, քանի որ այս դեպքերում վերանում է հոգեբանական աշխատանքի օբյեկտիվությունը, իսկ այցելուի հոգեկանում առաջանում է կախվածություն հոգեբանի անձից: Պետք է նշել, որ այս հանգամանքը առանձնահատուկ կարևորություն է ստանում հենց հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի գործունեության ընթացքում, քանի որ ստացվում է այնպես, որ հոգեբանն ու սովորողը, մինչև հոգեբանական աշխատանքը սկսելը արդեն իսկ ճանաչում են միմյանց, և երկակի հարաբերությունների վտանգը մեծանում է: Այս սկզբունքի իրացման տեսանկյունից կարևոր է, որ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը դպրոցում հոգեբանի գործառույթներից բացի այլ գործառույթներ (ուսուցչի, կազմակերպչի, գրադարանավարի և այլն) չիրականացնի: Եթե այնուամենայնիվ, հոգեբանը ստիպված է լինում որևէ ուսուցչի բացակայության պարագայում աշխատել սովորողների հետ, նա պետք է աշխատանքն իրականացնի իր տարեկան պլանով նախատեսված գործողությունների շրջանակներում, օրինակ, տվյալ խմբի կարիքին համապատասխան՝ կանխարգելիչ, իրազեկող և/կամ զարգացնող աշխատանքներ իրականացնի:

7. **Պատասխանատվությունը:** Պահպանելով բարձր մասնագիտական ստանդարտները, բացատրելով իր մասնագիտական դերը և պարտականությունները՝ Հոգեբանը պատասխանատվություն է ստանձնում իր վարքի համար:

Գործնական հոգեբանի գործունեության կազմակերպման՝ վերը ներկայացված բարոյագիտական և մասնագիտական սկզբունքները կրում են համընդհանուր բնույթ և որոշում են արհեստավարժ հոգեբանի աշխատանքի մակարդակն ու որակը:

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի վարքը, բացի գործնական հոգեբանի գործունեության բարոյագիտական-էթիկական սկզբունքներից, պետք է համապատասխանի նաև Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական

աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N10-Ն հրամանի մեջ արտացոլված վարքականոններին:²¹

Գործնական հոգեբանի գործունեության էթիկական նորմերը

1. Հոգեբանի գործունեությունն ուղղված է հումանիստական և սոցիալական այնպիսի նպատակների իրագործմանը, ինչպիսիք են բարեկեցությունը, առողջությունը, կյանքի բարձր որակը, անհատական և սոցիալական կյանքի տարբեր հարթություններում անհատների ու խմբերի լիարժեք զարգացումը: Քանի որ հոգեբանը միակ մասնագետը չէ, որի գործունեությունն ուղղված է այս նպատակների իրագործմանը, ուստի այլ մասնագետների հետ փորձի փոխանակումը և համագործակցությունը ցանկալի, իսկ որոշ դեպքերում էլ անհրաժեշտ են՝ առանց վերջիններիս կոմպետենտության ու գիտելիքների նկատմամբ որևէ նախատրամադրվածության:
2. Հոգեբանությունը՝ որպես մասնագիտություն, առաջնորդվում է էթիկական սկզբունքներով, որոնք ընդհանուր են բոլոր մասնագիտությունների համար: Դրանք են՝ հարգանք անձի նկատմամբ, մարդու իրավունքների պաշտպանություն, պատասխանատվության զգացում, այցելուի (շահառուի) նկատմամբ անկեղծություն և ազնվություն, շրջահայացություն՝ գործիքներ և միջոցառումներ կիրառելիս, մասնագիտական կոմպետենտություն, հաստատակամություն ներգործության կամ միջամտության նպատակին հասնելու մեջ և կայունություն դրա գիտական հիմքերում:
3. Հոգեբանները չպետք է մասնակցեն կամ նպաստեն անհատի անկախության, նրա ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության դեմ ուղղված մեթոդների մշակմանը:

²¹ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.02.2023 թվականի N10-Ն հրաման Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին

Խոշտանգումների կամ ծաղրանքի անմիջական մշակմանը կամ իրականացմանը նպաստելը բացի այն, որ հանցագործություն է, նաև հոգեբանի մասնագիտական էթիկայի ամենածանր խախտումն է: Հոգեբանները չպետք է մասնակցություն ունենան խոշտանգումների կամ այլ դաժան, ոչ հումանիստական կամ ստորացուցիչ գործողությունների իրականացմանը ոչ որպես հետազոտողներ, ոչ որպես օգնականներ կամ համագործակիցներ:

4. Հոգեբանները պետք է տեղյակ պահեն իրենց մասնագիտական միավորումներին, եթե իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում տեղեկացել են մարդու իրավունքների ոտնահարման, ծաղրանքի, դաժանության մասին:
5. Հոգեբանները պետք է հարգեն իրենց այցելուների կրոնական և բարոյական համոզմունքները և հաշվի առնեն դրանք մասնագիտական ներգործության համար անհրաժեշտ հարցումների ժամանակ:
6. Հոգեբանական աշխատանքի կայացման համար էական հանգամանք է հարգանքը այցելուի անձի նկատմամբ: Օգնություն ցուցաբերելիս հոգեբանը չպետք է խտրական վերաբերմունք դրսևորի ըստ ծագման, տարիքի, ռասայական և սոցիալական պատկանելության, սեռի, հավատքի, գաղափարախոսության, ազգության և ցանկացած այլ տարբերակող ցուցանիշի: Հոգեբանը պետք է ընդունի այցելուին ամբողջականորեն: Կարլ Ռոջերսն առաջադրել է «Անխոս դրական վերաբերմունք» տերմինը, որն ընդգրկում է այցելուի սուբյեկտիվ աշխարհի ընդունումը: Հարկ է համակերպվել այցելուի հոգեկան հակասությունների հետ: Նախապայման է նաև արդարությունը: Դրական վերաբերմունքը ներառում է ջերմություն, համակրանք, հոգատարություն և այցելուի անձի գնահատում: Նախընտրելի է այս ամենն արտահայտել ոչ թե բառերով, այլ վերաբերմունքով: Վերաբերմունքը չպետք է փոփոխվի՝ կախված այցելուի տրամադրությունից, վարքից, հուզական վիճակից: Իսկ եթե որևէ դեպքում հոգեբանը չի ընդունում այցելուին, ապա կարելի է ուղղորդել այլ հոգեբանի մոտ:
7. Հոգեբանը չպետք է օգտագործի իր մասնագիտության ընձեռած «իշխանությունն» ու գերակայությունն այցելուի նկատմամբ,

որպեսզի շահույթ կամ որևէ առավելություն, արտոնություն ստանա ինչպես իր, այնպես էլ երրորդ անձի համար:

8. Հատկապես գրավոր փաստաթղթերի պարագայում՝ հոգեբանը պետք է չափազանց զգույշ լինի, զուսպ և քննադատորեն վերաբերվի իր հայեցակարգին (կոնցեպցիաներին) և եզրակացություններին՝ հաշվի առնելով, որ դրանք կարող են ընկալվել որպես նսեմացնող և խտրականություն պարունակող, օրինակ՝ նորմալ, ոչ նորմալ, ադապտացված, ոչ ադապտացված, ինտելիգենտ, մտավոր հետամնաց:
9. Հոգեբանները չպետք է մանիպուլյատիվ ընթացակարգեր կիրառեն, որպեսզի որոշակի այցելուներ դիմեն իրենց: Դպրոցում աշխատող հոգեբանները չպետք է օգտագործեն այդ առավելությունը՝ սեփական մասնավոր պրակտիկան ընդլայնելու համար:
10. Հոգեբանը չպետք է թույլ տա իր անվան կամ ստորագրության օգտագործումը այլաբնույթ նպատակներով: Հոգեբանները պետք է տեղյակ պահեն այլոց իրավունքների դեմ ոտնձգության բոլոր դեպքերի մասին, որոնք իրենց հայտնի են: Անօգուտ և ստի վրա հիմնված գործողությունները չպետք է քողարկվեն հոգեբանի մասնագիտությամբ:
11. Այն դեպքում, երբ այցելուի անձնական հետաքրքրությունները հակասում են հաստատության հետաքրքրություններին, հոգեբանը պետք է առավելագույնս անկողմնակալ կատարի իր գործառույթները: Հոգեբանի դերը ենթադրում է այցելուի հետաքրքրությունների կարևորում, նրա հանդեպ հարգանք և ուշադրություն հոգեբանի կողմից, ով համապատասխան հանգամանքներում կարող է հանդես գալ որպես նրա պաշտպան (նաև հաստատության տնօրենության առջև):
12. Հոգեբանի իրավունքներն ու պարտականությունները հիմնված են մասնագիտական անկախության և ինքնավարության սկզբունքի վրա՝ անկախ որևէ կազմակերպությունում զբաղեցրած ծառայողական դիրքից և ավելի բարձր աստիճան ունեցող մասնագետներից, ադմինիստրացիայից:

13. Հոգեբանի մասնագիտական կարգավիճակը հիմնված է նրա ընդունակությունների և որակավորման վրա, որոնք անհրաժեշտ են նրա պարտականությունների իրականացման համար: Հոգեբանը պետք է մասնագիտորեն պատրաստված և տեղեկացված լինի ոլորտում կիրառվող մեթոդների, գործիքների կիրառման, անհրաժեշտ միջոցառումների իրականացման վերաբերյալ: Նրա աշխատանքի մասն է կազմում սեփական մասնագիտական գիտելիքները և կարողություններն անընդհատ արդիականացնելը:
14. Հոգեբանը չպետք է կիրառի մեթոդներ և արարողակարգեր, որոնք ժամանակակից գիտության շրջանակներում չեն անցել բավականաչափ փորձարկումներ: Հանրակրթական ուսումնական հաստատությունում չեն կարող կիրառվել դեռևս գիտական գնահատական չստացած հոգեբանական մեթոդիկաներ:
15. Երբ հոգեբանական հետազոտությունը կամ ներգործությունը պահանջում է սերտ համագործակցություն հարակից բնագավառի մասնագետների հետ, հոգեբանը պետք է ապահովի համապատասխան փոխազդեցությունը այնպես, որ այն ուղղված լինի հոգեբանի և այցելուի բարօրությանը:
16. Ինչպես կիրառելիս, այնպես էլ հասարակությանը ներկայացնելիս, հոգեբանական մեթոդները չպետք է ներառեն այնպիսի գործիքակազմ, որը չի համապատասխանում հոգեբանության գիտական հիմքերին:
17. Անհրաժեշտության դեպքում չիրաժարվելով գիտական քննադատությունից՝ հոգեբանները չպետք է խտրականորեն վերաբերվեն գործընկերներին և այլ մասնագիտությունների ներկայացուցիչներին, որոնք կիրառում են նույն կամ այլ գիտական մեթոդներ, և պետք է հարգանքով վերաբերվեն այն դպրոցներին ու ուղղություններին, որոնք գիտականորեն և մասնագիտորեն կոմպետենտ են:
18. Հոգեբանի աշխատանքը հիմնված է այլ մասնագետներին հարգելու (և նման վերաբերմունքից օգտվելու) իրավունքի և պարտականության վրա, հատկապես այն ոլորտներում, որոնք իրենց գործունեությամբ սերտորեն հարում են հոգեբանությանը:

19. Հոգեբանը պետք է հրաժարվի ներգործությունից կամ միջամտությունից, եթե համոզված է, որ իր օգնությունը օգտագործվելու է ի վնաս անհատների, խմբերի, կազմակերպությունների կամ համայնքների օրինական հետաքրքրություններին կամ ուղղված է դրանց դեմ:
20. Անհատների, խմբերի, կազմակերպությունների կամ համայնքների վրա ներգործություն կիրառելով՝ հոգեբանը պետք է նրանց անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրի լուծվող հիմնական խնդիրների, առաջադրված նպատակների և օգտագործվող մեթոդների մասին: Անչափահասների և իրավաբանորեն անգործունակ անձանց դեպքում պիտի տեղեկացվեն ծնողները կամ խնամակալները:
21. Այցելուն իրավունք ունի ցանկացած պահի ավարտել աշխատանքը հոգեբանի հետ կամ դիմել այլ մասնագետի: Նրա ազատությունն այս առումով չպետք է սահմանափակվի: Պետք է խրախուսել բավարար տեղեկատվության հիմքի վրա որոշում կայացնելու այցելուի ընդունակությունը, ուստի հոգեբանը պետք է հոգեբանական աշխատանքի վերաբերյալ բավարար տեղեկություն տրամադրի: Հոգեբանը կարող է հրաժարվել ներգործությունը շարունակելուց, եթե այն կատարվում է մեկ այլ հոգեբանի կողմից իրականացվող այլ տիպի ներգործության հետ միաժամանակ: Միևնույն այցելուի հետ մեկից ավելի հոգեբանների զուգահեռ իրականացվող աշխատանքն օրինաչափ չէ:
22. Հոգեբանը չպետք է թույլ տա, որ իրեն ներգրավեն մասնագիտական առումով անորոշ իրադրության մեջ, որտեղ անտեղի կամ երկիմաստ կլինեն նրա դերն ու գործառույթները:
23. Հոգեբանը պետք է ճիշտ գնահատի իր մասնագիտական կոմպետենտության մակարդակը և սահմանները, պետք է հատուկ զգուշավորություն ցուցաբերի, որպեսզի չառաջացնի այնպիսի անհիմն ակնկալիքներ, որոնք մասնագիտորեն անկարող կլինի իրականացնել հետագայում: Հոգեբանական աշխատանքում խճճվելու դեպքում հարկավոր է դիմել այլ՝ առավել փորձառու հոգեբանի օգնությանը:

24. Հոգեբանության ինչ բնագավառում էլ աշխատելիս լինի, հոգեբանը պետք է ձգտի նպաստել ընդհանրապես գիտության, մասնավորապես հոգեբանության առաջընթացին՝ իրականացնելով հետազոտություններ և իր գործունեության մեջ հավատարիմ մնալով գիտական մոտեցումներին, ինչպես նաև գիտելիքները փոխանցելով ուսանողներին և այլ մասնագետների:
25. Հետազոտություն իրականացնելիս հոգեբանը պետք է կտրականապես հրաժարվի այնպիսի գործողություններից, որոնք կարող են կայուն, անդարձելի վնաս պատճառել հետազոտվողներին: Ցանկացած հետազոտական ծրագրի մասնակիցները պետք է արտահայտեն իրենց միանշանակ համաձայնությունը փորձի անցկացմանը. անչափահասների կամ իրավաբանորեն անգործունակ անձանց դեպքում նման համաձայնություն պետք է լինի նաև ստացվի ծնողների կամ խնամակալների հետ:
26. Հոգեբանական հետազոտությունները, ինչպես փորձարարական, այնպես էլ դիտողական, պետք է իրականացվեն՝ ելնելով անհատի արժանապատվության հանդեպ հարգանքի սկզբունքից:

Գործնական հոգեբանի անձնային որակները

Հոգեբանական աշխատանքում առանձնահատուկ կարևորություն է ստանում հոգեբանի անձը, քանի որ այդ գործընթացում հոգեբանի ներգործության գործիքը իր իսկ անձն է: Այդ իսկ պատճառով հոգեբանի անձին ներկայացվող պահանջները բավականին ընդգրկուն են: Ստորև ներկայացված են կրթության ոլորտի գործնական հոգեբանի առավել կարևոր անձնային որակներն ու հատկությունները.

- Հոգեբանական լավատեսություն. մոտեցումը այցելուին պետք է լինի լավատեսական վարկածների դիտակետից և տողորված լինի անձի ռեսուրսների նկատմամբ հավատով:
- Ուշադրություն երեխայի հոգեկան զարգացման անհատական հնարավորություններին:
- Էմպաթիա (ապրումակցում). այլ մարդու աչքերով իրականությունը տեսնելու ընդունակություն:

- Հուզական ջերմություն. այն պիտի լինի չափավոր. հոգեբանը ցույց է տալիս այցելուին, որ չի քննադատում նրան և անկեղծ հետաքրքրված է նրա պատմությամբ, բայց միայն այսքանը:
- Ինքնազարգացման ձգտում. սեփական անձը և ուրիշներին ճանաչելու ձգտում:
- Անկեղծություն. հոգեբանական աշխատանքում այն դրսևորվում է նրանով, թե որքանով է հոգեբանը ունակ հետաքրքրված լինել այցելուի խնդրով:
- Լայն հետաքրքրություններ և հայացքների անկախություն:
- Դրական վերաբերմունք, որը պայմանավորված չէ ինչ-որ բանով:
- Մարդկանց հուզականորեն դեպի իրեն ձգելու ընդունակություն:
- Սեփական բառերի և գործողությունների համար պատասխանատվության շատ բարձր զգացում:
- Սեփական կոմպետենտության սահմանների գիտակցում:
- Այցելուի հայրը ճիշտ գնահատելու կարողություն:
- Կոնկրետություն. ընդունել դիմացինի ասածը հենց այնպես, ինչպես նա ասում է, չփնտրել թաքնված իմաստներ, չկարդալ «տողերի արանքում»:
- Հումորի զգացում, ինչը չի նշանակում, որ հոգեբանը պիտի դառնա ծաղրածու կամ անլուրջ վերաբերմունք ցուցաբերի այցելուի հանդեպ: Հումորի զգացումը փրկում է այն իրավիճակներում, երբ այցելուն չափազանց ֆիքսված է խնդրի վրա, ոչ մի այլ բան չի տեսնում, և հարկավոր է «ընդլայնել տեսահորիզոնը» թեթև հումորային միջամտության շնորհիվ: Բայց սա պետք է շատ զգույշ կիրառել:
- Կյանքի ողբերգականության զգացում. օգնում է ներգրավվել այցելուի անձնական ողբերգության, դրամայի մեջ:
- Ինքնագիտակցում և կոնգրուենտություն. հոգեբանը պիտի տեղյակ լինի, հասկանա սեփական խնդիրները և սահմանափակումները, հստակ սահման գծի սեփական անձի և այցելուի միջև: Կարևոր է սահմանի մշտական գիտակցումը:
- Ներկայություն. հոգեբանը մշտապես գիտակցում է, որ գտնվում է այցելուի հետ կոնտակտի մեջ, արձագանքում է նրա ասածներին կամ այլ հակազդումներին: Այցելուի մոտ պիտի տպավորություն

լինի, որ հոգեբանը միշտ կա կայուն և գրեթե անփոփոխ միջավայրում:

- Աուտենտիկություն. հոգեբանի պահվածքը համապատասխանում է իր մասնագիտությանը, հայացքներին և գաղափարներին:
- Սուբյեկտիվություն. հոգեբանը միշտ գործում է սուբյեկտիվ դաշտում, ուստի հոգեբանի սուբյեկտիվությունը նրա գլխավոր գործիքներից է, եթե հոգեբանը սուբյեկտիվ չլինի, նա չի ընկալի այցելուի սուբյեկտիվությունը: Որքան էլ հակասական է թվում, հոգեբանի սուբյեկտիվությունը պետք է լինի անկողմնակալ:
- Շփվողականության բարձր մակարդակ, խմբում աշխատելու և համագործակցելու կարողության բարձր մակարդակ:
- Հարմարվողականության բարձր մակարդակ:
- Գիտելիքները գործնականում հմտորեն կիրառելու կարողություն:
- Իրադրությունը սթափ գնահատելու և դրա զարգացման հնարավոր ելքերն աղեկվատ գնահատելու կարողություն:
- Առկա խնդիրների լավագույն լուծումներն արագ գտնելու կարողություն:
- Սովորելու, ինքնակատարելագործվելու ընդունակություն:
- Գաղտնի տեղեկատվությունը պահելու կարողություն և պատրաստակամություն:
- Ուշադրության կայունություն, փոխանցելիության և բաշխման բարձր մակարդակ, ուշադրության ծավալի նշանակալի մակարդակ:
- Կամային հիշողության բավարար ծավալ և ճշգրտություն, պատկերային և հուզական հիշողության զարգացման նշանակալի մակարդակ:
- Տրամաբանության և մտածողության գործընթացների՝ վերլուծելու, համադրելու ունակության, զարգացածության նշանակալի մակարդակ:
- Ընդհանուր զարգացածություն:
- Նյարդահոգեկան կայունություն:
- Ճկունություն:
- Բարձր աշխատունակություն:
- Բարձր սթրեսակայունություն:

- Հուզական հավասարակշռվածություն:
- Հոգեֆիզիկական տոկունություն:
- Խոսքի զարգացման բարձր մակարդակ:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանն իր գործունեության ընթացքում, տարեկան աշխատանքային ծրագրի հիման վրա կազմված, տարեկան աշխատանքային պլանում նախատեսված գործողությունների համաձայն, տարբեր ուղղություններով իրականացված գործողությունների վերաբերյալ տվյալ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարությանը ներկայացնում է եռամսյակային²² աճողական հաշվետվություն յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը (Ձև 4): Հոգեբանի կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունը ստանալուց հետո հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը հնգօրյա ժամկետում այն ուղարկում է տվյալ հաստատությունը սպասարկող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն:

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի հաշվետվությունը պարունակում է տեղեկատվություն հոգեբանի տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում վերջինիս կողմից սովորողների, նրանց ծնողների և հաստատության մանկավարժական աշխատողների հետ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածի համար հոգեբանը ներկայացնում է վերոնշյալ բոլոր խմբերի հետ անհատական և/կամ խմբային ձևաչափով իրականացված դիտարկումների, գնահատումների, կանխարգելիչ, զարգացնող, շտկող և լուսավորչական և այլ աշխատանքների վերաբերյալ ինչպես թվային ցուցանիշներ, այնպես էլ բովանդակային մեկնաբանություն:

²² Եռամսյակային հաշվետվությունները կազմվում են հետևյալ ժամանակացույցով. 1-ին եռամսյակ՝ սեպտեմբերից նոյեմբեր, 2-րդ եռամսյակ՝ դեկտեմբերից փետրվար, 3-րդ եռամսյակ՝ մարտից մայիս, չորրորդ եռամսյակ՝ հունիսից օգոստոս:

Հարկ է նշել, որ ելնելով անձնական տվյալների պաշտպանության սկզբունքից՝ հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանն իր հաշվետվությունների մեջ չի ներառում և երրորդ անձին չի փոխանցում իր շահառուներին (սովորող, ծնող, մանկավարժական աշխատող) վերաբերող այնպիսի տեղեկություն, որը կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել տվյալ անձի ինքնությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԵՆՅԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մանկական և կրթության հոգեբանի աշխատանքում կարևոր պայմաններից մեկը հոգեբանի սենյակի համապատասխան պայմանների և զարգացնող, շտկող ու թերապևտիկ պարագաների ու նյութերի առկայությունն է: Հատկապես երեխաների հետ հոգեբանական աշխատանքում երեխայի խոսքերին փոխարինելու են գալիս խաղալիքները: Հ. Լինդրեթը նշում է, որ «երեխաները խոսում են խաղալիքների օգնությամբ»:²³

Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատասենյակը պետք է անվտանգ լինի սովորողի ֆիզիկական և հոգեբանական առողջության համար: Այն պետք է ապահովի գաղտնիությունը, լինի հարմարավետ, սովորողի մոտ ընդունված լինելու զգացողություն առաջացնի:

Հոգեբանի աշխատասենյակը հնարավորինս պետք է տեղակայված լինի հանրակրթական ուսումնական հաստատության առավել անաղմուկ հատվածում՝ ցանկալի է՝ դեպի ներքին բակ նայող պատուհաններով: Պետք է նկատի ունենալ, որ թե՛ միջանցքից եկող աղմուկը, թե՛ դրսից եկող աղմուկը, կարող են խոչընդոտել հոգեբանական աշխատանքի ընթացքին: Իհարկե, ժամանակակից պայմաններում, այս հարցը կարելի է լուծել նաև ձայնամեկուսիչ նյութերի օգնությամբ:

²³ Лэндрет Г. (1998)Игровая терапия: искусство отношений, М., Институт практической психологии, 368 стр.

Հոգեբանական աշխատանքի ընթացքում թե՛ հոգեբանը, և թե՛ նրա այցելուն պետք է իրենց տվյալ միջավայրում ազատ և ապահով զգան: մասնագիտական գրականության մեջ հիմնականում շեշտադրվում են հոգեբանի աշխատասենյակի հետևյալ չափերը՝ 10–14 մ2: Սա հոգեբանի աշխատասենյակի ամենաբարենպաստ չափսն է, քանի որ դպրոցահասակ այցելուն ավելի մեծ սենյակում կարող է, իրեն անապահով և մենակ զգալ կամ չկարողանալ կենտրոնանալ սեփական մտքերի, տրված առաջադրանքների ու հնչող հարցադրումների վրա: Մյուս կողմից՝ ավելի փոքր սենյակում դպրոցահասակ այցելուն կարող է իրեն ճնշված զգալ, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման համար բավարար հնարավորություններ չունենալ:²⁴

Ի. Խանամիրյանը նշում է, որ «հոգեբանի սենյակում չպետք է լինեն ապակյա դռներ, մեծ պատուհաններ, հայելիներ: Մի կողմից սա ապահովում է անվտանգությունը, մյուս կողմից՝ գաղտնապահությունը: Հոգեբանի սենյակում պետք է լինեն պատուհաններ, որոնք համապատասխան լուսավորություն և օդափոխություն կապահովեն, միևնույն ժամանակ դրանց տեղակայվածությունը ևս պետք է կրի առավելագույնս անվտանգ բնույթ: Կարևոր է նշել, որ հոգեբանի աշխատասենյակի պատերը պետք է զերծ լինեն անհարմար վառ պատկերներից և ներկված լինեն միատոն, հանգիստ գույներով: Պատերին չպետք է լինեն նկարներ, հատկապես այլ երեխաների կողմից պատկերված նկարներ, քանի որ դրանք ավելորդ հարցերի, խնդիրների տեղիք կարող են տալ: Ցանկացած նկար, պատկեր, կերպար կարող է դառնալ պրոյեկցիայի աղբյուր, ինչը նպատակահարմար չէ հոգեբանական աշխատանքի ընթացքի համար, եթե, իհարկե, նախապես կանխամտածված չէ հոգեբանի կողմից»:²⁵

Կարևոր է և արդյունավետ, որպեսզի սպասասենյակը կամ միջանցքի այն հատվածը, որտեղ անհրաժեշտության դեպքում ծնողները կարող են սպասել իրենց երեխաներին, շատ մոտ չլինի հոգեբանի սենյակի դռանը:

²⁴ Бремс К.(2002)Полное руководство по детской психотерапии, М., ЭКСМО–Пресс, 640 стр.

О' Коннор (2002), Теория и практика игровой терапии, Питер, 2002, 464 стр.

Axline V., (1947). Play therapy. New York: Ballantine Books.

²⁵ Խանամիրյան Ի. (2016), Մանկական հոգեթերապիա, ՌԽումնական ձեռնարկ, «Ձանգակ» հրատարակչություն, Երևան, էջ 27:

Սա ևս գաղտնիություն ապահովող գործոն է: Հաճախ երեխայի հետ հոգեբանական աշխատանքի նախաձեռնությունը գալիս է ոչ թե երեխայից, հոգեբանից, կամ մանկավարժական անձնակազմի անդամներից, այլ հենց ծնողից: Նման դեպքերում երեխան բացարձակապես չպետք է զգա ծնողի ներկայությունը, նա լիովին անկաշկանդ պետք է լինի հոգեբանի սենյակում: Վերահսկող ծնողների երեխաները, օրինակ, պարբերաբար ցանկություն են ունենում ճշտելու և ստուգելու, թե արդյոք իրենց խաղի ձայները չեն լսվում կողքի սենյակում: Բնականաբար, լինում են նաև դեպքեր, երբ երեխան կարիք է ունենում համոզվելու, որ ծնողը սպասում է իրեն: Սա վերաբերում է հատկապես փոքր տարիքի կամ կապվածության խնդիր ունեցող երեխաներին, որոնք կարող են ցանկություն հայտնել պարբերաբար ստուգելու ծնողի ներկայությունը: Նման դեպքերում հոգեբանը ծնողի հետ պայմանավորվում է սպասելու վայրի վերաբերյալ:

Հոգեբանի աշխատասենյակի մաքրության պատասխանատվությունը հիմնականում հոգեբանինն է, քանի որ սենյակը պետք է կարգի բերվի յուրաքանչյուր այցելությունից հետո: Հատկապես խաղալիքների, նյութերի և օգտագործվող այլ պարագաների հիգիենայով ու դասավորությամբ զբաղվում է հոգեբանը, իսկ սենյակի ընդհանուր մաքրության աշխատանքները կատարվում են ուսումնական հաստատությունում աշխատող համապատասխան անձանց կողմից՝ նախապես համաձայնեցնելով հոգեբանի հետ: Բոլոր դեպքերում, հոգեբանի սենյակը և սենյակի պարագաները պետք է լինեն հեշտ մաքրվող և լվացվող: Դա սովորողների ֆիզիկական անվտանգության և ապահովության համար կարևոր պայման է:

«Հոգեբանի աշխատասենյակում անհրաժեշտ է ունենալ ժամացույց, որը հնարավորություն կընձեռի այցելուին և հոգեբանին պահպանելու ժամային սահմանափակումը, կարողանալու վերահսկել սեփական ազդակները, պահանջմունքները: Սա վերաբերում է հատկապես այն դպրոցահասակ այցելուներին, որոնք ունենում են սահմանների հետ կապված խնդիրներ»:²⁶

²⁶ Խանամիրյան Ի. (2016) Մանկական հոգեթերապիա, Ուսումնական ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, էջ 28:

Հոգեբանի աշխատասենյակի հատակի ծածկույթը կարող է բաղկացած լինել երկու մասից: Մի կողմում, որը նախատեսված է երեխայի ստեղծագործական ինքնարտահայտման համար (օրինակ՝ ավազով, ներկերով, խմորով կամ ծեփոնով աշխատանք), կարելի է հատակը ծածկել հեշտ մաքրվող և լվացվող ծածկույթով (լինոլեում, սալիկ և այլն): Խաղալիքների համար նախատեսված հատվածում նպատակահարմար է ունենալ գորգ, որը թույլ կտա դպրոցահասակ այցելուին խաղային գործընթացն իրականացնել նաև հատակին:

Հոգեբանի աշխատասենյակում կարևոր է սեղանի և աթոռների առկայությունը: Նախընտրելի է, որ սեղանը լինի դպրոցահասակ այցելուների չափերին համապատասխան, այն օպտիմալ տարբերակով, որ դրա շուրջը կարողանան նստել տարբեր տարիքի սովորողներ: Աթոռների քանակը նվազագույնը երկուսն է: Եթե տվյալ սենյակում պետք է իրականացվի խմբային հանդիպում, ապա աթոռների քանակը պիտի լինի մասնակիցների քանակին համապատասխան: Սենյակում անհրաժեշտ է ունենալ պահարան կամ խաղալիքների համար նախատեսված դարակներ: Երկուսն էլ պիտի հասանելի լինեն դպրոցահասակ այցելուներին, նրանք պիտի կարողանան թե՛ տեսնել, թե՛ վերցնել խաղային պարագաները, իրենց անկաշկանդ և ազատ զգալ հոգեբանի աշխատասենյակում:

Եթե հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը համապատասխան վերապատրաստումներ է անցել և աշխատում է նաև ավազաթերապիայի մեթոդով, ապա հոգեբանի աշխատասենյակում կարևոր տեղ է գրավում նաև ավազի սեղանը: Գրականության մեջ ներկայացվող դասական ավազի սեղանը փայտե արկղ է, որի դասական չափերն են 50սմ լայնություն, 70սմ երկարություն և 8սմ խորություն: Այս չափի ավազի սեղանի մեջ նպատակահարմար է լցնել 8-10 կգ ավազ:²⁷ Կարևոր է, որ սեղանը անպայման պատրաստված լինի փայտից: Փայտը մարդու վրա դրական ազդեցություն ունեցող բնական նյութ է: Փայտի օգտագործումից ենթադիտակցության հետ աշխատանքի խորհրդապաշտական և թերապևտիկ ազդեցությունը մեծանում է: «Եթե ավազի դաշտը առանձին արկղ է, ապա ցանկալի է, որ հատուկ սեղան լինի, որի վրա կտեղադրվի ավազով լի արկղը, սական ավելի հարմար է,

²⁷ Конаныхина Е. Ю. (2016) Волшебство в песочнице. Песочная терапия в работе с детьми. _М.: Генезис, С.12

որ ավագի սեղանը նախապես պատրաստված լինի համապատասխան ուղքերով և տեղադրվի սենյակի մի հատվածում: Յանկալի է, որ ավագի սեղանը նաև ծածկ ունենա, որպեսզի աշխատանքն ավարտելուց հետո ավագը ծածկվի, այնպես չստացվի, որ ցանկացած ժամանակ ինչ-որ մեկը փորփրում է ավագը»:²⁸

«Ավագի հարթությունն արդեն իսկ պատրաստի խորհրդանիշ է: Այն անգիտակցականի փոխակերպումն է»:²⁹ «Ավագի սեղանի հատակը և պատերը ներսից պետք է ներկված լինեն կապույտով կամ երկնագույնով: Յանկալի է ջրակայուն և բարձր որակի ներկ ընտրել, որպեսզի ավագի և ջրի համադրության պարագայում առավել դիմացկուն լինի: Տվյալ դեպքում՝ պատերը երկնքի նմանակումն են, իսկ հատակը՝ ջրի, որը այցելուի ընկալմամբ կարող է լինել գետ, լիճ, ծով կամ օվկիանոս: Ավագի սեղանի տարածքում կապույտ գույնը խորհրդանշում է ենթագիտակցականի բովանդակությունը: Զուրը, երկինքը և կապույտ գույնը խորության, բարձրության և հեռավորության անսահմանության զգացողություն են առաջացնում»:³⁰

Խաղային պարագաների ընտրության հարցում ամենակարևոր չափանիշներից մեկը կրկին մնում է անվտանգությունը: Դպրոցահասակ այցելուն, օգտագործելով հոգեբանի աշխատասենյակի պիտույքներն ու պարագաները, պետք է լինի ապահով, զգա իրեն վստահ, չվախենա դրանք կոտրելուց, փչացնելուց: Հոգեբանի աշխատասենյակի կահավորանքի պատասխանատվությունը հոգեբանինն է. նա է ուշադրություն դարձնում ժամանակին պարագաների համալրմանը, դրանց ամբողջականությանը, ամրությանը: Հոգեբանի աշխատասենյակում չպետք է լինեն կոտրված խաղալիքներ, մատիտներ, վերջացած ներկեր, չորացած ծեփոն և այլն: Մանկական կամ կրթության հոգեբանը հետևում է խաղասենյակի ամբողջականությանը, մաքրությանը,

²⁸ Ավագյան Ա. Մ. (2023), Ավագաթերապիա, ուսումնամեթոդական ձեռնարկ, «Տիր» հրատարակչություն, Երևան, էջ 45:

²⁹ Ратникова Е. В. (2021) Путь героя в песочной терапии. Психологические технологии. М.: Академический проект, 291 с.

³⁰ Ավագյան Ա. Մ. (2023). Ավագաթերապիա, ուսումնամեթոդական ձեռնարկ, «Տիր» հրատարակչություն, Երևան, 194 էջ:



անվտանգությանը: Ինչպես նշում է Հ. Լենդրեթը, «խաղալիքներն ու պարագաները պետք է ընտրել, այլ ոչ թե հավաքել»:³¹

³¹ Лэндрет Г. (1998)Игровая терапия: искусство отношений, М., Институт практической психологии, стр 120.

Աղյուսակ 1. Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային սենյակի անհրաժեշտ գույքի և պարագաների օրինակելի ցանկ

Կահույք և անհրաժեշտ պարագաներ						
N	Անվանում	Քանակ	Նկար	Հատկություն	Չափս	Գույն
1.	Մասնագետի համակարգչային գրասեղան	1 հատ		Պատրաստված փայտից կամ լամինատից:	1390 (550) x 1000 (680) x 750 մմ, եզր. (2 մմ)	Շականակա գույնի կամ մոխրագույնի երանգներ
2.	Համակարգչային աթոռ	1 հատ		Փափուկ կաշի, երանգավորված փայտ, շրջանակ՝ պողպատ, լիցք՝ պոլիուրեթանային փրփուր:	530x540x910 մմ, հաստություն՝ 10 մմ,	Սև, կապույտ կամ մոխրագույն
3.	Համակարգիչ	1 հատ			Լայնություն՝ 489, բարձրություն՝ 367 հաստություն՝ 209 մմ,	Սև
4.	Պատի ժամացույց	1 հատ			Միջին չափի	

5.	Բազկաթոռ	2 հատ			Բարձրություն՝ 97 սմ, լայնություն՝ 75սմ, խորություն՝ 75սմ	
6.	Աթոռ	4 հատ		Մանկական էրգոնոմիկ աթոռ: Մոնոբլոկ, պատրաստված է պոլիպրոպիլենից: Թեթև ձևավորում: Կայուն:	Նստատեղի բարձրությունը հատակից՝ 26 սմ	Ծիրանագու յն կամ որևէ այլ գույն , որը համադրելի է սենյակի այլ պարագանե րի հետ
7.	Կոմպակտ բազմաֆունկցիոնալ կլոր եզրերով սեղան	1 x 2 հատ		Առավելությունը՝ միավորվում են խմբային աշխատանքների ժամանակ, ունեն շարժական ոտքեր, անիվները հատուկ արգելակներով են:	Սեղանի տրամագիծը՝ Ø 95 սմ, բարձրությունը հատակից՝ 64սմ	Սպիտակ
8.	Աթոռ	6 հատ		Էրգոնոմիկ աթոռ: Մոնոբլոկ, պատրաստված է պոլիպրոպիլենից: Թեթև ձևավորում: Կայուն:	Նստատեղի բարձրությունը հատակից՝ 42սմ	Մոխրագույ ն

9.	Պահարան խաղերի և գրականության համար	1 հատ		<p>Առավելությունը՝ տարածքի խնայում:</p> 	158x32x103սմ Չամբյուղի երկարությունը՝ 21սմ	<p>Չամբյուղների գույնը բաց մոխրագույն</p> 
10.	Պահարաններ ցածր՝ գրենական պիտույքների, աշխատանքային նյութերի համար	1 հատ		<p>Պահարան ցածր՝ գրենական պիտույքների, աշխատանքային նյութերի համար:</p> 	81x 32x103սմ Չամբյուղի երկարությունը՝ x12 սմ	<p>Չամբյուղների գույնը կանաչ կամ նարնջագույն</p> 
11.	Մատ՝ մարմնամարզական գորգ	2 հատ		<p>Փափուկ, ճկուն և ցնցումները կլանող նյութը կանխում է վնասվածքները և ընկնելիս թուլացնում է ցավը:</p>	2.0x1.0x0.1 մ	
12	Եռանկյունաձև բարձեր	3 հատ՝ տարբեր չափերի		<p>Բարձերը նախատեսված են հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների ճիշտ դիրքավորում ապահովելու համար:</p>	20x60x60սմ, 15x80x60սմ, 45x45x35սմ	
12.	Հարմարեցված աթոռ իր սեղանով՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար	1 հատ				

13.	Ավազի սեղան՝ ավազաթերապիայի համար	1 հատ		Նախատեսված է՝ ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների Համար, սակայն խմբային աշխատանքների համար սեղանի չափերն այլ են: Պատրաստված է լամինցված ԴՍՊ-ից, երկաթե պտուտակներից:	Ավազի արկղի չափերը անհատական աշխատանքների համար՝ 70x50x8սմ Ուտքերի բարձրությունը՝ 49.5սմ:	Ներսից՝ կապույտ, դրսից՝ ծառի կեղևի գույնի
14.	Մոլբերտ	1 հատ		Պատրաստված է փայտից, ունի մետաղական դետալներ:	1.75մ Բարձրությունը փոփոխվող	
15.	Աղի լամպ՝ բոցավառ բոյր	1 հատ		Նպաստավոր միջավայր, աղի արիեստական միկրոկլիմա ապահովելու համար:	14x14x17.5 սմ	
16.	Կենդանի հատակ՝ ծիածան	1 հատ		Պոլիկարբոնատ, փոփոխվող վահանակներ, ոսպնյակներ, որոնց միջև տեղակայված է գունավոր գելով պարկուճ:	6 մաս՝ յուրաքանչյուրը՝ 50x50սմ	
17.	Սենսորային գորգ	1 հատ՝ (4 կտորի g)		Տարբեր կոպիտ գործվածքներ, վինիլային կաշի, լաքապատ գործվածքներ, տեքստիլային ամրացնող ժապավեններ, թավշամազ:	1800x450 մմ	

18.	Չոր ցնցուղ՝ անձրև	1 հատ		ՄԴՖ հայելային վահանակ, ատլասե փափուկ ժապավեններ, հոգեբանական լիցքաթափման, սթերսի հաղթահարման համար:	400x400x1500մմ, 0,02մ	
Խաղեր, պարագաներ, դիդակտիկ նյութեր						
19.	Մատների թատրոն՝ նախատեսված դերային խաղերի համար	1 տուփ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է կտորից և գործվածքից: Այլ՝ երեք շաբաթն առնվազն մեկ անգամ անհրաժեշտ է լվանալ:	0,05 x 0,05 սմ	
20.	Խաղ՝ ուղղված հույզերի ճանաչմանը, ապրումակցմանը և տրամաբանական մտածողության զարգացմանը	1 հատ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է նրբատախտակից, փայտից, թղթից, ջրային հիմքով լաքից:	Հիմքի տրամագիծը 30սմ, դետալների տրամագիծը՝ 7.5սմ	
21.	Խաղ՝ ուղղված հոգեկան գործընթացների զարգացմանը՝ հույզերի արտաքին դրսևորումների ճանաչմանը և դասակարգմանը	1 հատ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Երեխաները կարող են հույզերն արտահայտել նաև հայելու առաջ՝ իրենց իսկ դեմքին նայելով: Պատրաստված է կտորից, սինտեպոնից (ոչ գործվածքային նյութ), թելից, ուլունքներից: Այլ՝ երեք շաբաթն առնվազն մեկ անգամ անհրաժեշտ է լվանալ խաղը:	Երկարությունը և լայնությունը 25սմ	

22.	Իսաղ՝ ուղղված հույզերի դրսևորումների զարգացմանը և դրանց արտաքին ճանաչմանը	1 հատ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Կարելի է օգտագործել սյուժետադերային խաղերի ժամանակ: Պատրաստված է նրբատախտակից, ջրային հիմքով ներկից, կպչուն ժապավենից, լաքից, կտորից, ակրիլե թելից:	Վահանակ՝ 38x29x0.4սմ	
23.	Իսաղ՝ ուղղված ակնառու-պատկերավոր մտածողությանը, մասի և ամբողջի մասին պատկերացումների ձևավորմանը	1 հատ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է կտորից, փայտե զատիկից: Այլ՝ երեք շաբաթն առնվազն մեկ անգամ անհրաժեշտ է լվանալ խաղը:	26x36սմ	
24.	Իսաղ՝ ուղղված ուշադրության կենտրոնացմանը	1 հատ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, երկաթե ծխնիներից, ջրային հիմքով ներկերից, թելից:	Տուփ՝ 50x30x4սմ, քարտեր՝ 8x8սմ	
25.	Իսաղ՝ ուղղված հիշողության, կամածին ուշադրության, երևակայության զարգացմանը	1 հատ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, օրգանական ապակուց, թղթից, լաքից:	Տուփը՝ 33x26x4սմ, տպագրված թղթերը՝ A4	

26.	Խաղ՝ ուղղված սեռային պատկանելության մասին պատկերացումների, բարձրագույն և հիմնական ճանաչողական գործառույթների զարգացմանը	1 հատ		<p>Նախատեսված է օգտագործել գործունեության տարբեր ձևերում, հատկապես սյուժետադերային խաղերում, անհատական խաղերի ժամանակ: Կարող է լրացնել, նոր բովանդակություն հաղորդել նաև համատեղ խաղերին:</p> <p>Պատրաստված է նրբատախտակից, կպչանից, կտորից, տպագրված թղթից:</p>	Բարձրությունը 40սմ, նրբատախտակի հաստությունը՝ 0.4մմ	
27.	Սյուժետադերային խաղերի համար նախատեսված հավաքածու՝ Ընտանիք	1 հատ (7 կտոր)		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p> <p>Պատրաստված է Էկո փայտից, անվտանգ ներկերից, կտորներից, ակրիլե թելերից:</p>	Մեծահասակների տիկնիկները 11սմ, մանկական տիկնիկները՝ 8սմ, մանկիկը՝ 6սմ	
28.	Հավաքածու՝ Տնային կենդանիներ	6 հատ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p>		
29.	Հավաքածու՝ Վայրի կենդանիներ	6 հատ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p>		
30.	Խաղ՝ ուղղված ուշադրության և հիշողության զարգացմանը	1 հատ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p> <p>Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից, լաքից, ինքնակաշուն թաղանթից (օրակա):</p>	Պատվանդան՝ 30 x 15.5 x 0.8սմ	

<p>31. Իսաղ՝ ուղղված ուշադրության, հիշողության, տեսատարածական և հաղորդակցման հմտությունների (համագործակցելու) զարգացմանը</p>	<p>1 հատ</p>		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից, թելից:</p>	<p>Հիմքը 18 x 18 x 0.7 սմ</p>	
<p>32. Իսաղ՝ ուղղված տրամաբանական մտածողության, հիշողության և ուշադրության զարգացմանը</p>	<p>1 հատ</p>		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից, լաքից և լամինացված սովարաթղթից:</p>	<p>Պատվանդան՝ 25 x 8 x 1.5սմ, ձողերի բարձրությունը 19 սմ, խորանարդիկները՝ 4.5x4.5x3սմ</p>	
<p>33. Իսաղ՝ ուղղված տրամաբանական մտածողության, ուշադրության, տեսատարածական ընկալման և տեսողական հիշողության զարգացմանը</p>	<p>1 հատ</p>		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է նրբատախտակից, փայտից, լամինացված սովարաթղթից, ջրային հիմքով ներկերից և լաքից:</p>	<p>Տուփը՝ 22.3x22.3x6.5սմ, ելուստների տրամագիծը՝ 10մմ</p>	
<p>34. Իսաղ՝ ուղղված ուշադրության կենտրոնացմանը, սպասելու հմտության զարգացմանը, պատկերի ամբողջական ընկալմանը</p>	<p>1 հատ</p>		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է նրբատախտակից, ջրային հիմքով լաքից, կտորից:</p>	<p>Պարկը 22x30սմ է, քարտերը՝ 8x8սմ</p>	

35.	Խաղ՝ ուղղված տեսատարածական ընկալման, ուշադրության, մտածողության զարգացմանը(դասակարգել, համադրել)	1 տուփ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p> <p>Պատրաստված է փայտից, լաքից:</p>	0.16x0.09x0.06մ	
36.	Խաղ՝ ուղղված շփման և հաղորդակցման ունակությունների զարգացմանը (հավաքածուն ներառում է 5-6 գույն ունեցող հինգ տարբեր չափերի գործած գնդակներ)	1 հատ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p> <p>Պատրաստված է ակրիլե թելից, սինտեպոնից (ոչ գործվածքային նյութ) Այլ՝ լվանալ երեք շաբաթն առնվազն մեկ անգամ անհրաժեշտ է լվանալ խաղը:</p>	Գնդակների շրջագծերը մեծից փոքր՝ 35սմ, 30սմ, 25սմ, 20սմ, 15սմ	
37.	Խաղ՝ ուղղված տրամաբանական մտածողության, ուշադրության և երևակայության զարգացմանը	1 հատ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p> <p>Պատրաստված է գունավոր տպագրությամբ ստվարաթղթից, կտորից, կաշուն ժապավենից :</p>	Կտորե գիրք՝ 23x16.5սմ	
38.	Խաղ՝ ուղղված հույզերի ճանաչմանը, ապրումակցմանը, գործողությունների անվանումների ճանաչմանը, տրամաբանական մտածողության, ուշադրության,	1 հատ		<p>Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:</p> <p>Պատրաստված է գունավոր տպագրությամբ ստվարաթղթից, կտորից, կաշուն ժապավենից:</p>	Կտորե գիրք՝ 23x16.5սմ	

	երևակայության, հաղորդակցման հմտությունների զարգացմանը,					
39.	Իսաղ՝ ուղղված ուշադրության, հիշողության և մտածողության զարգացմանը	1 տուփ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամինացված ստվարաթղթից, լաքից:	Տուփը՝ 21.5x15x2.5սմ	
40.	Իսաղ՝ ուղղված ուշադրության, հիշողության և մտածողության զարգացմանը	1 տուփ		Նախատեսված է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամինացված ստվարաթղթից, լաքից:	Տուփը՝ 21.5x15x2.5սմ	
41.	Տարրա՝ ավազով կամ ջրով աշխատելու համար	1 հատ		Պատրաստված է պլաստիկից:	0.5x0.5x0.05մ	
42.	Կինետիկ ավազ աշխատանքային դետալներով	1 տուփ		Դետալները՝ փայտե կամ պլաստիկ, ավազը՝ կինետիկ:	Ընդհանուր 4 գույն, դետալ 6 հատ, ավազի ընդհանուր քաշը՝ 1 կգ	
43.	Գրենական պիտույքներ			Վրձիներ, ջրամաններ, ներկեր, գունավոր մատիտներ, պլաստիլին, ռետին, մկրատ, քանոն, սոսինձ և այլն:		

ՁԵՎԱԹՂԹԵՐ

Ձև 1

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<p>Հոգեբանի աշխատանքային տարեկան ծրագրի հիման վրա մշակվում է տարեկան պլանը, որտեղ արտացոլվում են աշխատանքային գործունեության ուղղությունները, թիրախային խմբերը, իրականացվող գործողությունները և ժամկետները: Եթե հոգեբանի կողմից աշխատանքային ծրագրում չներառված որևէ գործողության պլանավորման անհրաժեշտություն է առաջանում, ապա դա պլանավորվում է «Այլ աշխատանքներ» կետի ներքո:</p>		
Աշխատանքի ուղղություններն ըստ գործունեության ձևի	Իրականացվող գործողություններ	Կատարման ժամկետ
Նախապատրաստական աշխատանքներ և պլանավորում	Ուսումնական տարվա գործողությունների պլանավորում՝ աշխատանքային պլանի և ժամանակացույցի կազմում:	Օգոստոսի 20-ից - սեպտեմբերի 20-ը
Դիտարկում	Կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտմանն ուղղված դիտարկումներ դպրոցի տարբեր դասարաններում, ինչպես նաև այլ հաստատությունից տեղափոխված սովորողների դիտարկում՝ կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտման նպատակով:	Ուսումնական տարվա սկզբին և ընթացքում
	Դասերի ժամանակ սովորողների վարքի և մասնակցության դիտարկում՝ ըստ անհրաժեշտության առանձին ուղղորդումներ տրամադրելու և ուսումնադաստիարակչական գործընթացին առավելագույն ներգրավվածություն ապահովելու նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Սովորողի ուսուցման գործընթացին նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների, կարգապահական խախտումների դիտարկում, ինչպես նաև սոցիալապես ակտիվ անձի ձևավորմանը խոչընդոտող, միջանձնային հարաբերություններում առաջացած խնդիրների հոգեբանական պատճառների բացահայտում:	Ուսումնական տարվա ընթացքում
Հոգեախտորոշիչ աշխատանքներ	Սովորողների անհատական առանձնահատկությունների, հակումների, անձի զարգացման մակարդակի, նրանց ներուժի բացահայտման նպատակով	Ուսումնական տարվա ընթացքում և տարիքային

	հոգեբանական ուսումնասիրություն և հոգեախտորոշում:	յուրաքանչյուր փուլում
	Սովորողների (մտավոր, ֆիզիկական, հուզական) զարգացման մակարդակի, ինչպես նաև սոցիալական զարգացման տարբեր բնույթի խանգարումների գնահատում, ախտորոշում:	Ուսումնական տարվա ընթացքում և տարիքային յուրաքանչյուր փուլում
	Բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սովորողների գնահատում, բացահայտում:	Տարեսկզբին և ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
	Սովորելու պատրաստակամության և դպրոցի նկատմամբ վերաբերմունքի հոգեբանամանկավարժական գնահատում:	Ուսումնական տարվա սկզբում՝ ըստ անհրաժեշտության
	Սովորողների ծնողների և/կամ օրինական ներկայացուցիչների անկետավորում, թեստավորում՝ ըստ անհրաժեշտության:	Ուսումնական տարվա ընթացքում
	Մանկավարժական աշխատողների հաղորդակցման ունակությունների, մոտիվացիայի, հոգեբանական բարեկեցության, հուզական ինտելեկտի, հուզական այրման մակարդակի գնահատում:	Ուսումնական տարվա ընթացքում
Անհատական ուսուցման պլանավորման գործընթաց	Մասնակցություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացներին:	Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման դեպքերում
	Սովորողի հոգեբանական առանձնահատկությունների՝ խառնվածքի, ընդունակությունների, նախասիրությունների, հակումների, հետաքրքրությունների, պահանջմունքների, դրդապատճառների և առաջացած դժվարությունների մասին տեղեկատվության տրամադրում՝ ԱՈՒՊ-ի մշակման նպատակով:	Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման դեպքերում
	Մասնակցություն սովորողի ԱՈՒՊ-ի ընթացիկ և տարեվերջյան գնահատման աշխատանքներին:	Տարվա ընթացքում

Կանխարգելիչ աշխատանքներ	Կանխարգելիչ աշխատանքներ՝ ուղղված սովորողների հոգեկան առողջության պահպանմանը, զարգացմանն ու հոգեբանական	Ուսումնական տարվա ընթացքում
	դժվարությունների, բուլինգի ու բռնության կանխարգելմանը:	
	Կանխարգելիչ աշխատանքներ՝ ուղղված դիսկի խմբում գտնվող սովորողների կրթական, սոցիալական և անձնային խնդիրների նվազեցմանն ու կանխարգելմանը, բուլինգի ու բռնության դեպքերի կանխարգելմանը:	Ուսումնական տարվա ընթացքում
Զարգացնող աշխատանքներ	Աշխատանքներ՝ ուղղված սովորողների անձնային, սոցիալական և մտավոր զարգացմանը:	Ուսումնական տարվա ընթացքում
	Աշխատանքներ՝ ուղղված սովորողների հոգեկան ու հուզական կայունության ձևավորմանը:	Ուսումնական տարվա ընթացքում
	Աշխատանքներ՝ ուղղված օժտված սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:	Ուսումնական տարվա ընթացքում
Շտկողական աշխատանքներ	Շտկողական աշխատանքներ՝ ուղղված սովորողների հուզականային, վարքային, մտավոր զարգացման, հաղորդակցման ունակությունների և հոգեկանի այլ ոլորտների հետ կապված դժվարությունների հաղթահարմանը:	Ուսումնական տարվա ընթացքում
Խորհրդատվություններ, իրազեկման, կանխարգելման աշխատանքներ	Հանդիպումներ մանկավարժական աշխատողների հետ սովորողների հոգեկան առողջության պահպանման, հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ համատեղ աշխատանքի պլանավորման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
	Հանդիպումներ սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների հոգեկան առողջության արդյունավետ կազմակերպման վերաբերյալ աջակցության տրամադրման, իրազեկման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
	Հանդիպումներ սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթական գործընթացի վրա բացասական ազդեցություն ունեցող ընտանեկան խնդրահարույց վերաբերմունքի կանխարգելման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության

	Հանդիպումներ մանկավարժական աշխատողների հետ՝ սովորողների մոտ առկա դժվարությունների հաղթահարման վերաբերյալ արդյունավետ համագործակցության ձևավորման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Հանդիպումներ մանկավարժական աշխատողների հետ նրանց հուզական գրագիտության բարձրացման, հոգեբանական խնդիրների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ նրանց սթրեսի, հուզական սպառման, մասնագիտական այրման կանխարգելման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Խորհրդատվության տրամադրում մանկավարժական աշխատողներին սովորողների հետ աշխատանքում գործնական հոգեբանության կիրառման ուղղությամբ:	Ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
	Անհատական խորհրդատվության տրամադրում ծնողներին սովորողի զարգացման և ընտանեկան դաստիարակության կազմակերպման ուղղությամբ:	Ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
Փաստաթղթեր. հաշվետվություններ	Իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում:	Տարեկան չորս անգամ՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտին
	Սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերի վարում:	Ուսումնական տարվա ընթացքում
Այլ աշխատանքներ	Հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված այլ աշխատանքներ, ինչպես նաև աշխատանքներ, որոնք ծրագրով նախատեսված չեն, սակայն անհրաժեշտ է պլանավորված կամ չպլանավորված իրականացնել՝ ելնելով կոնկրետ ուսումնական հաստատությունում ծագած խնդիրներից ու անհրաժեշտությունից:	Ուսումնական տարվա ընթացքում

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Հոգեբան (անուն, ազգանուն)՝					
Ուսումնական տարի՝					
Սովորողների ընդհանուր թիվը՝					
ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թիվը՝					
ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը, որոնց հետ աշխատում է տվյալ մասնագետը՝					
Բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների ընդհանուր թիվը՝					
Բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների թիվը, որոնց հետ աշխատում է տվյալ մասնագետը՝					
Հh	Գործունեության բնագավառները		Աշխատանքի հիմնական ուղղությունները		
			Տարեկան պլանավորման թիվ	Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
1.	Նախապատրաստական աշխատանքներ և պլանավորում	Իրականացվող գործողություններ			
2.	Դիտարկում	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
3.	Հոգեախտորոշիչ աշխատանքներ	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
4.	Անհատական ուսուցման պլանավորման գործընթաց	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ

5.	Կանխարգելիչ աշխատանքներ	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
6.	Զարգացնող աշխատանքներ	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
7	Շտկողական աշխատանքներ	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
8.	Խորհրդատվություններ, իրազեկման, կանխարգելման աշխատանքներ	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
9.	Այլ աշխատանքներ	Իրականացվող գործողություններ		Ծառայություն ստացող	Կատարման ժամկետ
10.	Փաստաթղթեր. հաշվետվություններ	Իրականացվող գործողություններ			Կատարման ժամկետ

Հոգեբան _____

Ամիս, ամսաթիվ _____

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՔԱՐՏ

Սովորողի անուն, ազգանուն, հայրանունը՝ -

Դասարանը՝ _____

Հետազոտման սկիզբը՝ ____/____/_____ ավարտը՝ ____/____/_____

1. Ինչպե՛ս է սովորողը հաղորդակցվում.

- Ամբողջական նախադասություններով
- 1-2 բառից բաղկացած արտահայտություններով
- Ոչ խոսքային եղանակներով, ժեստերով
- Հաղորդակցման այլընտրանքային միջոցներով

2. Սովորողի իմացական գործընթացների (զգայություն և ընկալում, ուշադրություն, հիշողություն, մտածողություն, երևակայություն) և սովորելու պատրաստականության հոգեբանական գնահատում:

2.1. Իմացական գործընթացների ամփոփ նկարագիր

2.1.1. Ընկալում, ըմբռնում (տեսողական, լսողական, համի, հոտի, շոշափողական)

2.1.2. Ուշադրության որակները (ծավալը, կենտրոնացումը, բաշխումը, փոխանցելիությունը)

2.1.3. Հիշողության գնահատում (կարճապահ, օպերատիվ, տեսողական, լսողական, միջնորդավորված)

2.1.4. Երևակայության գնահատում (վերարտադրողական ստեղծագործական)

2.1.5.1. Մտածողության գնահատում (կոնկրետ-առարկայական, ակնառու-պատկերային, բառատրամաբանական, ստեղծագործական)

2.1.5.2. Մտածողության մտավոր գործառնությունների գնահատում (համեմատություն, վերլուծություն, համադրություն, վերացարկում, կոնկրետացում, դասակարգում, ընդհանրացում, մտահանգում, արտաթում)

2.2.1. Ընդհանուր ինտելեկտի մակարդակի որոշում

2.2.2. Հուզական ինտելեկտի մակարդակի որոշում

2.3. Սովորելու պատրաստականության և դպրոցին պատրաստականության, դպրոցի նկատմամբ վերաբերմունքի հոգեբանական գնահատում

2.4. Ուսուցանելիության շարժընթացի գնահատում

2.5. Սովորողի՝ շրջապատող աշխարհում ընդհանուր կողմնորոշման և կենցաղային գիտելիքների գնահատում:

3. Սովորողի անձնային, վարքային և հուզականային ոլորտների ամփոփ նկարագիրը.

3.1. Սովորողի հոգեվիճակի գնահատում (ակտիվություն, տրամադրության դրսևորումներ, հուզական ֆոն)

3.2. Սովորողի անձնային հատկությունների գնահատում

3.2 Ուսումնական մոտիվացիայի, հաջողության ձգտման պահանջմունքի գնահատում

3.3. Ինքնագնահատականի որոշում

3.4. Տազնապայնության մակարդակի գնահատում

3.5. Վախերի առկայություն/բացակայություն

3.6. Ագրեսիվության մակարդակի գնահատում (խոսքային, ֆիզիկական, ինքնաագրեսիա)

3.7. Գերակտիվության դրսևորումներ

4. Սովորողի մասնակցությունը ընտանեկան, համայնքային և դպրոցական կյանքին

Ոլորտը	Նկարագրություն
Մասնակցություն խմբում	
Մասնակցություն սոցիալական, խաղային կամ ժամանցային գործունեությանը խմբի անդամների հետ	
Խմբում կազմակերպչական գործերի իրականացում, պատասխանատվություն և որոշումների կայացում (հաշվի առնելով տարիքային զարգացման չափանիշները)	
Հաղորդակցումը տարեկիցների հետ	
Հաղորդակցումը մեծահասակների հետ	
Մասնակցություն դպրոցական ուսումնական հաստատությունում	
Կրթական (ակադեմիական) գործունեություն դպրոցում դասընկերների հետ համատեղ	

Մասնակցություն դպրոցում կազմակերպված ցանկացած տեսակի կրթական, խաղային, ժամանցային միջոցառումներին այլ տարիքային խմբերի սովորողների հետ համատեղ (օրինակ՝ համատեղ ժամանց, սպորտ, խմբակներ, հորբի, ստեղծագործական աշխատանք)	
Հաղորդակցումը մյուս սովորողների հետ դպրոցում	
Հաղորդակցումը մեծահասակների հետ դպրոցում	
Մասնակցություն համայնքում	
Մասնակցություն բակում կամ համայնքում կազմակերպված ցանկացած տեսակի խաղային, ժամանցային միջոցառումներին ընկերների հետ համատեղ (խաղեր, համատեղ ժամանց, այցելություններ հանրային վայրեր, օրինակ՝ կինոթատրոն, զբոսայգի, բակային համերգներ)	
Հաղորդակցումը մյուս երեխաների հետ բակում և համայնքում	
Հաղորդակցումը մեծահասակների հետ բակում և համայնքում	
Մասնակցություն կենցաղային և համայնքային գործունեությանը	
Կենցաղային գործեր (օրինակ՝ մեծահասակի օգնությամբ և/կամ ինքնուրույն ճաշ պատրաստել, հագուստները, ավիսները դասավորել, անկողինը հարդարել)	
Մեծահասակի օգնությամբ և/կամ ինքնուրույն կատարել գնումներ	
Մեծահասակի ուղղորդմամբ և/կամ ինքնուրույն մասնակցել բակի մաքրության պահպանմանը, բոյսերի խնամքին	
Աշխատանքային գործունեություն և պատասխանատվություն (օրինակ՝ հանձնարարված առաջադրանքների կատարում)	

5. Այլ դրսևորումներ, դիպարկումներ

Կիրառված գործիքներ՝

_____ի հոգեբանական առանձնահատկությունների հետազոտության տվյալների վերլուծությունը հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրակացությունները.

Աջակցության ոլորտներ՝

Հոգեբան՝ _____
ամսաթիվը ____/____/____

/ստորագրություն, անուն, ազգանուն/

Ծնող՝ _____, ծանոթացա հոգեբանի

եզրակացությանը, որի համար ստորագրում եմ _____

Ստորև ներկայացված է հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի հաշվետվության օրինակելի ձևը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԿՈՂՄԻՑ
 ԻՐԱԿԱՆԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
(2025թ. սեպտեմբեր-օգոստոս)

Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը՝ _____

Հոգեբանի անուն ազգանուն՝ _____

Հաշվետու ժամանակահատված (աճողական)՝ _____

Ընդհանրական տեղեկատվություն՝

- Ուսումնական հաստատությունում սովորողների ընդհանուր թիվը՝ _____
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ընդհանուր թիվը՝ _____
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը, որոնց հետք աշխատում է փոխադրվել մասնագետը՝ _____
- Բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների ընդհանուր թիվը՝ _____
- Բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների թիվը, որոնց հետք աշխատում է փոխադրվել մասնագետը՝ _____

Հ Հ	Աշխատանքի ուղղություններն ըստ գործունեության ձևի	Իրականացվող գործողությունները	Գնահատման ցուցանիշ, չափման միավոր	Տարեկան պլանավորման ցուցանիշ/ Փաստացի կատարված ցուցանիշ		Մեկնաբանություն (մանրամասնել գործողությունները, օրինակ՝ եթե խորհրդատվություն է, ինչ թեմայով է իրականացվել)
	1	2	3	4	5	6
1.	Դիտարկում	Դիտարկումներ՝ ուղղված կրթական միջավայրում հարմարվելու կարողությունների և դժվարությունների, սովորողի ուսուցման գործընթացին նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների, կարգապահական խախտումների, միջանձնային հարաբերություններում	Դիտարկումների քանակ, հատ			

		առաջացած խնդիրների հոգեբանական պատճառների բացահայտմանը:				
		Դիտարկումներ՝ ուղղված բռնության և բուլինգի դեպքերի բացահայտմանը:	Դիտարկումների քանակ, հատ			
			Բացահայտված դեպքերի թիվը, հատ			
			Ներգրավված անձանց թիվը, անձ			
			Հանգուցալուծված դեպքերի թիվը, հատ ³²			
2.	Հոգեախտորոշիչ աշխատանքներ	Սովորողների հոգեբանական առանձնահատկություններ ի ուսումնասիրություն և հոգեախտորոշում:	Իրականացված հետազոտությունների(անհատական և խմբային) թիվ, հատ			
			Անհատական հետազոտում անցած սովորողների թիվ, անձ			
			Խմային հետազոտում անցած սովորողների թիվ, անձ			
		Բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների բացահայտում, գնահատում:	Հետազոտված սովորողների թիվ, անձ			
		Սովորողների ծնողների և/կամ օրինական ներկայացուցիչների անկետավորում, թեստավորում:	Անկետավորման, թեստավորման թիվ, հատ (անհատական, խմբային)			
			Անկետավորված/թեստավորված ծնողների թիվ, անձ			
		Մանկավարժական աշխատողների հաղորդակցման ունակությունների, մոտիվացիայի, հոգեբանական բարեկեցության, հուզական ինտելեկտի, հուզական այրման մակարդակի գնահատում:	Իրականացված գնահատումների թիվ, հատ			
			Անհատական հետազոտում անցած մանկավարժների թիվ, անձ			
			Խմային հետազոտում անցած մանկավարժների թիվ, անձ			
3.	Սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերհանման, անհատական	Մասնակցություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանի մշակման, ընթացիկ	Հանդիպումների թիվ, հատ			

³² Մեկնաբանությունների հատվածում անհրաժեշտ է մանրամասնել, թե ինչ գործողություններ են իրականացվել յուրաքանչյուր դեպքի շրջանակներում, ի՞նչ ուղղորդումներ են եղել:

	ուսուցման պլանավորման գործընթաց	և տարեվերջյան զննահատման աշխատանքներին:				
4.	Կանխարգելիչ աշխատանքներ սովորողների հետ	Աշխատանքներ ուղղված սովորողների հոգեկան առողջության պահպանմանը, զարգացմանն ու հոգեբանական դժվարությունների կանխարգելմանը, ռիսկի խմբում գտնվող սովորողների կրթական, սոցիալական և անձնային խնդիրների նվազեցմանն ու կանխարգելմանը:	Իրականացված միջոցառումների թիվ, հատ			
		Աշխատանքներ՝ ուղղված բուլինգի և բռնության կանխարգելմանը:	Իրականացված միջոցառումների թիվ, հատ			
			Ներգրավված անձանց թիվ,			
5.	Զարգացնող և շտկողական աշխատանքներ	Աշխատանքներ՝ ուղղված սովորողների անձնային, սոցիալական, մտավոր, հոգեկան և հուզական կայունության ձևավորմանը: Աշխատանքներ՝ ուղղված օժտված սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:	Իրականացված անհատական պարապմունքների թիվ, հատ			
			Իրականացված խմբային պարապմունքների թիվ, հատ			
		Աշխատանքներ ուղղված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հուզականային, վարքային, մտավոր զարգացման, հաղորդակցման ունակությունների և հոգեկանի այլ ոլորտների հետ կապված դժվարությունների հաղթահարմանը:	ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվ, անձ			
			Իրականացված անհատական պարապմունքների թիվ, հատ			
		Իրականացված խմբային պարապմունքների թիվ, հատ				
6.	Խորհրդատվությու ններ, իրազեկման և կանխարգելման աշխատանքներ ծնողների և մանկավարժական աշխատողների հետ	Խորհրդատվության տրամադրում ծնողներին՝ հոգեկան առողջության արդյունավետ կազմակերպման, երեխայի զարգացման, ընտանեկան դաստիարակության կազմակերպման, կրթական գործընթացի վրա բացասական ազդեցություն ունեցող	Խորհրդատվություննե րի թիվ, հատ			
			Խորհրդատվություն ստացած անձանց թիվ, անձ			

		ընտանեկան խնդրահարույց վերաբերմունքի կանխարգելման վերաբերյալ:				
		Խորհրդատվության տրամադրում մանկավարժական աշխատողներին սովորողների հոգեբանական առանձնահատկություններ ի, հոգեկան առողջության պահպանման, առկա դժվարությունների հաղթահարման, համատեղ աշխատանքի պլանավորման, համագործակցության և աշխատանքում գործնական հոգեբանության կիրառման հնարավորությունների նպատակով:	Խորհրդատվությունն րի թիվ, հատ			
		Հանդիպումներ մանկավարժական աշխատողների հետ նրանց հուզական գրագիտության բարձրացման, հոգեբանական խնդիրների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման նպատակով:	Խորհրդատվությունն րի թիվ, հատ			
		Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ նրանց սթրեսի, հուզական սպառման, մասնագիտական այրման կանխարգելման նպատակով:	Խորհրդատվությունն րի թիվ, հատ			
		Վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ:	Դասընթացների թիվ, հատ			
			Դասընթացներին ներգրավված անձանց թիվ			
7.	Այլ աշխատանքներ*					

* Այլ աշխատանքներ տողում հաստատության հոգեբանը սահմանում իր կողմից իրականացվող գործողությունները 3-րդ սյունակում, իսկ գնահատման ցուցանիշ, չափման միավորը 4-րդ սյունակում:

ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ՊԼԱՆ*

Հանրակրթական ուսումնական հաստատություն՝ _____

Հոգեբան՝ _____

անուն, ազգանուն

Ամսաթիվ	Գործողության բնույթը (ախտորոշիչ, զարգացնող, շտկող, խորհրդատվական, լուսավորչական, այլ) և/կամ թեման և նպատակը	Ծառայություն ստացողի անուն, ազգանուն կամ դասարանը խումբը	Աշխատանքի ձևաչափը (խմբային, անհատական)	Իրականացվել է/ չի իրականացվել (մեկնաբանել)
1	2	3	4	5

* Այս ձևաթղթում արձանագրվում են նաև այն աշխատանքները, որոնք նախատեսված չեն եղել, սակայն իրականացվել են տվյալ օրվա ընթացքում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ³³

Ոլորտ	Հետազոտության գործիք	Տարիք
Իմացական ոլորտ		
Ընկալում, ըմբռնում (տեսողական, լսողական, շոշափողական)	«Ի՞նչն է պակասում այս նկարում» (Նեմով 2001)	3-6
	«Իմացի՛ր, թե ով է» (Նեմով 2001)	3-6
	«Ի՞նչ առարկաներ են թաքնված նկարներում» (Նեմով 2001)	3-6
	«Էտալոններ» (Վենգեր Ա.)	5-7
	«Ընկալման, ըմբռնման գնահատման մեթոդիկաներ» (Հովհաննիսյան Ս. 2012)	12-15
Ուշադրության որակների գնահատում (ծավալ, կենտրոնացում, բաշխում, փոխանցելիություն)	«Գտիր և ջնջիր» (Նեմով 2001)	3-6
	«Դիր նշանները» (Նեմով 2001)	3-6
	«Լանդոլտի օղակները» (Նեմով 2001)	6-15
	«Ուշադրության արդյունավետության և կայունության գնահատում» (Նեմով 2001)	6-15
	«Ուշադրության փոխանցելիության գնահատում» (Նեմով 2001)	6-15
	«Ուշադրության փոխանցելիության գնահատում» (Նեմով 2001)	6-15
	«Ուշադրության ծավալի որոշում» (Նեմով 2001)	6-15

³³Առաջարկվող գործիքակազմը չի սահմանափակում ուսումնական հաստատության հոգեբանին՝ ըստ անհրաժեշտության կիրառել նաև հոգեբանական գիտության մեջ հայտնի և հուսալի, սակայն այս ցանկում չներառված այլ գործիքներ: Գործիքակազմում 3-6 տարեկանների համար նախատեսված գործիքները ներառված են 5-6 տարեկան սովորողների գնահատման, ավստորոշման գործընթացում կիրառելու նպատակով:

	«Ուշադրության կայունության և բաշխման գնահատում թվային աղյուսակների միջոցով» (Նեմով 2001)	11-19
	«Ուշադրության կենտրոնացվածության և փոխանցելիության գնահատում 49 նիշանոց երկգույն թվային աղյուսակի միջոցով» (Նեմով 2001)	11-19
	«Տուլուզ-Պերոնի մեթոդիկա» (Յասյուկովա Լ. Ա.)	6-16
Հիշողության գնահատում (կարճատև, օպերատիվ, տեսողական, լսողական, միջնորդավորված)	«Ինչո՞վ լրացնենք գորգը» (Նեմով 2001)	3-6
	«Հիշի՞ր և լրացրու կետերը» (Նեմով 2001)	4-6
	«Ճանաչի՞ր պատկերները» (Նեմով 2001)	3-6
	«Մտապահի՞ր պատկերները» (Նեմով 2001)	3-6
	«Մտապահի՞ր թվերը» (Նեմով 2001)	5-7
	«Տասը բառ» (Վենգեր Ա.Լ.2001)	3-6
	«Կարճատև տեսողական հիշողության ծավալի որոշում» (Նեմով 2001)	6-9
	«Օպերատիվ տեսողական հիշողության գնահատում» (Նեմով 2001)	4-9
	«Կարճատև լսողական հիշողության ծավալի գնահատում» (Նեմով 2001)	6-10
	«Լսողական օպերատիվ հիշողության գնահատում» (Նեմով 2001)	6-10
	«Միջնորդավորված հիշողության ախտորոշում» (Նեմով 2001)	6-10
	«Մտապահման գործընթացի շարժընթացային առանձնահատկությունները» (Նեմով 2001)	6-10
Երևակայության գնահատում (վերարտադրողական ստեղծագործական)	«Պատմություն հորինիր» (Նեմով 2001)	3-6
	«Ինչ-որ բան նկարիր» (Նեմով 2001)	3-6
	«Վերբալ ֆանտազիա» (Նեմով 2001)	6-10

	«Նկար» (Նեմով 2001)	6-10
	«Քանդակ» (Նեմով 2001)	6-10
Մտածողության գնահատում (կոնկրետ-առարկայական, ակնառու-պատկերային, բառատրամաբանական, ստեղծագործական)	«Անհեթեթություններ» (Նեմով 2001)	3-6
	«Տարվա եղանակներ» (Նեմով 2001)	4-6
	«Նշագծի՛ր» (Նեմով 2001)	4-6
	«Անցի՛ր լաբիրինթոսը» (Նեմով 2001)	4-6
	«Հասկացությունների հստակեցում, երկույթների պատճառահետևանքային կապերի և տարբերությունների պարզաբանում» (Նեմով 2001)	6-10
	«Ստեղծագործական մտածողության թեստեր» (Տունիկ Ե.Ե.)	5-15
	«Ռուբիկի Կուբիկը» (Նեմով 2001)	6-10
	«Տրամաբանական-քանակական հարաբերություններ» (Նեմով 2001)	11-19
Մտածողության գործառնությունների գնահատում (հասկացություն, դատողություն, մտահանգում, վերլուծություն, համադրություն, ընդհանրացում)	«Ի՞նչն է ավելորդ» (Նեմով 2001)	4-6
	«Բաժանի՛ր խմբերի» (Նեմով 2001)	4-6
	«Հասկացությունների ձևավորում» (Նեմով 2001)	6-10
Ընդհանուր ինտելեկտի մակարդակի (IQ) գնահատում	«Գունավոր աղյուսակներ» (Զ. Ռավեն)	5-11
	«Պրոգրեսիվ աղյուսակներ» (Զ. Ռավեն)	12-16
Սովորելու պատրաստականության և դպրոցին պատրաստականության, դպրոցի նկատմամբ	«Դպրոցում սովորելու ընդունակություն» (Վիցլակ Գ.)	5-7
	«Դպրոցական պատրաստվածության թեստ» (Կերն Իերասել)	5-7

վերաբերմունքի հոգեբանական գնահատում	«Երեխայի վերաբերմունքը դպրոցում սովորելուն» (Նեմով 2001)	6-10
Ուսուցանելիության շարժընթացի գնահատում	«Սովորի՛ր բառերը» (Նեմով 2001)	4-6
Սովորողի՝ շրջապատող աշխարհում ընդհանուր կողմնորոշման և կենցաղային գիտելիքների գնահատում	Սովորողների՝ շրջապատող աշխարհում ընդհանուր կողմնորոշման և կենցաղային գիտելիքների գնահատում (Նեմով 2001)	6-10
Հոգեվիճակի գնահատում (ակտիվություն, տրամադրության դրսևորումներ, հուզական ֆոն)	«Տուն, ծառ մարդ» (Վենգեր Ա. Լ. 2001)	4-12
	«Գեղեցիկ նկար» (Վենգեր Ա. Լ. 2001)	4-12
Սովորողի անձնային հատկությունների գնահատում	«Ռ. Քեթթելի անձնային հարցարանի մանկական տարբերակը» (Նեմով 2001)	6-10
Մոտիվացիայի, հաջողության ձգտման պահանջմունքի գնահատում	«Հիշի՛ր և վերարտադրի՛ր նկարը» (Նեմով 2001)	4-6
	«Հաջողության հասնելու մոտիվացիայի գնահատում»(Նեմով 2001)	6-10
	«Հաջողության հասնելու և անհաջողություններից խուսափելու մոտիվացիայի չափում» (Նեմով 2001)	11-19
Ինքնագնահատականի ախտորոշում	«Ինչպիսի՞ն եմ ես» (Նեմով 2001)	3-6
	«Հայելի» Վ.Ս. Մուխինա, Օ. Բ. Բելանովսկայա (Բելանովսկայա Օ.Բ. 2004)	3-6
	«Աստիճան» Օ.Բ. Բելանովսկայա (Բելանովսկայա Օ.Բ. 2004)	4-10
	«Դեմք-Ռուբինշտեյնի՝ ինքնագնահատականի մեթոդիկա» (Դեմք-Ռուբինշտեյն)	6-10

	Մեթոդիկա «Երեք գնահատական (Լիպկինա Ա. Ի.)	6-10
Տագնապայնության մակարդակի գնահատում	«Ընտրի՛ր անհրաժեշտ դեմքը» (Նեմով 2001)	3-10
Վախերի ախտորոշում	«Վախերը տնակում» (Զախարովա Ա. Ի.)	6-12
Ագրեսիվության մակարդակի գնահատում (խոսքային, ֆիզիկական, ինքնաագրեսիա)	«Ագրեսիվության մակարդակի գնահատում» (Լյուտովա Ե. Կ 2002)	3-7
	«Կակտուս» (Պանֆիլովա Մ. Ա.)	4-12
Գերակտիվության դրսևորումներ	«Իմպուլսիվության ցուցիչները» (Լյուտովա Ե. Կ. 2002)	3-7
	«Գերակտիվ երեխայի բացահայտման չափորոշիչները» (Լյուտովա Ե. Կ. 2002)	3-7
Հաղորդակցումը տարեկիցների և մեծահասակների հետ	«Ինչպիսի՞ն է երեխան շրջապատողների հետ հարաբերություններում» փորձագիտական հարցարան (Նեմով 2001)	3-6
	«Հաղորդակցական և անձնային հարցարան» փորձագիտական հարցարան(Նեմով 2001)	3-6
	«Գործողության ընտրություն» (Նեմով 2001)	3-6
	«Ընտանիքի նկար» (Վենգեր Ա. Լ. 2001)	3-12
	«Կենդանիների ընտանիք» (Վենգեր Ա.Լ.2001)	3-12
	«Սոցիոմետրիա» (Սմիռնովա Ե. Օ. 2005)	3-12
	«Նավապետը» (Սմիռնովա Ե. Օ. 2005)	3-12
	«Պրորբլեմային իրադրությունների մեթոդ» (Սմիռնովա Ե. Օ. 2005)	4-12
	«Ռենե Ժիլի մեթոդիկան»	4-12
	«Անավարտ պատմություններ» (Սմիռնովա Ե. Օ. 2005)	4-12
	«Ռոզոնցվեյգի թեստի մանկական տարբերակը» (Սմիռնովա Ե. Օ. 2005)	4-12

	«Ձեռնոցներ» (Ցուկերման)	3-12
	«Հաղորդակցման ունակությունների փորձագիտական գնահատման հարցարան»(Նեմով 2001)	6-10

Ծնողների և մանկավարժական աշխատողների համար նախատեսված գործիքակազմ

Ոլորտներ և հետազոտության գործիքներ
Ծնողական վերաբերմունքի թեստ (Վարգա Ա. Յա, Ստոլին Վ.Վ.)
Միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկա (Տ. Լիրի)
Հուզական ինտելեկտի թեստ (Դ. Վ. Լյուսին)
Ն. Հովի՝ Հուզական ինտելեկտի ախտորոշման մեթոդիկա (Իլյին 2001)
Վ. Բոյկո Հուզական այրման մակարդակի ախտորոշման մեթոդիկա (Իլյին 2002)
Պրոֆեսիոնալ սթրեսի սանդղակ (Լիտվինկով Ա.)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հոգեբանական հետազոտության գործիքակազմին կից

- Արզումանյան Ա., Մկրտչյան Ա., Սարգսյան Վ.(2002). Կիրառական հոգեբանության պրակտիկում, «Զանգակ 95», Երևան, էջ391:
- Հոգեախտորոշիչ թեստերի և մեթոդիկաների ժողովածու (2018). կազմողներ՝ Ազիզյան Ն., Հովհաննիսյան Օ., «Տիր» հրատարակչություն, Երևան, էջ 413:
- Պերցեսպտիվ գործընթացների հոգեբանության պրակտիկում (2012)Ուսումնամեթոդական ձեռնարկ, կազմ. Ս. Վ. Հովհաննիսյան, Է. Վ. Ասրիյան և ուրիշներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն:
- Белановская О. В. (2004). “Диагностика и коррекция самосознания дошкольников” Высшая школа,.
- Венгер А.Л. (2001). “Психологическое консультирование и диагностика” Практическое руководство. “Генезис”, М. Часть 1.
- Венгер А.Л. (2003).Психологические рисуночные тесты: Иллюстрированное руководство. – М.: ВЛАДОС-ПРЕСС, – 160 с:
- Венгер Л.Методика «Эталоны» для оценки развития восприятия современных старших дошкольников, 20.11.2024.

8. Вицлак Г. Тест “Способность к обучению к школе”, 20.11.2024.
9. Захарова А. И. «Страхи в домиках», 20.11.2024.
10. Ильин Е.И. (2001). Эмоции и чувства. – СПб Питер, – С.633-634.
11. Ильин Е. П. (2002). Мотивация и мотивы. — СПб.: Питер, — С. 467
12. Тест Керна-Йирасека на готовность к обучению в школе, 20.11.2024.
13. Липкина А. И.Методика “Три оценки” 20.10.2024.
14. Лири Т. «Методика диагностики межличностных отношений», 25.11.2024.
15. Литвенков А. Шкала профессионального стресса, 25.11.2024.
16. Лютова Е.К., Моница Г. Б., (2002).Тренинг Эффективного взаимодействия с детьми: издательство «Речь», Санкт-Петербург.
17. Люсин Д. В., «Тест эмоционального интеллекта», 25.11.2024.
18. «Методика дембо-рубинштейн. Самооценка младших школьников», 27.11.2024.
19. Немов Р. С. (2001). Психология. Книга 3, М., Владос.
20. Опросник родительского отношения (А.Я.Варга, В.В.Столин), 25.11.2024.
21. Панфилова М.А. (2001). Игротерапия общения. – М.
22. Прогноз и профилактика проблем обучения в начальной школе / Л.А. Ясюкова. – СПб: ИМАТОН, 2006. – 204с.
23. Психологическая карта дошкольника. (2008). Глав ред. Д. И. Фельдштейн, “МОДЭК”, М., 2008.
24. Туник Е.Е. Психодиагностика творческого мышления. Креативные тесты, 20.11.2024.
25. Смирнова Е. О., Холмогорова В. М. (2005).“Межличностные отношения дошкольников. Диагностика, проблемы, коррекция. “Владос”, М.
26. Цукерман Г. А. «Рукавички», 20.11.2024.
27. Raven G. (1998).Progressive Matrices. Psychodiagnostica, narodny rodnik, Bratislava. P. 60.

ՍՈՎՈՐՈՂԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՔԱՐՏ

Բովանդակություն

1. Դասի ընթացքում իմացական հետաքրքրության դրսևորման դիտարկում
2. Ինքնուրույն մտավոր գործունեության դիտարկում
3. Մտավոր գործունեության դիտարկում
4. Ուշադրության դիտարկում
5. Հիշողության դիտարկում
6. Սովորողի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դիտարկում
7. Հուզական առանձնահատկությունների դիտարկում
8. Խառնվածքի դիտարկում
9. Հանդուրժողականության և համառության դիտարկում
10. Խմբում սովորողի վարքի դիտարկում

Գնահատման չափանիշներ	<p>2 միավոր - Դրսևորվում է լիարժեք</p> <p>1 միավոր - Դրսևորվում է երբեմն</p> <p>0 միավոր- 2 ի դրսևորվում</p>
-----------------------------	--

1. Դասի ընթացքում սովորողի իմացական հետաքրքրության դրսևորման դիտարկում

Իմացական հետաքրքրության ցուցանիշներ՝

1. Հարցեր է տալիս:
2. Աշխատանքում աչքի է ընկնում ինտելեկտուալ ինքնուրույնությամբ:
3. Նախաձեռնողականություն է դրսևորում խնդրի լուծման գործընթացում:
4. Մասնակցում է տարբեր հարցերի քննարկումներին:
5. Ակտիվ է ուսուցչի կողմից դասի բացատրության ընթացքում:
6. Ձգտում է կիսվել իր ունեցած տեղեկատվությամբ:
7. Ձգտում է կատարել հանձնարարությունը տարբեր եղանակներով:
8. Արտահայտում է իր կարծիքը:
9. Լրացնում է դասընկերների պատասխանները:
10. Տիրապետում է մտածողության տրամաբանական եղանակներին:
11. Կարողանում է կատարել հանձնարարությունները առանց ուսուցչի օգնության:
12. Աշխատում է կենտրոնացած՝ առանց շեղվելու:
13. Աշխատանքում դրսևորում է կազմակերպվածություն:
14. Սկսած գործն ավարտին է հասցնում:
15. Չի խուսափում բարդ առաջադրանքներից:
16. Բարդ առաջադրանքների կատարման ընթացքում ցուցաբերում է համառություն:
17. Իր նախաձեռնությամբ ընտրում է բարդ խնդիրներ:

18. Արագ ներգրավվում է դասապրոցեսին:
19. Տիրապետում է ուսումնական-կազմակերպչական կարողություններին:
20. Չի հանգստանում, մինչև չի հասկանում հարցը:
21. Օգնում է ընկերներին:
22. Դժգոհում է, երբ ստիպված ընդհատում է աշխատանքը:
23. Ստուգում է աշխատանքը:
24. Հաճույքով է կատարում հանձնարարությունները:
25. Յուրահատուկ հետաքրքրություն է դրսևորում այն հանձնարարությունների նկատմամբ, որոնք պահանջում են ինտելեկտուալ լարվածություն:
26. Վրդովվում է, երբ չի կարողանում կատարել առաջադրանքը:
27. Ակնհայտ ուրախանում է իր հաջողություններից:
28. Հուզականորեն է արձագանքում ձախողումներին:

2. Ինքնուրույն մտավոր գործունեության դիտարկում

Սովորողները կարողանում են.

1. Ներկայացնել տեքստը սեփական բառերով
2. Բաժանել տեքստը տրամաբանական միավորների և կազմել պլան
3. Համակարգել նյութը
4. Կատարել վերլուծություն, համեմատություն, ենթադրություններ անել
5. Օգտվել աղբյուրներից, այլ գրականությունից
6. Օգտվել բառարաններից
7. Ներկայացնել տեքստը գրաֆիկորեն
8. Ստեղծել տրամաբանորեն ավարտուն խոսք
9. Համեմատել և բացատրել նյութը
10. Ձևավորել իմացական խնդիրը, որն առկա է տեքստի մեջ
11. Արտահայտել սեփական վերաբերմունքը մատուցվող նյութի փաստերի և երևույթների վերաբերյալ
12. Ինքնուրույն ձևակերպել հարցեր
13. Տարրական դիտարկումներ կատարել ուսումնասիրվող նյութի վերաբերյալ
14. Գտնել ուսումնասիրվող խնդրի լուծման տարբեր ուղղություններ
15. Գտնել յուրացված գիտելիքները կյանքում կիրառելու միջոցներ

3. Մտավոր գործունեության դիտարկում

1. Արա՞գ է արձագանքում ուսուցչի հարցերին ի պատասխան (ձեռք է բարձրացնում, կարողանում է անմիջապես հարցից հետո պատասխանել, երկար է մտածում և այլն):
2. Ինչպիսի՞ նյութն է ավելի լավ մտապահում (զննակա՞ն, թե՞ բառային):
3. Իմաստավորվա՞ծ, թե՞ մեխանիկորեն է մտապահում, կարողանո՞ւմ է ինքնուրույն բերել օրինակներ:
4. Կարողանո՞ւմ է ինքնուրույն կատարել եզրակացություններ:

4. Ուշադրության դիտարկում

1. Հոգեբանի կողմից սովորողի ուշադրության կենտրոնացմանն ուղղված գործողությունների համառոտ նկարագրություն: Ինչպե՞ս է դրսևորում իրեն սովորողը:
2. Դասի տարբեր փուլերում սովորողի ուշադրության տարբեր տեսակների դրսևորումների առանձնահատկությունները:
 - Ուշադրության կայունություն, շարունակականություն, ուշադրության շեղման պատճառները,
 - Ուշադրության բաշխումը դասի ընթացքում,
 - Ուշադրության տեղափոխումը ուսումնական գործընթացի տարբեր առարկաների վրա:
 - Ուշադրության տեսակների փոփոխություն /կամաժին, ոչ կամաժին, հետկամաժին/:
3. Ուշադրության կախվածությունը ուսումնական նյութի առանձնահատկություններից, կոնկրետ ուսուցչից, կոնկրետ առարկայից:

5. Հիշողության դիտարկում

1. Հոգեբանի կողմից սովորողի հիշողության զարգացմանն ուղղված գործողությունների համառոտ նկարագրություն: Ինչպե՞ս է դրսևորում իրեն սովորողը:
2. Դասի տարբեր փուլերում սովորողի հիշողության տարբեր տեսակների դրսևորումների առանձնահատկությունները:
 - Հիշողության գործընթացների (մտապահում, պահպանում, վերարտարդրում, մոռացում) առանձնահատկությունները
 - Հիշողության ծավալը
 - Հիշողության տեսակները
 - Հիշողության տեսակների փոփոխություն (կամաժին, ոչ կամաժին):
3. Հիշողության կախվածությունը ուսումնական նյութի առանձնահատկություններից, կոնկրետ ուսուցչից, կոնկրետ առարկայից:

6. Սովորողի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների դիտարկում

6.1.

1. Ընդունակ է արդյոք սովորողը երկար ժամանակ կատարել ոչ հետաքրքիր աշխատանքը:
2. Կարողանո՞ւմ է հաղթահարել դժվարություններն ու անհաջողությունները:
3. Ունի՞ արդյոք ձգտում կամ հետաքրքրություն ավելի բարդ հանձնարարությունների նկատմամբ:
4. Նրա մոտ նկատվո՞ւմ է համառություն, նպատակասլացություն:
5. Գործողություններում ինքնուրո՞ւյն է:

6.2.

1. Աշխատունակ է սովորողը:
2. Խոսքում և գործողություններում զրո՞ւսպ է:
3. Շփման մեջ ակտի՞վ է:
4. Արա՞գ է որոշումներ ընդունում:
5. Նրա մոտ արագ և կայո՞ւն են ձևավորվում հմտություններն ու կարողությունները:
6. Գործողություններում, խոսքում դանդաղաշա՞րժ է:
7. Կարողանո՞ւմ է ուշադրությունը արագ կենտրոնցանել տարբեր առարկաների վրա:

6.3.

1. Շփման մեջ արագաշարժ և թեթև՞ է:
2. Արա՞գ է սովորում և նույնքան արագ էլ մոռանում:
3. Արա՞գ է հարմարվում նոր իրավիճակներին և մարդկանց:
4. Խոսքն ու շարժումները, միմիկան և մարմնի լեզուն վա՞ռ են արտահայտված:

7. Հույզերի արտաքին դրսևորումների դիտարկում

➤ Վարք

- 1 – Անտարբերություն ամեն ինչի նկատմամբ: Քնկոտություն, հաճախ հորանջում է, ցածր ռեակտիվություն:
- 2 – Վարքը չի տարբերվում սովորական վարքից, գործնականություն,
- 3 – Անհանգստություն, շարժունություն/կարծես ասեղների վրա լինի/,
- 4 – Տրամադրության հաճախակի փոփոխություն, դյուրագրգիռություն

➤ Միմիկա, պանտոմիմիկա

- 1 - Դեմքը անարտահայտիչ է, բերանը՝ բաց,
- 2 - Միմիկան և պանտոմիմիկան չեն տարբերվում սովորականից
- 3 - Դեմքին կա որոշակի լարվածություն,
- 4 - Շարժումները վառ են արտահայտված
Շարժումներ

- 1 – Շարժումները դանդաղ են, թույլ:
- 2 – Շարժումները հանգիստ են, թեթև:
- 3 – Շարժումները կտրուկ են, հանկարծակի, կան ավելորդ շարժումներ:
- 4 – Շարժումները անկանխատեսելի են, շարժում է ամբողջ մարմինը:

➤ *Մարմնի դիրքը*

- 1 – Դիրքը անհարմարավետ է, սակայն աչքի է ընկնում կայունությամբ և տևականությամբ:
- 2 – Դիրքը հարմարավետ է, անմիջական:
- 3 – Դիրքը հաճախ փոխում է:
- 4 – Անընդհատ շարժվում է:

➤ *Խոսք*

- 1 – Խոսքը դանդաղ է, թույլ, ոչ վառ, ձայնը ցածր է:
- 2 – Խոսքը սովորական:
- 3 – Խոսքը արագ է, բարձր, արտահայտիչ:
- 4 – Խոսքը հստակ է, ձայնի ինտոնացիան հաճախ փոխվում է:

8. Խառնվածքի և բնավորության դիտարկում

➤ *Հուզականություն*

- ա) Արագ և արտահայտիչ է հակազդում խրախուսանքին:
- բ) Հեշտ է ուրախանում, ժպտում, ունի ակտիվ ժեստեր:
- գ) Բուռն է արձագանքում հաջողություններին ու անհաջողություններին:

➤ *Հակազդման տեսակ*

- ա) Արագ և աշխույժ շարժումներ:
- բ) Արագ և աշխույժ խոսք:
- գ) Արագ է պատասխանում հարցերին:

➤ *Ակտիվություն*

- ա) Արագ և ակտիվորեն հաղթահարում է դժվարությունները:
- բ) Երկար է առույգ մնում, և չի հուսահատվում անհաջողություններից:
- գ) Հակված է սկսածը ավարտին հասցնել:

➤ *Ռեակտիվություն*

- ա) Պատասխանում է առանց մտածելու, հաճախ՝ անտեղի:
- բ) Հաճախ է ավերից դուրս գալիս, բռնկուն է, կոնֆլիկտային:
- գ) Անհամբեր է, ինչ-որ պատմություն լսելիս միանգամից ոգևորվում է և ընդհատում այն ձայնարկություններով:

➤ *Էքստրավերտություն-ինտրավերտություն*

- ա) Մեծ հետաքրքրությամբ հետևում է այն ամենին, ինչ կատարվում է շուրջը, հակված չէ ինքնամոլությունն ու պասիվության:
- բ) Սիրում է կատարել այնպիսի հանձնարարություններ, որոնք պահանջում են շփում այլ մարդկանց հետ:

գ) Հեշտ է հիշում մարդկանց դեմքը, կենսագրության մանրամասները:

➤ *Ռիզիկոյություն-պլաստիկություն*

բ) Դժվարությամբ է հարմարվում նոր մարդկանց և իրավիճակներին, երկար է հիշում նրանց և պատմում նրանց մասին:

գ) Դժվարությամբ է հարմարվում նոր պայմաններին կամ բաժանվում իր հին իրերից:

դ) Դժվարությամբ է անցնում մի գործից մյուսին:

ե) Դժվարությամբ է անցնում մի էմոցիայից մյուսին:

➤ *Տազնապայնություն*

ա) Ավելի շատ մտածում է հնարավոր անհաջողության, քան բուն աշխատանքի մասին

բ) Բարձր է սխալներից խուսափելու ձգտումը, հակված է մի քանի անգամ ստուգել կատարած աշխատանքը:

գ) Դժվարանում է ապասել:

դ) Անհնձնավստահ է, չի հավատում իր ուժերին, հեշտ է ընկնում մտորումների մեջ, կասկածամիտ է:

ե) Պատասխանատու է, ժամանակից շուտ է կատարում հանձնարարությունները

➤ *Շփվողականություն*

ա) Արագ և հեշտ է ծանոթանում օտար մարդկանց հետ

բ) Ավելի շատ սիրում է խոսել, քան լսել ուրիշներին

գ) Ունի շատ ընկերներ և շփման լայն դաշտ

➤ Խառնվածքի տիպի որոշում

Խառնվածքի որակներ	Խառնվածքի տեսակ			
	Սանգվինիկ	Խոլերիկ	Ֆլեգմատիկ	Մելանխոլիկ
Հուզական գրգռվողականություն	բարձր	բարձր	ցածր	բարձր
Հակազդման տեմպ	արագ	արագ	դանդաղ	դանդաղ
Ակտիվություն	բարձր	բարձր	բարձր	ցածր
Ռեակտիվություն	բարձր	բարձր	ցածր	ոչ բարձր
Էքստրավերսիա-ինտրովերսիա	էքստրավերտ	էքստրավերտ	ինտրովերտ	ինտրովերտ
Ռիզիկոյություն-պլաստիկություն	պլաստիկ	ռիզիկո	ռիզիկո	ռիզիկո
Տազնապայնություն	ցածր	ցածր	ցածր	բարձր
Շփվողականություն	բարձր	բարձր	բարձր	ցածր

9. Հանդուրժողականության և համառության դիտարկում

➤ **Հուզականության դիտարկում**

1. Ինչպե՞ս է սովորողը հակազդում քննադատությանը, մասնավորապես իրեն ուղղված կտրուկ արտահայտություններին՝:

2. Ինչպե՞ս է հակազդում իր համար նշանակալի իրավիճակներում հաղթանակներին և պարտություններին:

3. Կարողանո՞ւմ է վեճի ընթացքում հանգիստ ներկայացնել իր կարծիքը

4. Կարողանո՞ւմ է մինչև վերջ լսել զրուցակցին:

5. Կարողանո՞ւմ է վերահսկել իր հուզական ապրումները:

➤ **Համառության դիտարկում**

1. Մի՞շտ է սկսած գործը ավարտին հասցնում:

2. Կարողանո՞ւմ է արդյոք մեծ ջանքեր գործադրել նպատակին հասնելու համար

3. Նպատակին հասնելու համար կարող՞ է հաղթահարել հոգնածությունը, ցավը կամ թուլությունը:

10. Դասարանում սովորողի վարքի դիտարկում:

1. Ինչպե՞ս է սովորողը կատարում հասարակական, հանրագուտ աշխատանքները:

2. Ինչպե՞ս է վերաբերվում խմբին, կոլեկտիվին:

3. Ինչպե՞ս է վերաբերվում ուսուցչի դիտողություններին:

4. Ինչպե՞ս է վերաբերվում գնահատականին:

5. Ինչպե՞ս է վերաբերվում համադասարանցիներին:

6. Ինչպիսի՞ վիճակում են նրա հագուստը, գրենական պիտույքները, գրքերը:

Ամփոփում

Հոգեբան՝ _____ /_____/_____

/ստորագրություն, անուն, ազգանուն/

**Հարցաթերթիկ (առաջարկվող հարցերի մոտավոր շրջանակ) սովորողի
ծնողների հետ զրույցի համար**

1. Հղիությունը և ծննդաբերությունը ինչպե՞ս են ընթացել:
2. Ինչպե՞ս է ընթացել երեխայի վաղ զարգացումը:
3. Մանկական ի՞նչ հիվանդություններ է տարել երեխան:
4. Արդյո՞ք ընտանիքում այլ երեխաներ կան:
5. Ընտանիքում տվյալ երեխան որերո՞րդն է:
6. Արդյո՞ք երեխայի ընտանիքը լիարժեք կազմ ունի:
7. Եթե ընտանիքը լիարժեք չէ, ապա ծնողներից ո՞ւմ հետ է ապրում երեխան, ինչպե՞ս են կազմակերպվում մյուս ծնողի հետ հանդիպումները:
8. Ո՞րն է ծնողների ամուսնալուծության պատճառը:
9. Քանի՞ անդամից է բաղկացած ընտանիքը, որում ապրում է երեխան:
10. Ինչպիսի՞ կենցաղային պայմաններում է ապրում երեխան: Ունի՞ առանձին սենյակ:
11. Որտե՞ղ և ո՞ւմ հետ է քնում երեխան:
12. Հաճա՞խ են արդյոք ընտանիքում կոնֆլիկտներ լինում:
13. Ընտանիքում կա՞ն անդամներ, որոնք դեպրեսիայի, թմրադեղերի, ալկոհոլի նկատմամբ հակում ունեն:
14. Երեխայի ընտանիքի անդամներից որևէ մեկը ունեցե՞լ է ուշադրության դեֆիցիտի ախտանիշ, էպիլեպսիա, մտավոր ֆունկցիայի խանգարում, ալերգիա, լսողության խանգարումներ կամ այլ հիվանդություններ:
15. Երեխայի ընտանիքի անդամներից որևէ մեկը հետազոտվո՞ւմ է նյարդաբանի կամ հոգեբույժի մոտ:
16. Երեխայի ընտանիքի անդամներից որևէ մեկն ունի՞ ձախլիկություն:
17. Երեխայի ընտանիքի անդամներից որևէ մեկն ունի՞ վառ արտահայտված ընդունակություններ:
18. Եղե՞լ են արդյոք ընտանիքում ինքնասպանության դեպքեր:
19. Երեխային բնորո՞շ են հոգնածություն և թուլություն, քրտնարտադրություն, գլխապտույտ, թթվածնի անբավարարություն, հաճախակի փորացավ, սրտխառնոց, գլխացավ, ալերգիկ երևույթներ, գիշերային անմիզապահություն:
20. Երեխային բնորո՞շ են նյարդային շարժումները (օրինակ՝ ոտքերը ճոճելը):
21. Երեխան դժվարանո՞ւմ է հեքիաթը մինչև վերջ լսել:
22. Արդյո՞ք երեխան ուսման ընթացքում ավելի թույլ արդյունք է ցույց տալիս, քան իր ընդունակություններն են թույլ տալիս:
23. Երեխան հաճա՞խ է խախտում կանոնները:
24. Չափից ավելի էքսպրեսիվ է:
25. Չգայո՞ւն է տրամադրության անկումների նկատմամբ:
26. Ենթարկվո՞ւմ է կանոններին, հրահանգներին:
27. Լինո՞ւմ է ընկճված վիճակում:

28. Սիրո՞ւմ է նոր իրեր, արդյո՞ք վերցնում է դրանք միանգամից:
29. Հաճա՞խ է զարմանում:
30. Հեշտությա՞մբ է ուժեղ զայրույթը դրսևորում:
31. Ո՞րն է երեխայի առաջատար ձեռքը:
32. Երեխային հե՞շտ է շեղել առաջադրանքի կատարումից:
33. Արդյո՞ք հաճախ է փոփոխվում երեխայի տրամադրությունը:
34. Երեխան դժվարությա՞մբ է հաղթահարում իր զայրույթը: Կարողանո՞ւմ է արդյոք կառավարել իր զայրույթը:
35. Արդյո՞ք երեխան հակված չէ նսեմացնելու իր ձեռքբերումները:
36. Սովորություն ունի՞ հեռուստացույցի ալիքները հաջորդաբար անընդհատ փոխել:
37. Երբ երեխան լսում է, նրա ձեռքերը ինչ-որ բանով զբաղվա՞ծ են (մեքենայով խաղում է կամ գծեր է քաշում):
38. Սիրո՞ւմ է հեռուստացույց դիտել:
39. Երեխան ագրեսի՞վ է, ագրեսիայի ո՞ր ձևն է ավելի հաճախ դրսևորում՝ խոսքայի՞ն, թե՞ ոչ խոսքային:
40. Երեխայի մոտ առկա՞ են վախեր:
41. Որքանո՞վ է երեխան ճիշտ կատարում մեծահասակների հրահանգները:
42. Որքանո՞վ է զարգացած երեխայի շարժումների կոորդինացիան:
43. Երեխան դժվարանո՞ւմ է սկսել առաջադրանքների կատարումը:
44. Ձեր երեխան անհանգի՞ստ է:
45. Կարողանո՞ւմ է արդյոք երեխան գաղտնիք պահել:
46. Հաճա՞խ է երեխան հրաժարվում կատարել մեծահասակների պահանջները:
47. Արդյո՞ք երեխան ստելու սովորություն ունի:
48. Ի՞նչ մակարդակում է երեխայի ինքնագնահատականը:
49. Ի վիճակի՞ է արդյոք երեխան երկար ժամանակ սպասել խրախուսանքի:
50. Ինչպե՞ս է երեխան հակազդում մեծահասակների դիտողություններին:
51. Հաճա՞խ է արդյոք երեխան մոռանում կատարել մեծահասակների հանձնարարությունները:
52. Արդյո՞ք երեխան քնի խանգարման խնդիր ունի:
53. Որքա՞ն երկար է քնում երեխան:
54. Ինչպիսի՞ն է երեխայի մանր մոտորիկայի զարգացման մակարդակը:
55. Կարողանո՞ւմ է արդյոք երեխան հաշվի առնել իր վարքի հետևանքները:
56. Պարապմունքների, դասերի ընթացքում դժվարանո՞ւմ է սպասել իր հերթին:
57. Հաճա՞խ է արդյոք երեխան փչացնում իրերը:
58. Հաճա՞խ է արդյոք երեխան իր նախաձեռնությամբ կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծում:
59. Հաճա՞խ եք ստիպված լինում տանը, դպրոցում կամ զբոսանքի ժամանակ երեխային դիտողություն անել:
60. Արդյո՞ք երեխան դպրոցում ավելի դժվարությամբ է առաջադրանքը կատարում, քան տանը:

**Դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտի կայունության որոշման և բռնության
ռիսկի գնահատման հարցարան**

4.1 Ուսուցիչների համար

1. Արդյո՞ք դպրոցում եղել են դեպքեր, երբ սովորողներին վնասվածք են պատճառել:
2. Արդյո՞ք դպրոցում եղել են դեպքեր, երբ ուսուցիչներից որևէ մեկին վնասվածք են պատճառել:
3. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների նկատմամբ վերբալ բռնություն է կիրառվել՝ ծաղրանք, անվանարկում, վիրավորական խոսքեր և այլն:
4. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սուսուցչի նկատմամբ վերբալ բռնություն է կիրառվել՝ ծաղրանք, անվանարկում, վիրավորական խոսքեր և այլն:
5. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների նկատմամբ տնտեսական բռնություն/ շահագործում է իրականացվել (օրինակ՝ փորձել են վերջիններից բռնի ուժով կամ վախի մթնոլորտ ստեղծելով գումար կորզել):
6. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ ուսուցիչների նկատմամբ տնտեսական բռնություն/ շահագործում է իրականացվել (օրինակ, փորձել են վերջիններից բռնի ուժով կամ վախի մթնոլորտ ստեղծելով գումար կորզել):
7. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների նկատմամբ սեռական բռնություն է իրականացվել:
8. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների իրերը գողացել են կամ միտումնավոր վնասել:
9. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ ձեր իրերը գողացել են կամ միտումնավոր վնասել:
10. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողներին սպառնացել են:
11. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ ձեզ սպառնացել են:
12. Արդյո՞ք սովորողներին բացատրվում է, թե ինչպես պետք է կարգավորել միմյանց միջև ծագած վեճերը:
13. Արդյո՞ք աշակերտները հարգանքով են վերաբերվում դպրոցի բոլոր աշխատակիցներին՝ անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից:
14. Արդյո՞ք զայրույթի և հիասթափության դեպքում շարունակում եք հարգանքով խոսել սովորողների հետ:
15. Արդյո՞ք բոլոր աշխատակիցների ներկայությունը հավասարապես ողջունելի է դպրոցի ողջ համակազմով կազմակերպվող սոցիալական միջոցառումներին:
16. Արդյո՞ք բոլոր սովորողների ներկայությունը հավասարապես ողջունելի է դասարանի ողջ համակազմով կազմակերպվող սոցիալական միջոցառումներին:
17. Արդյո՞ք աշխատակիցները կարողանում են ազատ բարձրաձայնել հանդիպումների ժամանակ ծագած իրենց անհամաձայնությունների մասին:
18. Արդյո՞ք դպրոցում կան անտեսված, օտարացած սովորողներ, որոնց հետ չեն շփվում:
19. Արդյո՞ք դպրոցում կան անտեսված, օտարացած ուսուցիչներ, որոնց հետ չեն շփվում:
20. Արդյո՞ք սովորողները հաճույքով են հաճախում դպրոց:

21. Արդյո՞ք դուք հաճույքով եք գնում աշխատանքի:
22. Արդյո՞ք հաճախ են դպրոցում լինում միմյանցից բամբասանքի, զրպարտության դեպքեր (սովորողների/ ուսուցչական անձնակազմի միջև):
23. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:
24. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները և ծնողները համագործակցում են միմյանց հետ:
25. Արդյո՞ք աշխատակազմի անդամները հարգանքով են վերաբերվում միմյանց՝ անկախ զբաղեցրած պաշտոնից:
26. Արդյո՞ք ձեր իրավունքները դպրոցում անտեսվում են:
27. Արդյո՞ք սովորողների իրավունքները դպրոցում անտեսվում են:
28. Արդյո՞ք սովորողները պաշտպանում են նրանց, ում հանդեպ անարդարացի են վարվում դպրոցում:
29. Արդյո՞ք սովորողների ձեռքբերումները գնահատվում են անհատապես և ոչ թե այլ երեխաների հետ համեմատության մեջ:
30. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները խուսափում են թույլ առաջադիմություն ունեցող սովորողների նկատմամբ նվաստացուցիչ պիտակավորումներ օգտագործելուց:
31. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները պայքարում են այլ երեխաների կամ ուսուցիչների նկատմամբ բացասական տեսակետների և նվաստացուցիչ պիտակների օգտագործման դեմ:
32. Արդյո՞ք առանձնահատուկ ակտիվություն չդրսևորող երեխաների առաջադիմությունը խրախուսվում է այնքան, որքան առավել ակտիվ երեխաների ձեռքբերումները:
33. Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող երեխաները, դպրոցի աշխատակիցները և ծնողները նույնպիսի ընդունելության են արժանանում դպրոցում, ինչպես հաշմանդամություն չունեցող անձինք:
34. Արդյո՞ք սովորողները, ուսուցիչները, ծնողները սովորում են/ ձեռք են բերում բանակցային, վեճերի կարգավորման հմտություններ:
35. Արդյո՞ք երեխաներին արգելում են դանակներ և այլ զենք ունենալ իրենց մոտ:
36. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը ստանում է խորհրդատվություն՝ ինչպես կանխարգելել, հաղթահարել և արձագանքել բռնության դեպքերին:
37. Ձեր հանդեպ երբևէ կիրառվե՞լ է բռնության որևէ տեսակ դպրոցում:
38. Դպրոցում առկա՞ է դրական բարոյահոգեբանական մթնոլորտ:

Բաց հարցեր.

Դպրոցում երբևէ բախվե՞լ եք.

- ֆիզիկական բռնության դեպքերի,
- հոգեբանական բռնության դեպքերի,
- սեռական բռնության դեպքերի,
- տնտեսական բռնության դեպքերի,

Եթե այո, ե՞րբ և ո՞ւմ նկատմամբ է դեպքը տեղի ունեցել:

**Դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտի կայունության որոշման և բռնության
նիսկի գնահատման հարցարան ծնողների և/կամ երեխայի օրինական
ներկայացուցիչների համար**

1. Արդյո՞ք դպրոցում եղել են դեպքեր, երբ սովորողներին վնասվածք են պատճառել:
2. Արդյո՞ք դպրոցում եղել են դեպքեր, երբ ուսուցիչներից որևէ մեկին վնասվածք են պատճառել:
3. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների նկատմամբ վերբալ բռնություն է կիրառվել՝ ծաղրանք, անվանարկում, վիրավորական խոսքեր և այլն:
4. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ ուսուցչի նկատմամբ վերբալ բռնություն է կիրառվել՝ ծաղրանք, անվանարկում, վիրավորական խոսքեր և այլն:
5. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների նկատմամբ տնտեսական բռնություն/ շահագործում է իրականացվել (օրինակ, փորձել են վերջիններից բռնի ուժով կամ վախի մթնոլորտ ստեղծելով գումար կորզել):
6. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ ուսուցիչներ նկատմամբ տնտեսական բռնություն/ շահագործում է իրականացվել (օրինակ, փորձել են վերջիններից բռնի ուժով կամ վախի մթնոլորտ ստեղծելով գումար կորզել):
7. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների նկատմամբ սեռական բռնություն է իրականացվել:
8. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողներին սպառնացել են:
9. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ ուսուցիչներին սպառնացել են:
10. Արդյո՞ք եղել են դեպքեր, երբ սովորողների իրերը գողացել են կամ միտումնավոր վնասել:
11. Արդյո՞ք երեխաներին բացատրվում է, թե ինչպես պետք է կարգավորել միմյանց միջև ծագած վեճերը:
12. Արդյո՞ք երեխաները հարգանքով են վերաբերվում դպրոցի բոլոր աշխատակիցներին՝ անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից:
13. Արդյո՞ք զայրույթի և հիասթափության դեպքում դպրոցի աշխատակիցները շարունակում են հարգանքով խոսել սովորողների հետ:
14. Արդյո՞ք զայրույթի և հիասթափության դեպքում շարունակում եք հարգանքով խոսել ուսուցիչների հետ:
15. Արդյո՞ք դպրոցում կան անտեսված, օտարացած սովորողներ, որոնց հետ չեն շփվում:
16. Արդյո՞ք դպրոցում կան անտեսված, օտարացած ուսուցիչներ, որոնց հետ չեն շփվում:
17. Արդյո՞ք բոլոր սովորողների ներկայությունը հավասարապես ողջունելի է դասարանի ողջ համակազմով կազմակերպվող սոցիալական միջոցառումներին:
18. Արդյո՞ք երեխան հաճույքով է գնում դպրոց:

19. Արդյո՞ք հաճախ են դպրոցում լինում միմյանցից բամբասանքի, զրպարտության դեպքեր (սովորողների/ ուսուցչական անձնակազմի միջև):
20. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները և ծնողները համագործակցում են միմյանց հետ:
21. Արդյո՞ք ձեր իրավունքները դպրոցում անտեսվում են:
22. Արդյո՞ք սովորողների իրավունքները դպրոցում անտեսվում են:
23. Արդյո՞ք սովորողները պաշտպանում են նրանց, ում հանդեպ անարդարացի են վարվում դպրոցում:
24. Արդյո՞ք սովորողների ձեռքբերումները գնահատվում են անհատապես և ոչ թե այլ երեխաների հետ համեմատության մեջ:
25. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները խուսափում են թույլ առաջադիմություն ունեցող սովորողների նկատմամբ նվաստացուցիչ պիտակավորումներ օգտագործելուց:
26. Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները պայքարում են այլ երեխաների կամ ուսուցիչների նկատմամբ բացասական տեսակետների և նվաստացուցիչ պիտակների օգտագործման դեմ:
27. Արդյո՞ք առանձնահատուկ ակտիվություն չդրսևորող երեխաների առաջադիմությունը խրախուսվում է այնքան, որքան առավել ակտիվ երեխաների ձեռքբերումները:
28. Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող երեխաները, դպրոցի աշխատակիցները և ծնողները նույնպիսի ընդունելության են արժանանում դպրոցում, ինչպես հաշմանդամություն չունեցող անձինք:
29. Արդյո՞ք սովորողները, ուսուցիչները, ծնողները սովորում են/ ձեռք են բերում բանակցային, վեճերի կարգավորման հմտություններ:
30. Արդյո՞ք երեխաներին արգելում են դանակներ և այլ զենք ունենալ իրենց մոտ:
31. Արդյո՞ք դպրոցի ծնողական կազմը ստանում է խորհրդատվություն ինչպես կանխարգելել, հաղթահարել և արձագանքել բռնության դեպքերին:
32. Դպրոցում առկա՞ է դրական բարոյահոգեբանական մթնոլորտ:

Բաց հարցեր

Դպրոցում երբևէ բախվե՞լ եք.

- ֆիզիկական բռնության դեպքերի,
- հոգեբանական բռնության դեպքերի,
- սեռական բռնության դեպքերի,
- տնտեսական բռնության դեպքերի,

Եթե այո, ե՞րբ և ո՞ւմ նկատմամբ է դեպքը տեղի ունեցել:

Նամակ սովորողների ծնողներին³⁴

Հարգելի ծնողներ

Մենք ուրախ ենք, որ Ձեր երեխաները սովորում են մեր դպրոցում: Ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել այն մասին, որ դպրոցում այսուհետ աշխատում է հոգեբան: Նա կիրականացնի բազմատեսակ աշխատանքներ՝ ուղղված դպրոցում Ձեր երեխայի ուսուցման առավել արդյունավետ կազմակերպմանը: Դրա համար մենք նախատեսում ենք.

1. պարբերական թեմատիկ հանդիպումներ ծնողների հետ,
2. խորհրդատվություն երեխայի վերաբերյալ Ձեզ հուզող հարցերի շուրջ,
3. Ձեր երեխայի ուսման, վարքի կամ այլ բնույթի հոգեբանական ժամանակավոր խնդիրների լուծմանն ուղղված անհատական խորհրդատվություն և այլն:

Մենք գտնում ենք, որ Ձեր կողմից ստացված առաջարկություններն օգտակար կլինեն մեր աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

1. Խնդրում ենք ծանոթանալ հնարավոր ծնողական հանդիպումների թեմաներին և նշան անել այն թեմաների առջև, որոնք առավել հետաքրքրեցին Ձեզ: Եթե այս ցուցակում չկա Ձեզ հուզող թեման, նշեք այն ներքևում:

Երեխայի ինչպիսի՞ վարքն է համարվում շեղում նորմայից.

- վնասակար սովորություններ,
- վարքային դժվարություններ. ագրեսիվություն, ինքնամփոփություն, հիպերակտիվություն, իմպուլսիվություն, հակասոցիալական վարք,
- հուզական ոլորտի խնդիրներ. վախեր, տագնապ, գերհուզականություն, ամաչկոտություն և այլն,
- շփման դժվարություններ,
- միայնակ ծնողներ, օգնություն ծնողին հաղթահարելու դժվարությունները,
- ծնողի կամ մտերիմ հարազատի կորուստ, բաժանում, հետևանքներն ու սթրեսը հաղթահարելու միջոցները,
- ինքնուրույնություն և կարգապահություն, ծնող-երեխա փոխհարաբերությունների դժվարությունները,
- ուսման դժվարություններ, զարգացման խնդիրներ,
- դեռահասության հետ կապված խնդիրներ, օգնություն ծնողներին հաղթահարելու ճգնաժամը,
- _____

2. Հոգեբանական ինչպիսի՞ օգնություն կցանկանայիք ստանալ առհասարակ և ծնողական հանդիպումների ժամանակ:

³⁴ Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, էջ 49:

3. Նշե՛ք դպրոց այցելելու համար շաբաթվա՝ Ձեզ հարմար օրերն ու ժամերը:

4. Նշե՛ք երեխայի դասարանն ու անուն-ազգանունը:

5. Նշե՛ք Ձեր անունն ու հեռախոսահամարը:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Թիվ ____ դպրոցի հոգեբան (անուն ազգանուն)՝ _____:

Սոցիոմետրիկ հարցում

Դասարանի սոցիալ հոգեբանական հետազոտման համար նպատակահարմար է օգտագործել Սոցիոմետրիայի³⁵ մեթոդը, որն առաջարկել է Ջակոբ Լևի Մորենոն: Այն նախատեսված է փոքր խմբերում միջանձնային հուզական կապերի՝ համակրանքի կամ հակակրանքի դրսևորումներն ուսումնասիրելու համար: Այս մեթոդով կարելի է ուսումնասիրել.

1. խմբի համախմբվածությունը,
2. խմբի անդամների կարգավիճակը (լիդեր, մերժված),
3. բացահայտել խմբի ներսում եղած ենթախմբերն՝ իրենց լիդերներով,
4. Հարցաթերթիկի հարցերը կազմվում են խմբի անդամների հուզական ընտրության համար/ խմբի համախմբվածությունը,
5. խմբի անդամների կարգավիճակը (լիդեր, մերժված),
6. բացահայտել խմբի ներսում եղած ենթախմբերն իրենց լիդերներով:

Հարցաթերթիկի հարցերը կազմվում են խմբի անդամների հուզական ընտրության համար/փոխօգնություն, լիդերի ընտրություն, հարգանք, համակրանք/: Դրանք կարող են լինել մոտավորապես այսպիսի հարցեր.

- Ու՞մ կողքին կուզեիք նստել դասի ժամանակ:
- Ու՞մ կընտրեիք դասարանի ավագ:
- Ու՞մ կիրավիրեիք Ձեր ծննդյան օրվա հանդիսությանը:
- Դասարանցիներից ո՞ւմ կդիմեիք դասերը պատրաստելու հարցում օգնելու համար:
- Ո՞ւմ կվստահեիք Ձեր գաղտնիքը:
- Ո՞ւմ կվերցնեիք ինտելեկտուալ և հումորային խաղերի Ձեր խմբում (ոչ սպորտային զբաղմունքներ):
- Ձեր դասարանում կա՞ն աշակերտներ, ում օգնություն է հարկավոր: Ո՞ւմ:

Հարցաթերթիկի լրացման քարտ

Ո՞վ է ընտրում	Ու՞մ է ընտրում							Ընդամենը		Ընտրությունների (գումարը)
	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	+	-	
Ա	-	+	+	0	0	0	0	2	0	2
Բ	+	-	0	0	0	0	0	1	0	1
Գ	+	+	-	-	-	0	0	2	2	4
Դ	+	0	+	-	0	-	0	2	1	3
Ե	+	+	0	0	-	-	0	2	1	3
Զ	+	0	0	0	-	-	0	1	1	2
Է	0	0	0	0	0	0	-	0	0	0

³⁵ Փիլոյան Ս. Մ. Ընդհանուր հոգեբանություն Երևան, «Տիր», 2021թ., էջ 39:

Ընդամենը+	5	3	2	0	0	0	0	10		
Ընդամենը-	0	0	0	1	2	2	0		5	
Ընտրությունների (գումարը)	5	3	2	1	2	2	0			15

Այս օրինակում ընտրվողները 7-ն են (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է): Աղյուսակում արտահայտվել է ընտրվողների սոցիոմետրիական ստատուսը: Ըստ նախընտրությունների՝ առավելագույն միավոր ունի ընտրվողներից Ա-ն (5 միավոր): Կնշանակի՝ խմբի ընտրյալը (լիդերը...) նա է:

Բացահայտ մերժվածներ են Դ-ն (1 միավոր) և Է-ն (0 միավոր):

Սոցիոմետրիայի միջոցով կարելի է բացահայտել նաև հաղորդակցման պահանջմունքը: Վերջինս գնահատվում է նրանով, թե տվյալ մարդը խմբի քանի անդամի է ընտրել կամ մերժել: Բ-ն խմբում բոլորից շատ մարդկանց է գնահատել (7-ից 5-ին): Դա նշանակում է, որ նա հաղորդակցման մեծ պահանջմունք ունի:

Այս մեթոդով կարելի է ուսումնասիրել նաև խմբի համախմբվածությունը: Եթե խմբում շատերն են ստացել դրական նիշեր, խումբը համախմբված է: Տվյալ խմբում բոլոր գնահատականներից (15) 10-ը դրական են, ուստի խումբը համախմբված է:

Սոցիոմետրիկ մեթոդով կարելի է ուսումնասիրել նաև խմբում կոնֆլիկտների, խմբավորումների արտահայտվածությունը: Այն կարող է կիրառվել խաղի ընթացքում, գրավոր կամ բանավոր հարցման միջոցով: Սովորաբար գրավոր հարցման արդյունքներն առավել օբյեկտիվ են լինում:

Դասարանում առկա խնդիրներ³⁶
(Հարցաթերթիկ դասղեկի համար)

Դաստիարակ/դասղեկ _____

Դասարան _____

Աշակերտների հետ

Կոնֆլիկտներ աշակերտների միջև _____

Կարգ ու կանոնի խախտումներ _____

Կոնֆլիկտներ ուսուցիչների հետ _____

Ուսման դժվարություններ _____

Անհանդուրժողականություն _____

Ընկերասիրության բացակայություն _____

Այլ _____

Ծնողների հետ

Ի՞նչը կնպաստի տվյալ խնդիրների լուծմանը, ինչի՞ կարիք եք զգում:

Խնդրում ենք խնդիրները նկարագրել մանրամասն, հասկանալի ձևով աշակերտներին և ծնողներին անվանական նշելով:

Դաստիարակ/դասղեկ _____

Ամսաթիվ _____

³⁶ Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, էջ 98:

Հարցաթերթիկ 1-ին դասարան ընդունվող երեխաների ծնողների համար³⁷

Հարգելի՛ ծնող, Ձեր երեխան շուտով կդառնա առաջին դասարանցի: Դպրոցական ուղին կարճ չի լինելու: Այդ ուղին առավել հեշտ և երեխայի համար մատչելի դարձնելու համար մեզ անհրաժեշտ են Ձեր երեխայի մասին որոշակի տվյալներ: Նախապես ցանկանում ենք տեղեկացնել, որ հարցաթերթիկի միջոցով ստացված տվյալները հրապարակման ենթակա չեն: Անհրաժեշտության դեպքում այս տվյալներից կօգտվեն միայն Ձեր թույլտվությամբ: Դրանք մեզ կօգնեն ուսումնական գործընթացում երեխայի հետ առավել նուրբ և ճիշտ հարաբերվել: Կանխավ շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար:

1. Երեխայի Ա.Ա.Հ. _____
2. Ծննդյան օր, տարեթիվ _____
3. Ընտանիքի կազմը _____
4. Հայր /Ա.Ա./ _____
Տարիքը _____ կրթությունը _____ պաշտոնը _____
5. Մայր /Ա.Ա./ _____
Տարիքը՝ _____ կրթությունը՝ _____ պաշտոնը՝ _____
6. Ընտանիքում որերո՞րդ երեխան է: _____
7. Հայրը ունի՞ վնասակար սովորություններ: _____ այո _____ ոչ

8. Մայրը ունի՞ վնասակար սովորություններ: _____ այո _____ ոչ

9. Կա՞ն ընտանիքում ծանր հիվանդությամբ տառապող մարդիկ: _____ այո
_____ ոչ

10. Եթե երեխան ապրում է խնամակալների հետ, ապա պատասխանեք երեխայի ծնողներին վերաբերող հարցերին:

11. Ծնողները ամուսնալուծվա՞ծ են: _____ այո _____ ոչ
ա/ Քանի՞ տարեկան էր երեխան ծնողների ամուսնալուծության ժամանակ:

³⁷ Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, էջ 69: Այս հարցաթերթիկը, որոշ փոփոխություններով, կարող է օգտագործվել նաև ավագ դպրոց ընդունվող կամ ցանկացած տարիքում դպրոց նոր ընդունվող սովորողի համար:

բ/ Ինչպե՞ս վերաբերվեց: _____

գ/ Երեխան պահո՞ւմ է կապը իր հետ չապրող ծնողի հետ: Ինչպե՞ս, ի՞նչ հաճախականությամբ: _____

12. Երեխայի ծնողներից մեկը կամ երկուսը մահացե՞լ են: _____ այո _____ ոչ
ա/ Քանի՞ տարեկան էր երեխան: _____

բ/ Ինչպե՞ս վերաբերվեց: _____

գ/ Երեխան ո՞ւմ հետ է ապրում հիմա: _____

13. Ընտանիքի բնակարանային պայմանները՝
_____ լավ _____ բավարար _____ անբավարար

14. Ընտանիքի նյութական վիճակը՝
_____ լավ _____ բավարար _____ անբավարար

15. Երեխայի մանկությանը վերաբերող նշանակալի իրողություններ՝

(վիրահատություն, դժբախտ պատահար, երկար հոսպիտալացում, այլ)

16. Ուսումնական հմտություններ՝
ա/ խոսքի խնդիրներ _____ ունի _____ չունի

բ/ դպրոց գնալու ցանկություն _____ ունի _____ չունի

գ/ հաշվելու, կարդալու նախնական հմտություններ _____ ունի _____ չունի

17. Ինչպե՞ս եք պատժում երեխային: _____

18. Ինչպե՞ս եք խրախուսում երեխային: _____

19. Երեխայի վարքը տանը՝ _____

20. Վախեր ունի՞: Ինչպիսի՞: _____

21. Ինչո՞վ է սիրում զբաղվել: _____

22. Մեծահասակների հետ շփման առանձնահատկությունները՝ _____

23. Հասակակիցների հետ շփման առանձնահատկությունները՝ _____

24. Ձեր երեխայի ուժեղ կողմերը՝ _____

25. Ձեր երեխայի թույլ կողմերը՝ _____

26. Երեխայի հանդեպ դաժան վերաբերմունք՝ _____այո _____ոչ
ա/ Ֆիզիկական պատիժ _____

բ/ Երեխային առանց խնամքի թողնելը _____

գ/ Վիրավորանքներ _____

դ/ Այլ կարգի դաժանություն _____

27. Այլ՝ _____

Լրացրեց՝ _____ ստորագրություն _____

Ուսուցիչ՝ _____ ստորագրություն _____

Ամսաթիվ _____

Սոցիալական հայտ հոգեբանին (1)³⁸

_____ դասարանում սովորող Ա.Ա. _____ ի հետ աշխատող ուսուցչի, հատուկ կամ սոցիալական մանկավարժի համար

1. Սովորողի հիմնական դժվարությունները՝

- առաջադիմության և ուսումնական մոտիվացիայի բացակայություն
- կոնֆլիկտներ դասարանցիների հետ
- մեկուսացում, շփման դժվարություններ
- տրամադրության կայուն անկում
- վտանգավոր մտքեր
- կոպտություն
- հալածանք ընկերների նկատմամբ
- հալածանքի կամ բռնության զոհ
- անհարգելի բացակայություններ կամ անկարգապահություն դասերի ժամանակ
- սեքսուալ վարքագիծ
- վնասակար նյութերի օգտագործում

2. Կոնկրետ փաստեր՝ _____

3. Սովորողի բնութագրիչներ՝

4. Դրական որակներ՝ _____

5. Դասարանում երեխայի դիրքը՝

6. Ինչպիսի՞ օգնություն կցանկանայիք ստանալ հոգեբանից: _____

Անուն, ազգանուն՝ _____

Դիմել է « _____ », « _____ »
 (ամսաթիվ) (ստորագրություն)

³⁸ Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, էջ 99:

Սոցիալական հայտ հոգեբանին (2)³⁹

_____ դասարանում սովորող (Ա.Ա.) _____ ի
Ծնող (Ա.Ա.Հ.) _____

1. Վարքի, հուզական ոլորտի և շփման հիմնական դժվարությունները՝

- առաջադիմության բացակայություն
- վախեր, տագնապ
- կայուն վատ տրամադրություն
- վտանգավոր մտքեր
- վտանգավոր վարքագիծ
- վնասակար նյութերի օգտագործում
- խնդիրներ ուսուցիչների հետ
- անհարգելի բացակայություններ
- անկարգապահություն դասերի ժամանակ
- կոպտություն, կռիվներ, ագրեսիա
- համակարգչային կախվածություն
- բռնության կամ հալածանքի զոհ
- սեքսուալ վարքագիծ

2. Հարաբերություններն ընտանիքում և հասակակիցների հետ՝

3. Դրական որակները, ուժեղ կողմերը՝

4. Ինչպիսի՞ օգնություն կցանկանայիք ստանալ հոգեբանից:

Անուն, ազգանուն՝ _____

Դիմել է « _____ », (ամսաթիվ)

« _____ » (ստորագրություն)

³⁹ Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, էջ 100:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, ՀՕ-35-Ն:
2. Ադամյան Հ. Ա., Խուդոյան Ա. Ս. (2024). Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգեր. ՀՄԿ, Լիբերալ քաղաքականության ինստիտուտ ՀԿ, Երևան, 39 էջ:
3. Ադամյան Հ. Ա., Խուդոյան Ա. Ս. (2024). Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես բուլինգի կանխարգելման և հաղթահարման գործոն: Ձեռնարկ մանկավարժների և հոգեբանների համար, Երևան, 97 էջ:
4. Ալեքսանյան, Ա. (2011). Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, Երևան, Անտարես Մեդիա հոլդինգ, 111 էջ:
5. Ավագյան Ա. Մ. (2023). Ավագաթերապիա: Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Տիր» հրատարակչություն, Երևան, 194 էջ:
6. Արզումանյան Ա., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ. (2002). Կիրառական հոգեբանության պրակտիկում, «Զանգակ 95», Երևան, էջ 391:
7. Խանամիրյան Ի. (2016) Մանկական հոգեթերապիա: Ուսումնական ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 156 էջ:
8. Կարապետյան Վ. (2010). Հոգեբանական ծառայությունը կրթական համակարգում: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երևան, «Զանգակ-97», 456 էջ:
9. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրաման N10-Ն Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174675> 18.12.2024:
10. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին N 370-Ն հրաման:
11. Հոգեախտորոշիչ թեստերի և մեթոդիկաների ժողովածու (2018). Կազմողներ՝ Ազիզյան Ն., Հովհաննիսյան Օ., «Տիր» հրատարակչություն, Երևան, էջ 413:
12. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում: (2023). Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Ա. Հ. Սվաջյան և ուրիշ: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, - 147 էջ:
13. Փիլոսոփայության Ս. Մ.: Ընդհանուր հոգեբանություն, Երևան, «Տիր», 2021թ., 598 էջ:
14. Абрамова Г.С. Практическая психология. М., 1997.
15. Бородин М. И. (2020). Внедрение в школах штатных должностей специалистов (педагог-психолог, социальный педагог, логопед, сурдопедагог, олигофренопедагог, тифлопедагог), Методические рекомендации для руководителей

- общеобразовательных организаций, Волгоград, 148 стр.
16. Бремс К. (2002). Полное руководство по детской психотерапии, М., ЭКСМО–Пресс, 640 стр.
 17. Горбашова А. В. (2014). Психологическое просвещение родителей, Материалы VI Международной студенческой научной конференции «Студенческий научный форум».
 18. Джинотт Х. Дж. (2005). Групповая психотерапия с детьми. Теория и практика игровой терапии., Москва: Апрель-Пресс, 272с.
 19. Дубровина И. В.(2022), Психолого-педагогическое взаимодействие участников образовательного процесса в 2 ч. Часть 2 : учебник для вузов. -5-е изд., испр. и доп. - Москва: Издательство Юрайт, 2022. -280 с.
 20. Конаныхина Е. Ю. (2016) Волшебство в песочнице. Песочная терапия в работе с детьми. _М.: Генезис, С.12
 21. Кочюнас Р. (2008). Основы психологического консультирования. М.: Академический проект, - 240 с.
 22. Лэндрет Г. (1998) Игровая терапия: искусство отношений, М., Институт практической психологии, 368 стр.
 23. О' Коннор(2002), Теория и практика игровой терапии, Питер, 2002, 464 стр.
 24. Овчарова Р.В. (2003). Практическая психология образования: учеб. пособие. – Москва: Академия, – 448 с.
 25. Позднякова А. В. (2016). Формы работы психолога с родителями учащихся, сборник статей МБОУ лицея №6, с.1-4 <http://mucro.goruno-dubna.ru/wp-content/uploads/2016/10/Statya-Formy-raboty-shkolnogo-psihologa-s-roditelyami-uchashhihsya.pdf> 18.12.2024.
 26. Практическая психология образования. (2004). Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, — 592 с.
 27. Ратникова Е. В. (2021) Путь героя в песочной терапии. Психологические технологии. М.: Академический проект, 291 с.
 28. Савинков С. Н. (2020). Психологическая служба в образовании: учебное пособие для вузов / С. Н. Савинков, Москва: Издательство Юрайт, 169 с.
 29. Смид Р. (2000). Групповая работа с детьми и подростками / Пер.с англ. 2-е изд., исправленное, Москва. Генезис, 272с.
 30. Хухлаева О. В. (2019). Психологическая служба в образовании. Школьный психолог. Учебное пособие 1-е изд, 353 с.
 31. Хухлаева О. В. (2022). Психологическое консультирование и психологическая коррекция: учебник и практикум для вузов, Москва: Издательство Юрайт, 423с.
 32. Axline V., (1947). Play therapy. New York: Ballantine Books.
 33. Kenneth W. Merrell, Ruth A. Ervin and Gretchen Gimpel Peacock (2012). School Psychology for the 21st Century: Foundations and Practices. New York, The Guilford Press, 2nd ed., 380 p.
 34. Soklowska Ewa, Katra Grazyna A New Approach to the Professional Role of the School

Psychologist The John Paul II Catholic University of Lublin, Poland Institute of Psychology
University of Warsaw, Poland Faculty of Psychology
<https://www.researchgate.net/publication/339414353> [A new approach to the professional role of the school psychologist](#) 12.01.2025.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵՔԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳԻՐ**

**Ձեռնարկ հանրակրթական ուսումնական հաստատության
հոգեբանների համար**